

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ
ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՆԱՅԻՏ ՔԱՐՏԱՇՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ
ԽՈՍԱԿՑԱԿԱՆ
ԼԵԶՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
2014

ՀՏԴ 800.855:809.198.1
ԳՄԴ 81.2-7+81.2Հ
Ղ 320

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկնածու,
դոցենտ **Ն. Ժ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Ղ 320 Ղամոյան Լուսինե
Երևանի խոսակցական լեզուն / Լ. Ղամոյան, Մ. Սարգսյան,
Ա. Քարտաշյան. - Եր.: «Մուսետիկ» հրատարակչություն, 2014.- 120էջ

Աշխատանքում համաժամանակյա մեթոդով ուսումնասիրվում է Երևանի խոսակցական լեզուն, վերլուծվում են Երևանի առօրյա խոսքին հատուկ հնչյունական, բառապաշարային, քերականական, մասամբ նաև ոճական մի շարք առանձնահատկություններ, ինչպես նաև լեզվական նորմերի խախտումներ, գրական լեզվից շեղումներ և ոչ կանոնական դրսևորումներ:

Աշխատանքը կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, սովորողների, այնպես էլ հայոց լեզվի գործառույթյամբ ու զարգացմամբ, նրա անաղարտ պահպանությամբ շահագրգռված մարդկանց համար:

ՀՏԴ 800.855:809.198.1
ԳՄԴ 81.2-7+81.2Հ

© Ղամոյան Լուսինե, © Մերի Սարգսյան, © Անահիտ Քարտաշյան 2014

ISBN 978-9939-9010-8-4

Դետագրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳԴԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1	10
ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴԻ ԼԵԶՎԱՎԻՃԱԿԸ	
ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ	10
ԳԼՈՒԽ 2	35
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ	
ՀՆԶՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	35
ԳԼՈՒԽ 3	41
ԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ	41
ԳԼՈՒԽ 4	70
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ	70
ԳԼՈՒԽ 5	92
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ	
ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	92
ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ	97
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	98
ՀԱՎԵԼՎԱԾ 1	100
ՀԱՎԵԼՎԱԾ 2	104
ՀԱՎԵԼՎԱԾ 3	114
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	116

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզու և խոսք: Լեզուն, լինելով հասարակական կարևոր իրողություն, ունի հաղորդակցական, արտահայտման, ճանաչողական գործառույթներ:

Սայրենի լեզվով ճիշտ խոսել ու գրել սովորելը (մաս սովորեցնելը) և ազգային պարտականությունն է, և՛ կյանքի հրամայական: Միտքը ճիշտ և զեղեցիկ արտահայտելու համար խոսքը պետք է կառուցել լեզվի ռճական ու քերականական կանոնների համաձայն, ինչն ամենքի կողմից ընդունված անվիճելի ճշմարտություն է:

«Յուրաքանչյուր լեզվի զարգացումն ամենից առաջ պայմանավորվում է այն փոփոխություններով, որոնք կատարվում են նրա գործառույթյան ոլորտում և կառուցվածքի մեջ: Այս երկու կողմերն էլ կարևոր են ու փոխկապակցված, իսկ դրանց փոխհարաբերությունները բազմաշերտ են ու տարատեսակ»¹:

Լեզուն և խոսքը հարաբերակից հասկացություններ են՝ իրարից տարբեր, բայց ոչ հակադիր: Լեզվի հասարակական դերի իրացումը կատարվում է անհատների միջոցով, այսինքն՝ ի տարբերություն լեզվի, որը խոսողական ունակությունների՝ նորմերի ընդհանրական համակարգ է տվյալ լեզվով խոսող հանրության յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ, խոսքը այդ համակարգի կոնկրետ, անհատական իրացումն է, լեզվի կենդանի գոյը, դրսևորվում է խոսքային գործունեության կամ խոսողության մասնավոր իրացումներով, խոսողական ակտերով: Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով, նրան համապատասխան²: Այն լեզվի հետ միասնության մեջ է: Խոսքը նյութական է, ֆիզիկական կողմ ունի, ընկալելի է զգայարաններով, իրականության համապատասխանության տեսանկյունով կարող է լինել ճիշտ կամ սխալ, միշտ իրացվում է որոշակի անհատի կողմից, դրսևորվում է անհատական տարբերացումներով: Անհատը իր խոսքի կառուցման մեջ նկատելի չափով անկախ է, անկաշկանդ, այստեղ որոշակի տեղ ունեն պատահականությունը, շեղումները, անկանոնությունը, անհատական փորձը, անհատի, հաղորդակցվողի հոգեֆիզիկական պայմանները և այլն: Մի խոսքով՝ լեզուն հասարակական երևույթ է, խոսքը՝ անհատական: Խոսքը կոնկրետ բովանդակային ամբողջություն է, որը բաղկացած է նախադասություններից, սա էլ՝ բառերից, բառերն էլ հնչյուններից:

Ըստ ծավալի զանազանում են *համառոտ խոսք* և *ընդարձակ խոսք*: Ըստ արտահայտման եղանակի խոսքը լինում է *գրավոր* կամ *բանավոր*, *արտաքին* կամ *ներքին*: *Արտաքին խոսքը* սովորական, հնչյունական-

¹ **Ն. Սարգսյան**, *Ֆայերենի գործառույթյան առանձնահատկությունները հետխորհրդային փուլում*, Երևանի Կ. Բրյուսովի անվ. պետ. լեզվաբանական համալսարանի «Լինգվա» հրատ., 2012, էջ 66:

² **Պետրոսյան**, *Ֆայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 280:

արտասանական իրացում ունեցող խոսքն է: *Ներքին խոսքը* հնչյունական-արտասանական դրսևորում չունի, ուղղված չէ ունկնդրին:

Գրական լեզուն տվյալ ժողովրդի գրավոր, մշակված լեզուն է: Անառարկելի ճշմարտություն է, որ գրավոր լեզվի շնորհիվ մարդը հաղորդակից է դառնում իրենից առաջ եղած մարդկության պատմությանն ու մշակույթին. միաժամանակ լեզվի միջոցով է մարդկային հասարակությունն իր կուտակած գիտելիքները, իր ստեղծած մշակույթը հաղորդում գալիք սերունդներին:

Գրական լեզուն համեմատաբար պահպանողական է. չնայած ենթարկվում է որոշ փոփոխությունների, բայց, որպես նորմավորված լեզու, ավելի կայուն է, բոլորի կողմից ընդունելի, ընտիր և օրինակելի: Գրական լեզվի օրինաչափությունները ամրակայվում և միօրինակացվում են քերականությամբ, բառարաններով: Սյուս կողմից՝ բարբառները լեզվի զարգացման որոշ փուլերում ազդում են գրական լեզվի վրա: Բարբառախոսները, օգտագործելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու, նրա մեջ մտցնում են մայրենի բարբառի բառեր, դարձվածներ, բառերի նոր իմաստներ, քերականական ձևեր, որոնք գրական լեզվի միջոցով ընդհանրանում են: Գրական լեզուն սովորաբար ազդվում է նաև հին գրական լեզվից, ինչպես նաև օտար լեզուներից: Մեծ է ժամանակակից գրական լեզվի հասարակական դերը, բազմապիսի են նրա գործառնությունները (բանավոր և գրավոր հաղորդակցման միջոց, գիտական ու գեղարվեստական գրականության լեզու, մանուլի, ռադիոյի, թատրոնի, հեռուստատեսության, միջնակարգ ու բարձրագույն դպրոցների լեզու, պետական, պաշտամունքային գործառնություններ և այլն):

Հայոց լեզուն աշխարհի հնագույն, հարուստ ու զարգացած լեզուներից է և ունի հազարամյակների պատմություն: Դարերի ընթացքում նրանով ստեղծվել և ստեղծվում են մշակութային ու գիտական արժեքներ, որոնք կարևոր են ոչ միայն հայ ժողովրդի, այլև համաշխարհային պատմամշակութային ժառանգության համար:

Հիմնականում պահպանելով հնդեվրոպական նախալեզվի բառապաշարն ու քերականական կառուցվածքը՝ հայոց լեզուն դարերի ընթացքում ենթարկվել է որակական զգալի փոփոխությունների, համալրվելով նորանոր բառերով ու կանոններով՝ ստեղծել է ինքնատիպ ու հարուստ մշակույթ:

Հայոց լեզվի՝ տարածված և բոլորի կողմից ընդունելի պատմական և լեզվական փաստերի հնարավորինս տրամաբանական համադրումով կատարված դասակարգումը Գ. Ջահուկյանին է, ըստ որի՝ բազմահազարամյա հայոց լեզվի համար առանձնացվում են հետևյալ փուլերը³.

1. **Վաղնջական շրջան** (վաղնջահայերեն)՝ մ.թ.ա. III հազարամյակից մինչև մ.թ.ա. XIII դ.:

2. **Հնագույն շրջան** (հնագույն հայերեն) մ.թ.ա. XII դարից մինչև մ.թ. IV դարը:

³ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան*, Ե., 1987, էջ 25-26:

3. **Յին շրջան** (հին հայերեն)՝ V-XI դդ. այս շրջանի գրական լեզուն հայտնի է գրաբար անունով, որ ձևավորվել է Տուրուբերանի և Բարձր Յայքի ու Այրարատի խոսվածքների հիման վրա: Այս շրջանի համար Ձահուկյանն առանձնացնում է երեք շրջան.

- վաղ հին կամ դասական գրաբարի՝ V դ..
- ուշ հին կամ ետ-դասական գրաբարի՝ VI-VII դդ..
- նախամիջին՝ VIII-XI դդ.:

4. **Միջին շրջան**՝ XII-XVI դդ.. այս շրջանում հանդես է գալիս միջին գրական հայերենը՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին գործառական որոշ տարբերակմամբ, որպես գրական լեզու, գործում է նաև գրաբարը: Այս շրջանի համար առանձնացվում է երկու ենթաշրջան.

- վաղ միջին կամ կիլիկյան նորմավորման՝ XII-XIV դդ..
- ուշ միջին կամ աշխարհաբարացման՝ XV-XVI դդ..

5. **Նոր կամ աշխարհաբարի շրջան**՝ XVII-XX դդ.. այս շրջանում հանդես է գալիս նոր գրական հայերենը (աշխարհաբարը)՝ խոսակցական լեզվի հիման վրա, բայց նրա կողքին առաջին ենթաշրջանում դեռևս գործում է գրաբարը: Նոր շրջանի համար առանձնացվում է երեք ենթաշրջան.

- վաղ աշխարհաբարի՝ XVII դ. սկզբներից մինչև XIX դ. կեսը.
- ուշ կամ երկճյուղ աշխարհաբարի՝ XIX դ. կեսից մինչև 1920 թ..
- ժամանակակից՝ 1920 թ. մինչև մեր օրերը:

Ժամանակակից հայերեն գրական լեզուն ունի դրսևորման երկու ձև՝ *գրավոր* և *բանավոր*: Գրական լեզվի գրավոր տարբերակը բանավորից տարբերվում է շարահյուսական կառուցվածքի բարդությամբ, գրավոր խոսքում համեմատաբար մեծ քանակությամբ վերացական բառերի, ինչպես նաև տերմինաբանական բառապաշարի առկայությամբ և գործածությամբ:

Անշուշտ, պետք է տարբերակել գրական լեզվի բանավոր ձևը առօրյա խոսակցական լեզվից: Այս երկու ըմբռնումների միջև էական տարբերություն կա. երկուսն էլ բնորոշվում են ինչպես բառային կազմի և քերականական համակարգի, այնպես էլ հնչյունաբանական առանձնահատկություններով:

Այսպիսով՝ խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման հիմնական միջոցն է, որը թեև հարաբերակցվում է գրականին, այնուամենայնիվ, հեռանում է նրանից որոշ հատկանիշներով:

Գրավոր խոսքն ավելի մշակված է, նախապատրաստված, չունի բանավոր խոսքի հնչերանգային հագեցվածությունը և ձգտում է ավելի փաստացիության, ճշգրտության: Այն կառուցվում է գրական լեզվի կանոններին և օրինաչափություններին համապատասխան: Գրավոր խոսքն իրացվում է հատուկ մշակված գրային համակարգերի միջոցով: Գրական լեզվի նորմերի տեսակետից այն սովորաբար լինում է ավելի կատարյալ, քան բանավոր խոսքը:

Բանավոր խոսքը լեզվի բնական արտահայտությունն է, որն իրացվում է արտասանական գործարանների շնորհիվ և լսելի է: Բանավոր խոսքն աչքի է ընկնում իր անմիջականությամբ, կենդանությամբ, որը գրավոր խոսքի համեմատ անմշակ է, ավելի ենթակա վրիպումների, ավելի հարուստ հնչերանգի տվյալներով և ունի առողջանական հագեցվածություն: Բանավոր խոսքն անմիջապես ուղղված է ունկնդրին:

խոսակցական լեզուն ոչ պաշտոնական, բանավոր խոսքն է: Տարբերակում ենք Երևանի խոսակցական լեզվի երկու դրսևորում կամ գործառնություն՝ գրական խոսակցական և ժողովրդախոսակցական: Ժողովրդախոսակցական լեզուն գործածվում է ոչ պաշտոնական իրադրության մեջ (տանը, ընկերների հետ՝ սովորական, մտերմիկ խոսակցության ժամանակ, փողոցում և այլն), իսկ գրական խոսակցական տարբերակը գրեթե բոլորը (յուրաքանչյուրն իր իմացածի ու լեզվական հմտության չափով) գործածում են պաշտոնական իրադրությունների մեջ (ժողովներ, հիմնարկ-ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ, պաշտոնական հանդիպումներ և այլն)⁴:

Ընդհանուր ճանաչում է գտել այն տեսակետը, ըստ որի խոսակցական լեզվի ընտրությունը պայմանավորված է արտալեզվական երեք հիմնական գործոններով, որոնց առկայության պայմաններում հաղորդակցումը իրականցվում է խոսակցական լեզվով: Դրանք են՝ ա) հաղորդակցական ակտի անպատրաստությունը, բ) հաղորդակցական ակտի անկաշկանդությունը, ոչ պաշտոնական բնույթը, գ) խոսակիցների անմիջական մասնակցությունը հաղորդակցմանը⁵:

Խոսակցական լեզվի ուսումնասիրությունը և բնութագրումը ժամանակակից հայ լեզվաբանության կարևոր խնդիրներից է: Այն առաջին հերթին պայմանավորված է հայերեն գրավոր և խոսակցական լեզուների միջև եղած զգալի տարբերություններով⁶:

Հայ լեզվաբանական գիտության մեջ առօրյա խոսքը (խոսակցական լեզուն) ամենից քիչ ուսումնասիրված բնագավառներից է, քանի որ նախ՝ լեզվաբանների ուշադրության կենտրոնում հիմնականում գրական լեզուն ու նրա երևույթների հետազոտությունն է եղել, ապա՝ անհնարին է եղել խոսակցական լեզվի համակողմանի և ճշգրիտ բացատրություն առանց տեխնիկական մի շարք միջոցների ու սարքերի առկայության, և հետո՝ մինչև այժմ էլ դեռևս չկա գիտական միասնական տեսակետ լեզվում նրա տեղի ու դիրքի, ինչպես նաև սահմանման վերաբերյալ⁷:

Վերջին ժամանակներս լեզվաբանները ավելի հաճախ են սկսել զբաղվել տարբեր լեզուների բանավոր խոսքի ուսումնասիրությամբ:

Ժամանակակից հայոց գրական լեզուն (արևելահայ) այժմ արդեն բավականաչափ ուսումնասիրված է: Բավականին մեծ թվով աշխատանքներ կան նվիրված բառապաշարին, ձևաբանությանն ու շարահյուսությանը, սակայն, որքան էլ զարմանալի է, այս առատ գրականության մեջ քիչ են այն աշխատությունները, որոնք նվիրված են այն հայերենին, որով ներկայումս ամեն օր, ամեն ժամ խոսում են հայկական կրթություն ստացած կամ ստացող

⁴ Էդ. Աղայան, *Լեզվի գոյության տարբերակային ձևերը*, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, հ.2, էջ 69:

⁵ Ն. Սարգսյան, *Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկություններ*, Լեզվի և ոճի հարցեր, հ.10, Ե., 1987, էջ 232:

⁶ Թ. Ղարաբաղյան, *Ավանդակներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի, ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն*, Ե., 1981, էջ 5:

⁷ Ն. Սարգսյան, *Գշվ. աշխ.*, էջ 231:

տասնյակ հազարավոր մարդիկ տանը, փողոցում, դպրոցում, աշխատավայրում և այլուր:

Մինչդեռ շատ կարևոր է ուշադրություն դարձնել ամենագործածական հայերենի վրա, բացահայտել նրա յուրահատկությունները, պարզել նրա ու գրավոր լեզվի տարբերություններն ու փոխազդեցությունը, որոշել նաև բանավոր խոսքի արժանիքները, որոնք կարող են արդեն գրական իրողություններ համարվել, ինչպես և բացասական կողմերն ու արատները, որոնց դեմ պետք է պայքարել:

Լեզվական նյութի ընդգրկման տեսակետից առավել ամբողջական աշխատություն ունի *Յ. Ջաքարյանը*⁸: Նա հայերենի բոլոր մակարդակները (հնչյունաբանություն, բառակազմություն, ձևաբանություն, շարահյուսություն, բառապաշար) ներկայացրել է հատուկ ընտրված հատկանիշների ու լեզվական միավորների որոշակի թվով, որն էլ ամբողջական պատկերացում է տալիս լեզվական համակարգի բոլոր կողմերի վերաբերյալ: Հատկապես ուշադրությունը կենտրոնացված է հանրալեզվաբանական չափանիշներին, որոնք մեզ համար ևս եղել են անկյունաքարային (տարիք, սեռ, կրթություն, բարբառակիր լինել-չլինելը, անհատական առանձին հատկանիշներ և այլն):

Հենվելով այս աշխատանքի վրա և որդեգրելով որոշ էական մեթոդներ ու սկզբունքներ՝ աշխատանքը տարել ենք այն հունով, որ ավելի շատ երևա ոչ թե հեղինակի աշխատանքում արտացոլված երևան քաղաքի վիճակը 80-ական թվականներին, այլ դա եղել է մեզ համար եզր՝ հատկապես անդրադառնալու երևանի լեզվավիճակին հետանկախացման շրջանում: Լեզվի կանոնարկումը նկատի ունենալով և այդ երկու շրջանների լեզվավիճակը համեմատելով՝ ցավալի է նշել, որ այդ հարցում նկատվում է որոշակի նահանջ, մասնավորապես՝ ժարգոնային արտասանության շրջանակների ընդլայնում:

Հաճախակի է խոսվում հայոց լեզվի գործառության ոչ բավարար վիճակի մասին: Հասարակության (հատկապես ավագ սերնդի) կողմից խստորեն է դրվում մայրենի լեզվի անադարտության խնդիրը, որը դրական երևույթ է: Լեզվին տիրապետելու մակարդակը, խոսքի որակը, ինչ խոսք, մեծ չափով կախված են խոսողների կրթությունից, ընդհանուր զարգացումից:

Հայերենի արդի վիճակի մասին պատկերացում կարող է ունենալ յուրաքանչյուր մարդ, ով չփվում է հասարակության տարբեր շերտերի հետ: Յուրաքանչյուր օր հայերենում արձանագրվում են բազում շեղումներ, խախտումներ, տարբեր իրողություններ: Այսօր առաջ է եկել համապատասխան լեզվական մի շերտ՝ որոշակի բառապաշարով, ինքնատիպ արտահայտչական ոճերով, որն ունի տարբերակիչ նշանակություն հասարակական որոշակի խմբի պատկանելու իմաստով:

Խոսակցական լեզվի խնդիրը չափազանց բարդ ու դժվարին է և կարիք ունի հանգամանալից ուսումնասիրության: Սույն աշխատանքում հարցի տեսական նախնական մշակում ենք կատարել սահմանափակ քանակությամբ նյութի՝ հիմնականում ձեռքով արված գրառումների, հարցաթերթիկների, ձայնագրումների, մասամբ նաև՝ գրականությունից

⁸ *Յ. Ջաքարյան, Հայերենի հասարակական տարբերակումը երևանում, Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Ե., 1981, էջ 120-271:*

քաղված օրինակների օգտագործմամբ: Մեզ հետաքրքրողն այն է, թե ո՞րն է
Երևանում գործառող ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն,
գործառական ի՞նչ դեր ունի ներկա փուլում, ի՞նչ հարաբերությունների մեջ է
բարբառների, գրական լեզվի հետ և այլն: Այս բոլոր հարցերի
պարզաբանունը պահանջում է մեծ ջանքեր և մեծ աշխատանք:

ԳԼՈՒԽ 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴԻ ԼԵԶՎԱԿԻՃԱԿԸ

ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Լեզուն հասարակության հաղորդակցման հիմնական ու կարևորագույն միջոց է, որն անընդհատ զարգանում և փոփոխվում է՝ կախված հասարակական պայմաններից, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը: Լեզվի զարգացման մեջ հասարակական գործոնը վճռական դեր ունի. բուռն և բարձրամակարդակ հասարակական կյանքով ապրող ժողովրդի լեզուն էլ զարգացած է լինում:

Այս ամենը ավելի ցայտուն պատկերացնելու համար համառոտակի ներկայացնենք այն պայմանները, որոնց մեջ գործառույն է հայոց լեզուն:

Դեռևս 19-րդ դարի վերջում և 20-րդի սկզբում ցարական կառավարությունն ամեն ինչ անում էր, որպեսզի կաշկանդեր հայոց լեզվի զարգացումը: Ծանր վիճակում էին հայկական դպրոցներն ու պարբերական մամուլը, ուսուցումը տարվում էր հիմնականում ռուսաց լեզվով, առկա էին հայոց լեզվի գոյության հետևյալ ձևերը՝ բարբառներ, ժողովրդախոսակցական լեզու, նորմավորվող գրական աշխարհաբար, գրաբար, չկար դեռևս բոլորին հասկանալի ու մատչելի գրական լեզու⁹:

Արդի հայերենի հետխորհրդային շրջանի լեզվավիճակին, կառուցվածքային և գործառական զարգացման հարցերին, գրական և խոսակցական լեզուների փոխհարաբերություններին մեզանում հետևողականորեն անդրադարձել է Ն. Սարգսյանը: Նա նկատում է, որ անցած 2-2,5 տասնամյակների ընթացքում՝ հետխորհրդային փուլում, մեր հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում կատարված կտրուկ անցումը արժեք էր ավելացրել մեր լեզվավիճակի վրա¹⁰: Բռնագաղթի հետևանքով շատերը զրկվեցին գրական հայերենը կատարելապես տիրապետելու հնարավորությունից, ակտիվացան բարբառներն ու ռուսերեն բառերի փոխներթափանցումները, այնուհետև Հայաստանի անկախացումն ու Արցախի ազատագրումը, և հայերենը ձեռք բերեց պետական լեզվի կարգավիճակ՝ ձերբագատվելով իր գործառույթյան նկատմամբ մինչ այդ կիրառվող բոլոր սահմանափակումներից:

Այս ամենն իր անջնջելի հետևանքները թողեց հատկապես հայերենի բառային կազմի վրա. թեև սկսեցին հայերենի միջոցներով ստեղծվել նոր բառեր ու բառակապակցություններ, հասարակական-քաղաքական, գիտական ու մարզական նոր տերմիններ, սակայն միաժամանակ նկատվում են բացահայտ սխալ սկզբունքներ, լեզվական նորմերի կոպիտ խախտումներ, անթույլատրելի շեղումներ ու երևույթներ:

⁹ Ռ. Աղայան, *Յոկոտները և հայոց լեզուն, Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ*, Ե., 1979, էջ 1-15:

¹⁰ Ն. Սարգսյան, *Ազգ. աշխ.*, էջ 66-70:

Այսպես՝ արտասանության մեջ հաշվի չեն առնվում ուղղախոսական բազմաթիվ կանոններ, բառապաշարում անչափ շատ են անհարկի փոխառություններն ու օտարաբանությունները, բառագործածության սխալները, քերականական մակարդակում նույնպես անչափ շատ են ձևաբանական ու շարահյուսական ճիշտ կառույցներից շեղումները և այլն:

Անշուշտ այս ամենը ժամանակի ընթացքում կշտկվի, միայն թե մեր հասարակությունը պետք է փոխի իր անփույթ վերաբերմունքը մայրենի լեզվի նկատմամբ:

Ամեն լեզու ունի հասարակական տարբերակվածության միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրության համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել հասարակական տարբերակների համակարգը տարբեր վայրերում, լեզվի զարգացման տարբեր փուլերում, գրական, խոսակցական լեզուներում և այլն: Ինչպես նշում է **Ֆ. Ձաքարյանը**, կարևոր է առանձին քաղաքների լեզվի հասարակական տարբերակվածության համաժամանակյա բնութայունը, քանի որ քաղաքները լեզվի նկատմամբ ունեն բավականաչափ միասնական հասարակական վերաբերմունք: Չետևաբար լեզվի զարգացման գործում առաջատար դերը սովորաբար պատկանում է քաղաքներին: Որպես մշակութային և կրթական կենտրոններ՝ դրանք ամենից շուտ են արձագանքում լեզվական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին¹¹:

Երևանը աշխարհի խոշոր քաղաքների մեջ ամենամիատարր բնակչություն ունեցողներից մեկն է:

Եթե 1830-1977թթ. ընթացքում Երևանի բնակչությունը գնալով աճում էր¹², ապա հետխորհրդային շրջանից սկսած՝ Երևանի բնակչության կազմը տարեցտարի նվազում է: 1990-ական թվականներին սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով հազարավոր մարդիկ լքել են Երևանը, մեկնել արտասահման: 2013թ.-ի ապրիլի դրությամբ Երևանն ուներ 1.066. 3 հազար բնակիչ¹³:

Երևանցիների լեզուն բավականաչափ տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. հայերենից ու ռուսերենից բացի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ չեն գործառուում, մայրենի լեզուն հայերենն է, չկա քաղաքներին բնորոշ ընդգծված մասնագիտացում:

Քանի որ, ինչպես նշեցինք, լեզվին տիրապետելու աստիճանն ու խոսքի որակը ամենից առաջ կապված են խոսողների կրթությունից ու մշակութային ընդհանուր զարգացումից, հետևաբար կարևոր է իմանալ բնակչության կրթության մակարդակը, կրթական հաստատությունների, սովորողների, մանկավարժների, դասախոսների թիվը և այլն:

¹¹ **Ֆ. Ձաքարյան**, *Երևանի արդի լեզվավիճակը*, Չանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ, Ե., 1979, էջ 16-17:

¹² **Ֆ. Ձաքարյան**, *Ազգ. աշխ.*, էջ 19:

¹³ Տե՛ս http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_01.pdf:

Կրթության մակարդակը Երևանում: Երևանի կրթական հաստատությունները և դրանցում սովորողները: Դպրոցներ, քոլեջներ և ուսումնարաններ:

Կրթական ոլորտը¹⁴ Երևանում (Հայաստանում) ներկայացված է 2 տիպի ուսումնական հաստատություններով՝ հանրակրթական (նախադպրոցական հաստատություն և դպրոց) և մասնագիտական (նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն՝ քոլեջ, բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա և կոնսերվատորիա): Ասպիրանտական կրթությունը հասանելի է բուհերում, ինչպես նաև գիտական ինստիտուտներում: **Նախադպրոցական հաստատությունները** (տարվա ընթացքում 10 ամսից ոչ պակաս աշխատող) ապահովում են 1 տարեկանից մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, առողջարարությունը, դաստիարակությունը և ուսուցումը:

Հանրակրթական դպրոցներ են համարվում տարրական, հիմնական, ավագ և միջնակարգ ուսումնական հաստատությունները և վարժարանները, որոնք իրականացնում են հանրակրթական ծրագրեր:

Վարժարանները և ձեմարանները միջնակարգ հանրակրթական ուսումնական հաստատություններ են, որոնք իրականացնում են հիմնական և լրացուցիչ հանրակրթական ծրագրեր: Վարժարաններում նախատեսված է սովորողների խորացված մասնագիտացման կողմնորոշիչ ուսուցում:

Քոլեջները հաշվառված են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդհանուր թվում: Քոլեջներում մասնագետների պատրաստումն իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագրով, ինչպես նաև հանրակրթական և արհեստագործական կրթական ծրագրերով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները համալսարանները և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող այլ կրթական հաստատություններ են:

Բարձրագույն կրթությունն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսի ծրագրերով, պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով:

Ոչ պետական ուսումնական հաստատությունների (դպրոցներ, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատություններ) թվում հաշվառված են պետական արտոնագիր ունեցող մասնավոր ուսումնական հաստատությունները:

Այսպիսով՝ մասնագիտական կրթական ծրագրերը սահմանում են որոշակի մակարդակի և ուղղվածության կրթության բովանդակությունը,

¹⁴ Տե՛ս <http://www.armstat.am/am/?nid=45>:

անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ծավալը և նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության ապահովման միջոցով համապատասխան որակավորված մասնագետների պատրաստմանը, նրանց կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է:

Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է:

Նախնական մասնագիտական կրթության տևողությունը, կախված դիմորդների նախընթաց կրթությունից (հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր) և ընտրած մասնագիտությունից, 1-3 տարի է: Այն իրականացվում է ուսումնարաններում և քոլեջներում:

Միջին մասնագիտական կրթությունը իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՍՈՒՀ)՝ քոլեջներում և ՄՍՈՒՀ-ներում:

ՄՍՈՒՀ-ներում ուսուցումն իրագործվում է հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ձևերով: Ուսուցման տևողությունը կախված է սովորողների նախընթաց կրթությունից և ընտրած մասնագիտությունից (1 տարի 10 ամսից մինչև 4 տարի 10 ամիս է):

2014թ. Երևանում է տեղաբաշխված հանրապետության կրթական հաստատությունների մեծ մասը: Երևանում գործում են 207 նախադպրոցական, 273 հանրակրթական, բազմաթիվ նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական, արտադպրոցական դաստիարակության և կրթական այլ հաստատություններ:

2014թ. Երևանի 273 հանրակրթական ուսումնական հաստատություններից 235-ը պետական են (այդ թվում 216-ը՝ ընդհանուր հանրակրթական, 6-ը՝ մասնագիտացված հանրակրթական և 13-ը՝ հատուկ հանրակրթական), իսկ 38-ը՝ ոչ պետական (այդ թվում 37-ը՝ ընդհանուր հանրակրթական և 1-ը՝ մասնագիտացված հանրակրթական):

Երևանում դպրոցական ցանցի անմախաղէպ զարգացումը սկսվել է 1920-ական թվականներից: Խորհրդային առաջին տարիներին գործել են դպրոցի 2 հիմնական տիպեր՝ տարրական և 7-ամյա: 1940 թվականին Երևանում կային 45 հանրակրթական դպրոցներ: 1966 թվականից անցում է կատարվել ընդհանուր միջնակարգ պարտադիր կրթության: 1986-1987թթ. Երևանում գործել են 308 նախադպրոցական հաստատություններ, 216 հանրակրթական դպրոցներ, 34 պրոֆտեխնիկական ուսումնարաններ, 24 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, 11 բուհ: 1990-ական թթ.-ի սկզբից Հանրապետությունում ազգային դպրոցի զարգացման հայեցակարգի ընդունումով ամրագրվել է դպրոցահասակ բոլոր երեխաների՝ պետական հանրակրթական դպրոցներում անվճար ընդհանուր

միջնակարգ կրթություն ստանալու իրավունքը: Համաձայն հանրակրթական պետական կրթակարգի՝ 2006-2007 ուսումնական տարվանից ՀՀ-ում անցել են 12-ամյա ընդհանուր միջնակարգ կրթության՝ եռաստիճան համակարգով. տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ, միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ (միասին հիմնական), ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ:

Այժմ Երևանի ենթակայությամբ գործում է 160 կրթական հաստատություն, այդ թվում՝ 145 հիմնական դպրոց, 11 միջնակարգ դպրոց, կույրերի երեկոյան 1 դպրոց (գործում են 6-12-րդ դասարաններ), 2 հատուկ դպրոց (համար 2 և 6)՝ մտավոր թերզարգացում ունեցող երեխաների համար, 1 հատուկ դպրոց (համար 8)՝ խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների համար:

2013 թվականի հունվարից Երևանի և ՀՀ բոլոր դպրոցներն ընդգրկվել են Հայաստանի համադպրոցական համացանցում: Նոր՝ բեռնաթափված, ուսումնական ծրագրերով հանրապետության 96 դպրոցներում իրականացվել է հիմնական դպրոցի 20 անուն դասագրքերի փորձարկում, որից հետո դրանք լրամշակվել են, հրատարակվել և առաքվել են դպրոցներ:

Երևանի ենթակայությամբ գործող բոլոր դպրոցներում 2-րդ դասարանից ուսուցանվում է ռուսաց լեզու, զուգահեռաբար 12 դպրոցներում գործում են ռուսերեն ուսուցմամբ դասարաններ, իսկ 32 դպրոցներում ռուսերենի ուսուցումն իրականացվում է խորացված եղանակով¹⁵:

Հ/Հ	Վարչական շրջան	Ռուսերենով ուսուցմամբ դասարաններ	Ռուսերենի խորացում ունեցող դպրոցներ
11	Աջափնյակ	Հ. 122	Հ.122
22	Արաբկիր	Հհ.77,132	Հհ.63,77,82,128,129
33	Ավան	Հ.124	Հ.180
44	Դավթաշեն	-	Հ.199
55	Էրեբունի	Հ.35	Հհ.68,194
66	Կենտրոն	Հհ.7,8,55	Հհ.7,8,20,24,71,19
77	Մալաթիա-Սեբաստիա	Հ.176	Հհ.176,181
88	Նոր Նորք	Հ.164	Հհ.141,150,163,164,186,166,106

¹⁵ Տե՛ս՝ <http://www.yerevan.am/am/education/>:

99	Նորք-Մարաշ	-	-
110	Նուբարաշեն	-	Հ.95
11	Շենգավիթ	Հ.69	Հհ.38,169
112	Քանաքեռ-Զեյթուն	Հհ.147	Հ.147,85
	Ընդամենը	12	32

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող դպրոցներում ուսուցանվում են հետևյալ օտար լեզուները.

Անգլերեն	Ֆրանսերեն	Գերմաներեն	Այլ լեզուներ
Հհ. 1,2,4,6,7,8,10,11,12,13,14,17,18, 19,20,21,22,23,24,25,27,31,32,33, 34,35,36,37,38,39,40,43,44,45,47, 49,51,52,53,55,56,57,59,64,66,67, 68,69,70,71,72,74,75,76,77,78,79, 80,81,82,84,85,86,87,88,89,90,91, 93,95,98,99,100,101,102,104,106, 107,108,110,111,113,116,117, 120,121,122,123,124,125,126, 128,129,130,131,132,133,134, 135,136,137,138,140,141,143, 144,146,147,150,151,152,153, 154,155,156,158,160,161,162, 163,164,166,167,168,169,171, 172,173,174,175,176,177,178, 179,180,181,185,186,187,188, 189,191,192,195,196,197,199,200, «Կոլոյան», «Հր. Մաթևոսյան»	Հհ. 78,56,21,36,37,134,141, 150,166,186, 11,90,91,162,174,179,181, 6,17,45,64,194,160,95,175, 44,48,125, 18,27,31,32,50,52,66, 110,144,154,158, 1,20,33,41 93 153,168 157,26,61	Հհ. 5,6,23,35,49,60, 68,69,88	հունարեն-հ. 74 պարսկերեն-հհ. 6,100,136,78, 200 իսպաներեն- հ. 76 ատրերեն- հ. 8

Մանկապարտեզում երեխայի լեզվական դաստիարակությունը դարձյալ առնչվում է հետևյալ երկու հարցերին՝ 1) ինչ լեզվով երեխան պետք է կրթվի ու դաստիարակվի մանկապարտեզում, 2) ինչպես պետք է կազմակերպել երեխայի լեզվական դաստիարակությունը, որ նրա մայրենին լինի կամ դառնա արտահայտիչ, մաքուր ու զեղեցիկ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 161 մանկապարտեզ.

Չ/Յ	Վարչական շրջան	Մանկապ. թիվը	Երեխաների ցուցակային թիվը	Մանկավարժների թիվը
11	Աջափնյակ	16	3011	203
22	Արաբկիր	13	2699	135
33	Ավան	7	3806	72
44	Դավթաշեն	5	1627	131
55	Էրեբունի	13	1512	161
66	Կենտրոն	21	2313	66
77	Մալաթիա-Սեբաստիա	22	4838	211
88	Նոր Նորք	22	4444	22
99	Նորք-Մարաշ	4	378	199
110	Նուբարաշեն	1	190	9
11	Շենգավիթ	22*	3974	244
112	Քանաքեռ-Զեյթուն	15	2165	97
Ընդամենը՝		161	30957	1550

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ 6 մանկապարտեզներում իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցական հասակի երեխաների կրթությունը.

Չ/Յ	Վարչական շրջան	Մանկապարտեզների համարը	Ներառական կրթության կարիք ունեցող երեխաների թիվը
	Աջափնյակ	h.42	18
	Մալաթիա-Սեբաստիա	h.78	8
	Նոր Նորք	h.109.114	13,37
	Քանաքեռ-Զեյթուն	h.160	17
	Շենգավիթ	h.146	5
Ընդհ.՝	5	6	98

Երևանի քաղաքապետարանի ենթակայության 44 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն:

Դ/Գ	Դպրոցի համարը	Երբվանից է իրականացվում ներառական կրթություն	Աշակերտների թիվը
1.	Հ. Կարապետցի անվան հ. 6	2008թ.	47
2.	Մ. Մելքոնյանի անվան հ. 11	2008թ.	27
3.	Վ. Համբարձումյանի անվան հ. 17	2005թ.	42
4.	Զ. Կիրակոսյանի անվան հ. 20	2007թ.	36
5.	Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21	2008 թ.	10
6.	Ղ. Դեմիրճյանի անվան հ. 27	2001 թ.	54
7.	Մ. Նալբանդյանի անվան հ. 33	2012 թ.	21
8.	հ. 37 դպրոց	2013 թ.	16
9.	Մ. Մանուշյանի անվան հ. 48	2012 թ.	22
10.	Հ. Պարոնյանի անվան հ. 59	2003 թ.	27
11.	Վ. Տերյանի անվան հ. 60	2012 թ.	16
12.	Մ. Մխոյանի անվան հ. 68	2011 թ.	29
13.	«Արգենտինյան Հանրապետություն» հ. 76	2011 թ.	11
14.	Հ. Հայրապետյանի անվան հ. 78	2011 թ.	17
15.	Մ. Զանբազյանի անվան հ. 79	2011 թ.	16
16.	Հովհ. Պողոսյանի անվան հ. 82	2010 թ.	10
17.	Խ. Աբովյանի անվան հ. 84	2009 թ.	25
18.	Ս. Շահմուրադյանի անվան հ. 85	2011 թ.	27
19.	Յ. Լեփսիուսի անվան հ. 88	2012 թ.	9
20.	Ղ. Ալիշանի անվան հ. 95	2010 թ.	31
21.	հ. 100	2003 թ.	54

22.	հ. 120	2012 թ.	14
23.	Ա. Բլրկի անվան հ. 122	2012 թ.	20
24.	Ս. Բյուրատի անվան հ. 125	2009 թ.	45
25.	Յ. Մորգենթաուի անվան հ. 126	2010 թ.	30
26.	Գայի անվան հ. 129	2007 թ.	24
27.	Գ. Ստեփանյանի անվան հ. 135	2008 թ.	57
28.	Վիլյամ Սարոյանի անվան հ. 138	2013 թ.	28
29.	Մովսես Խորենացու անվան հ. 143	2013 թ.	33
30.	Ֆ. Նանսենի անվան հ. 150	2003 թ.	70
31.	Ռ. Իշխանյանի անվան հ. 153	2013 թ.	38
32.	հ. 160	2009 թ.	57
33.	Սիամանթոյի անվան հ. 162	2009 թ.	28
34.	Ա. Միկոյանի անվան հ. 166	2012 թ.	21
35.	Վազգեն Ա-ի անվան հ. 168	2009 թ.	33
36.	Յ. Շիրազի անվան հ. 169	2011 թ.	20
37.	հ. 174	2010 թ.	21
38.	Գ. Մահարու անվան հ. 176	2011 թ.	14
39.	հ. 180	2007 թ.	11
40.	հ. 186	2008 թ.	39
41.	հ. 192	2010 թ.	30
42.	Ա. Նավասարդյանի անվան հ. 196	2009 թ.	14
43.	հ. 197	2011 թ.	56
44.	հ. 200	2007 թ.	45

Աշակերտների թիվը: Երևանի դպրոցներում 2012-2013 ուս. տարում սովորել է հանրապետության աշակերտների 21.3 տոկոսը՝ **78.552** աշակերտներ, որոնցից հիմնական կրթական ծրագրով՝ **76. 423**-ը:

Ուսուցիչների թիվը: Երևանի հանրակրթական դպրոցներում 2012-2013 ուսումնական տարում աշխատել են 6.545 ուսուցիչներ, կան հանրապետության ուսուցիչների 16 տոկոսը¹⁶:

Երևան քաղաքում բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների թիվը (92,1%) զգալիորեն գերազանցում է հանրապետական միջին ցուցանիշը՝ 87,2%: Ընդ որում, բարձրագույն մանկավարժական կրթությամբ մանկավարժների ցուցանիշը Երևանում (91,7%) որոշ չափով զիջում է հանրապետականին (92,1%):

Կրթության մեջ ընդգրկվածության ցուցանիշների գնահատման մյուս դժվարությունն այն է, որ դպրոցները չունեն իրենց ամրագրված սպասարկման տարածքներ, և դպրոցի ընտրությունը ծնողների իրավասությունն է: Ինչպես հայտնի է, երևանամերձ շատ բնակավայրերի բնակիչներ նախընտրում են, որ իրենց երեխաները սովորեն Երևանի դպրոցներում՝ նկատի ունենալով դրանց որոշ առավելությունները:

Կրթության որակի միջնորդավորված ցուցանիշ կարող էր հանդիսանալ մասնավոր կրթական ծառայություններից օգտվողների թիվը, սակայն այս պարագայում նույնպես կան խնդիրներ. նախ՝ այդ երևույթը մեծ տարածում ունի մայրաքաղաքում, և չկա հավաստի տեղեկատվություն դրանց ծավալների մասին, մյուս կողմից՝ մասնավոր պարապմունքներին դիմելու հիմնական պատճառը բուհական ընդունելության քննությունների և դպրոցական կրթական ծրագրերի պահանջների անհամապատասխանությունն է:

Եթե փորձենք կրթության որակի մասին դատել ըստ բուհ ընդունված շրջանավարտների թվի, ապա հետազոտությունները ցույց են տալիս, որ Երևան քաղաքի՝ բուհեր ընդունվող շրջանավարտների թիվն ավելի մեծ է, քան տարբեր մարզերից և հատկապես գյուղական բնակավայրերից ընդունվածներինը:

Ավանդաբար բուհական տարիքի երիտասարդների թիվը քչանում է՝ որպես նվազող ծնելիության և արտագաղթի հետևանք: Հայաստանում աշակերտների միայն 30 տոկոսն է շարունակում կրթությունը ավագ դպրոցից հետո, որը զգալիորեն զիջում է միջազգային մակարդակին:

Եթե 1990-ականներին ՀՀ-ում ունեինք 30 հազար գիտաշխատող, մի քանի տասնյակ ճարտարագետներ ու ինժեներներ:

2010 թվականի տվյալներով ՀՀ գիտության ոլորտին առնչվող գիտական կազմակերպությունների աշխատակիցների շտեմարանում ընդգրկված են 727 գիտությունների դոկտոր և 2429 գիտությունների թեկնածուի մասին տեղեկություններ, օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի գիտնականների տվյալների էլեկտրոնային շտեմարանում՝ 556 գիտնականի տվյալներ¹⁷:

¹⁶ Կրթական համակարգի վիճակագրական տվյալների տարբեր աղբյուրներում հաճախ հանդիպում են անհամաձայնություններ, որը հիմնականում պայմանավորված է տվյալների ստացման մեթոդաբանությունների տարբերությամբ:

¹⁷ Տե՛ս <http://www.edu.am/index.php?menu1=97&menu2=153&arch=0>:

Այսօր գիտաշխատողների թիվը հասնում է մոտ 4 հազարի, միջին տարիքը 60-ից անց է:

ՀՀ ԳԱՄ անձնակազմը¹⁸: Ակադեմիայի աշխատակիցների ընդհանուր թիվը 3700-ից ավելին է, այդ թվում՝ 63 ակադեմիկոս, 61 թղթակից անդամ, 335 գիտության դոկտոր, 1080 գիտության թեկնածու: Ակադեմիայի կազմում ընդգրկված են նաև 4 պատվավոր անդամ, 11 արտասահմանյան անդամ և 55 պատվավոր դոկտոր:

ՀՀ ԳԱՄ «Գիտություն» հրատարակչական-արտադրական միավորումը տարեկան հրատարակում է շուրջ 30 մենագրություններ, ժողովածուներ, գիտական աշխատություններ և այլն: Հրատարակում է 14 գիտական ամսագրեր:

Իբրև պաշտոնական լեզու՝ Երևանում հիմնականում գործածվում է գրական հայերենը:

Երևանցիների առօրյա հաղորդակցության միջոցը խոսակցական լեզուն է:

Եթե Երևանում մի կողմից նկատվում է հայերենի դիրքերի ամրապնդման միտում, ապա մյուս կողմից՝ զնալով մեծանում է ժողովրդական զանգվածների՝ ռուսերենին և անգլերենին տիրապետելու աստիճանը: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ արդի վիճակն անհատից պահանջում է ռուսերենի, անգլերենի լավ իմացություն, և դրանց իմացության պակասը աշխատանքային գործունեության մեջ կարող է զգալի դժվարությունների առաջ կանգնեցնել, հետևաբար՝ մարդիկ չեն կարող չարձագանքել այդ երևույթին, չեն կարող նկատի չառնել կյանքի թելադրող պահանջները: Այս վիճակը տարեցտարի խորանում է:

Ժամանակը ստիպում է մարդուն տիրապետել առնվազն երկու լեզվի, այդ երևույթը բնութագրվում է ազգային լեզուների փոխազդեցությամբ և փոխադարձ հարստացմամբ, ընդ որում, այս պրոցեսում հատուկ դեր ունի ռուսաց լեզուն: Երևան են գալիս բազմաթիվ սխալներ ու լեզվական շեղումներ՝ ինչպես լեզվի նկատմամբ անփույթ վերաբերմունքի և լեզվական ցածր կուլտուրայի, այնպես էլ երկրորդ լեզուն վատ իմանալու պատճառով: Այսպիսի ներթափանցումները կարելի է վերացնել կամային ճիգերով և տվյալ լեզվին ազատ տիրապետող անհատների հետ անընդհատ հաղորդակցման շնորհիվ:

Կրթության և դաստիարակության լեզվի հարցը պետության ու ազգի անվտանգությունն ապահովող գործոն է և պիտի լինի հայանպաստ:

Գրական հայերենը տիրապետող է նաև Երևանի պետական ու հասարակական-քաղաքական կյանքում, զեղարվեստական գրականության ոլորտում, մի հանգամանք, որ նույնպես շատ կարևոր է լեզվի կենսունակության համար: Երևանում հիմնականում հայերեն է նաև տեղեկատվական զանգվածային միջոցների լեզուն, ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերի գերակշիռ մասը: Սակայն չպետք է մոռանալ, որ այսօր մամուլի լեզուն բազմաշերտ է: Կան թերթեր, որոնք ապահովում են լեզվական բավարար որակը, բայց շատերն էլ, հատկապես

¹⁸ Տե՛ս <http://www.sci.am/index.php?p=1&langid=2>:

ընդդիմադիր թերթերը, ողողված են ժարգոնային բառերով ու արտահայտություններով, այդպիսին է նաև հրապարակային խոսքը:

Համալսարաններ և գիտահետազոտական կենտրոններ

Համաձայն Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի և Կառավարության որոշման՝ 2005-2006 ուսումնական տարվանից Հայաստանում գործում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երկաստիճան համակարգ՝ բակալավրական (4 տարի) և մագիստրոսական (2 տարի): Երևանում գործում են բուհերի հետևյալ տեսակները.

1. *համալսարան* բուհ, որն ապահովում է բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթություն բնական և հասարակական գիտությունների, տեխնոլոգիայի և մշակույթի տարբեր բնագավառներում, ինչպես նաև ընձեռում է գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների հնարավորություն.

2. *ինստիտուտ*՝ բուհ, որն իրականացնում է մասնագիտացված և հետբուհական կրթական ծրագրեր ու գիտական հետազոտություններ գիտական, տնտեսական և մշակութային մի շարք բնագավառներում.

3. *ակադեմիա* (կրթական)՝ բուհ, որի գործունեությունը միտված է կրթության, գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի առանձին ոլորտների զարգացմանը, այն իրականացնում է ծրագրեր՝ նախապատրաստելով և վերապատրաստելով առանձին ոլորտների որակյալ մասնագետներ.

4. *կոնսերվատորիա*՝ բուհ, որը զբաղվում է երաժշտության բնագավառում մասնագետների պատրաստմամբ:

Երևանում այժմ գործում են երկու տասնյակ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ¹⁹:

1. Երևանի պետական համալսարան.
2. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա.
3. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան.
4. Հայաստանի ազգային ագրարային համալսարան.
5. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ.
6. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա.
7. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան.
8. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան.
9. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան.
10. Հայաստանի աներիկյան համալսարան.
11. Հայաստանում ֆրանսիական համալսարան.
12. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան.
13. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ.

¹⁹ Տե՛ս <http://www.edu.am/index.php?id=261&topMenu=-1&menu1=93&menu2=145&arch=0>:

14. Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա.
15. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան.
16. Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան.
17. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն.
18. ՀՀ պետական կառավարման ակադեմիա.
19. ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա.
20. ՀՀ ոստիկանության կրթահամալիր:

Միաժամանակ Երևանում գործունեություն են ծավալում միջպետական 4, մասնավոր 27, չհավատարմագրված 24 բուհեր և արտասահմանյան 8 բուհերի մասնաճյուղեր:

Պետք է նշել, որ վերջին շրջանում դիմորդների թիվը կտրուկ նվազում է, նկատելիորեն նվազում է նաև աշակերտների թիվը: Եթե 2008/09 ուստարում հանրակրթական դպրոցում սովորում էր 414,8 հազար աշակերտ, ապա 2012/13 ուստարում սովորողների քանակն արդեն 368,7 հազար էր: Ընդ որում, քանակականից բացի հանրակրթության ոլորտում կառուցվածքային փոփոխություններ էլ են տեղի ունենում: Անցած հինգ տարիների ընթացքում մոտ 5 անգամ ավելացել է ռուսերեն լեզվով կրթություն ստացող աշակերտների թիվը, մինչդեռ հայկական դպրոցներում կրճատվել է դպրոցական շրջանավարտների թիվը: Հինգ տարի առաջ հանրակրթական դպրոցն ավարտել էր 45 հազար 700 աշակերտ: Իսկ անցած տարի՝ ընդամենը 34 հազար 900: Հենց այս շրջանավարտներն են կազմում բուհերի դիմորդների հիմնական զանգվածը: 2008/09 ուստարում Հայաստանի բուհերում սովորում էր 114,4 հազար ուսանող: 2012/13-ի ցուցանիշը 90,1 հազար է: Հինգ տարի առաջ Հայաստանի բուհերում սովորում էր 4 հազար 11 արտասահմանցի ուսանող: Անցած տարի նրանց թիվը 2 հազար 725 էր: Մի ժամանակ, երբ Հայաստանում նախնական բարձրագույն կրթությունը բավարար չափով մատչելի էր և որակյալ, իսկապես օտարերկրյա ուսանողների որոշակի քանակ կար: Նրանցից շատերը ՌԴ հայաստանցի առաջին սերնդի արտագաղթած ընտանիքների երեխաներ էին: Հիմա Հայաստանում և ապրուստն է թանկացել, և կրթավարձը, հետևաբար՝ ուսանողների թիվը նվազել է: 2008/09 ուստարում մեր բուհերում սովորում էր 1294 ՌԴ քաղաքացի, 2012/13-ին՝ 904: Վրաստանցի հայ ուսանողների թիվը նույն ժամանակաշրջանում 1145-ից իջել է 769-ի²⁰:

Բուհերում այժմ շարունակվում է դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես ավագ տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով:

Բարձրագույն կրթության ոլորտում հայերենի դերը մեծ է, սակայն պետք է նշել, որ բուհերի ուսանողների մեծ մասը (հատկապես տեխնիկական, բնագիտական գծով) ստիպված են լինում օգտվել

²⁰ Տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99477313.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:

օտարալեզու մասնագիտական գրականությունից, քանի որ հայերենով մասնագիտական գրականության լուրջ խնդիր կա, չկան նաև տարբեր բնագավառների տերմինների հայալեզու ժամանակակից բառարաններ:

Հայերենը զգալիորեն իր դիրքերը զիջում է հատկապես գիտության և տեխնիկայի բնագավառներում: Եթե բուհական դասագրքերի մի մասը թարգմանվում է, ապա այլ է խնդիրը գիտական գործունեություն ծավալող մարդկանց համար, գիտական գրականության մեծ մասը օտարալեզու է: Որոշ չափով բարենպաստ վիճակում է հայագիտության բնագավառը, սակայն այստեղ ևս կան խնդիրներ՝ ժամանակակից չթարգմանված գրականությանն առնչվող: Չնայած, ի տարբերություն խորհրդային տարիների, այսօր մի դրական երևույթ կա. թեկնածուական և դոկտորականատենախոսությունների մեծ մասը հայերենով են գրվում և պաշտպանվում:

Երևանը հարուստ է գրադարաններով և թանգարաններով: Ներկայումս (2012թ.) ՀՀ-ում գործող 986 գրադարաններից 34-ը և ՀՀ-ում գործող 95 թանգարաններից 57-ը գտնվում են Երևանում:

Այժմ Երևանում կան 10-ից ավելի մեծ ու միջին թատրոններ:

Մամուլ և տպագրություն

Եթե անցյալ դարասկզբին Երևանում հրատարակվել է ավելի քան 100, անցյալ դարավերջին՝ շուրջ 370 պարբերական, ապա ներկայումս ՀՀ-ում տպագրվող շուրջ 200 պարբերականների և հանդեսների մեծ մասը հրատարակվում է Երևանում:

Հայ գրքի և տպագրության կենտրոնն է Երևանը: ՀՀ-ում գործող հրատարակչական կենտրոնների մեծ մասը գտնվում է այստեղ, օրինակ՝ «Հայաստան», «Նաիրի», ՀՀ ԳԱԱ-ի, ԵՊՀ-ի, «Լույս», «Արևիկ», «Տիգրան Մեծ», «Ձանգակ-97», «Մուկետիկ» և այլն:

Հայերենի դերը մեծ է նաև Երևանի պետական ու հասարակական-քաղաքական կյանքում, գեղարվեստական գրականության ոլորտում, մի հանգամանք, որ նույնպես շատ կարևոր է լեզվի կենսունակության համար: Երևանում ՋԼՄ-ների լեզուն ևս հիմնականում հայերենն է, ռադիոյի և հեռուստատեսության օտար արտադրության և օտարալեզու ծրագրերի գերակշիռ մասը թարգմանվում է հայերեն:

Եթե խորհրդային տարիներին կինոյի ոլորտում տիրապետող էր ռուսերենը, ապա այժմ այդպես չէ: Տեղական արտադրության ֆիլմերն ու հաղորդումները հեռարձակվում են հիմնականում հայերենով: Մնացած բոլոր կինոնկարները կինոթատրոններում ցուցադրվում են և՛ հայերենով, և՛ օտար լեզուներով:

Այսպիսով՝ Երևանում տիրապետող լեզուն հայերենն է:

Պետք է ավելացնել նաև, որ Երևանի դպրոցների, բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ծրագրերում, իբրև լեզվի ուսուցման առանձին դասընթաց, ընդգրկված են անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը:

Քանի որ լեզվավիճակը կախված է տվյալ լեզվական հանրությանը բնորոշ հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ամբողջությունից, երևույթներ, որոնք գտնվում են անընդհատ

շարժման ու զարգացման մեջ, հետևաբար ինքը՝ Լեզվավիճակը նույնպես անընդհատ փոփոխվում է՝ այդ ընթացքում հանդես բերելով զարգացման որոշակի ուղղություն, միտումներ և օրինաչափություններ:

Երևանի Լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում իր բնորոշ դեմքը, այլև որոշակի ազդեցություն է թողնում Երևանից դուրս ապրող հայերի վրա: Երևանի Լեզվավիճակին բնորոշ մյուս գիծը նրա պարզեցման միտումն է: Դրա պատճառը Երևանի բնակչության ազգային կազմի միատարրության մեծացումն է:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը, հայերենի ուղղագրության միասնականացմանը, երաշխավորում է ազգային փոքրամասնությունների Լեզուների ազատ գործածությունը, միաժամանակ աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց Լեզվի պահպանմանը և տարածմանը:

Լեզվի տարածական և հասարակական տարբերակվածության խնդիրը

Լեզուն մարդու հասարակայնացման կարևորագույն գործիքն է: Հենց Լեզվի լիակատար տիրապետումն է ապահովում անհատի ներգրավումը այս կամ այն սոցիալմշակութային շերտ:

Լեզվաբանական գրականության մեջ գոյություն ունեն խոսքի հասարակական տարբերակների մի շարք դասակարգումներ, որոնցից առավել ընդունելի է հետևյալը.

1. **մասնագիտական Լեզուներ**, այլ կերպ ասած՝ մասնագիտական ժարգոններ, ինչպես օրինակ՝ ձկնորսների, որսորդների, կոշկակարների և այլն,

2. **խմբային կամ կորպորատիվ ժարգոններ**, ինչպես օրինակ՝ ուսանողների, մարզիկների, զինվորների,

3. **ապադասակարգայնացածների ժարգոններ** (արգո, սլենգ),

4. **պայմանական-մասնագիտական Լեզուներ**, որոնք բնորոշ են արտագնա վաճառականներին, արհեստավորներին և նմանատիպ հասարակական խմբերին:

Մասնագիտական տերմինաբանության առանձնահատկությունն այն է, որ այն միշտ ծագում է որոշ գործնական անհրաժեշտությունից: Հայտնի է, որ մարդուն շրջապատող աշխարհը տարբեր կերպ է դասակարգվում, որը մեծապես կախված է նրա վարած կյանքի բնույթից: Այլ կերպ ասած՝ որքան հաճախ է մարդ առնչվում իրականության այս կամ այն բնագավառի հետ, այնքան ավելի շատ է այն առանձնանում տվյալ մարդու Լեզվում: Օրինակ՝ մի մարդ, որը հեռու է ապրում ծովից, բավարարվում է ծովին առնչվող ընդհանուր հասկացություններով՝ ծով, ափ, քամի, փոթորիկ և նմանատիպ այլ բառեր: Այլ է ձկնորսի օրինակը, որը կյանքն անց է կացնում ծովում: Իհարկե նա անտարբեր չէ՝ գտնվում է բաց ծովում, թե ափին մոտ, ինչպիսի քամի է փչում՝ հարավային, թե հյուսիսային: Այսպիսով՝ կարելի է ասել, որ

գործնական հետաքրքրությունը առաջ է բերում համապատասխան տերմինաբանություն:

Ինչպես գիտենք, յուրաքանչյուր մասնագիտություն ունի իր հատուկ բառապաշարը: Մասնագիտական բառապաշարին են հարում նաև արհեստականորեն ստեղծված գիտական և տեխնիկական տերմինները, որոնք, որպես կանոն, ընդգրկվում են գիտատեխնիկական տերմինաբանական բառարաններում: Մասնագիտական բառապաշարի և արհեստականորեն ստեղծված տերմինների միջև կան որոշ ընդհանրություններ: Խոսքում սրանք հաճախ միաձուլվում են: Սակայն արհեստականորեն ստեղծված տերմինները ավելի կայուն են և չունեն տարածքային տարբերակներ:

Մասնագիտական բառապաշարը սովորաբար կիրառվում է գործառական ոճերում և առանձնանում է իմաստի ճշգրտությամբ և ոչ արտահայտչականությամբ:

Խմբային կամ կորպորատիվ ժարգոնները ծագում են այնպիսի մարդկանց խմբերում, որոնք ինչ-որ կերպ կապված են իրար: Կապի ձևերը կարող են շատ բազմազան լինել: Կարևոր է, որ այդ կապն ինչ-որ կերպ միավորի մարդկանց, ինչպես օրինակ՝ ծառայություն բանակում, ուսում դպրոցում կամ համալսարանում, զբոսաշրջություն, սպորտ և այլն: Ժարգոնը առաջանում է նաև այն մարդկանց միջավայրում, որոնք տրվում են վատ սովորույթների, օրինակ՝ թղթախաղ, հարբեցողություն և այլն:

Խմբային կամ կորպորատիվ ժարգոններում, իհարկե, կան նաև մասնագիտական տարրեր: Օրինակ՝ «լիմոնկա» նշանակում է հատուկ տեսակի նռնակ, քննիչների ժարգոնում կա «ծակվել» բառը, որը նշանակում է «զաղտնիքները բացել» և այլն: Սակայն խմբային կամ կորպորատիվ ժարգոնների կարևորագույն առանձնահատկությունը սա չէ: Այս ժարգոնները արտացոլում են ոչ այնքան գործառական անհրաժեշտությունը, որքան ինքնատիպ լինելու ձգտումը:

Կան բազմազան խմբային ժարգոններ, որոնցից մեկն է ուսանողական ժարգոնը կամ, ինչպես ընդունված է ասել, ուսանողական սլենգը, օրինակ՝ «փիլո»՝ փիլիսոփայություն, «կրծող»՝ շատ սովորող ուսանող, «շեֆ»՝ դիպլոմային կամ ատենախոսական աշխատանքի ղեկավար, «լեզվաբ»՝ լեզվաբանություն, «թխել»՝ արտագրել և այլն:

Դժվար չէ նկատել, որ նմանատիպ մասնագիտական կամ արտադրական բառապաշարը կտրուկ տարբերվում է սովորական մասնագիտական բառապաշարից կամ տերմինաբանությունից: Մասնագիտական բառապաշարը սովորաբար ծագում է ինչ-որ առարկա կամ երևույթ անվանելու անհրաժեշտությունից, որին իր գործունեության մեջ բախվում է արտադրողը: Սովորաբար դա մի հատուկ առարկա է, որը լիովին անհայտ կամ քիչ հայտնի է այդ շրջանակից դուրս: Ուսանողական սլենգի բառերը չեն ծագում որոշակի առարկա անվանելու անհրաժեշտությունից, այլ արտահայտիչ, վառ, չարաճճի, ուշագրավ լինելու ձգտումից:

Ապադասակարգայնացածների ժարգոնները (արզո) կիրառվում են բանտարկյալների շրջանակներում կամ այն մարդկանց շրջանակներում, որոնք ազատության մեջ հանցագործ կյանքով են ապրում: Չնայած որոշ տարածքային տարատեսակների՝ այս ժարգոնը հարաբերականորեն

միասնական է: Իր բնույթով այն տարբերվում է խմբային կամ կորպորատիվ ժարգոններից:

Գողական ժարգոնը բավականին հարուստ է այնպիսի բառերով, որոնք ցույց են տալիս գողական կյանքին առնչվող տարբեր հասկացություններ: Գողական ժարգոնին բնորոշ է կոպիտ մեղմասացությունը, որի դեպքում սովորական բառերի ներքո փորձում են թաքցնել հանցավոր տարբեր գործողություններ, ինչպես օրինակ՝ «գողանալը» արտահայտվում է «գնել», «աշխատել» կամ «առևտուր անել» բառերով, «մեկին դանակով վնասելը»՝ «ճանկռել» բառով, «հաջող գողությունը» անվանում են «մաքուր գործ» կապակցությամբ, «հանցագործը»՝ «մերոնքական» բառով և այլն:

Պայմանական լեզուները բնորոշ են արտագնա վաճառականներին, արհեստավորներին և նման հասարակական խմբերին: Պայմանական լեզուների ամենացայտուն հատկանիշն այն է, որ այստեղ ստեղծվում են բառեր կամ այնպես են աղավաղվում բառերը, որ դրանք լիովին անհասկանալի լինեն ուրիշների համար: Դրանց իմաստը հայտնի է միայն մարդկանց մի փոքր զանգվածի, որոնք օգտվում են այդ լեզվից: Այսպիսի գաղտնի լեզուն հնարավորություն է տալիս մրցակցությունից վախեցող արհեստավորներին թաքցնել իրենց արհեստի գաղտնիքները: Վաճառականներին հաճախ անհրաժեշտ է իրար հետ պայմանավորվել զնորդին համատեղ խաբելու համար կամ մի գործարքի կնքման շուրջ և այլն, և շրջապատին անհասկանալի ժարգոնի տրակայությունը առավելապես նպաստում է այդ նպատակների իրականացմանը:

Տարածքային լեզվաբանություն: Բարբառային տարբերությունների առաջացման հիմնական պատճառը լեզվական հանրության կապերի թուլացումն ու զանազան խմբավորումների հարաբերական մեկուսացումն է: Քանի որ լեզուն պատմականորեն փոփոխվում է, նրանում մշտապես ծնվում են տարբեր նոր իրողություններ, որոնք, սկզբնապես առաջանալով մի տեղում, աստիճանաբար տարածվում են: Որպես կանոն՝ լեզվական հանրության ամրամների միջև սերտ կապը որոշակիորեն բարդանում է:

Բարբառ է կոչվում այն լեզվական համակարգը, որը ծառայում է որպես շփման միջոց որևէ տարածքում պարփակված մարդկանց խմբի համար: Բարբառների ուսումնասիրության և տարանջատման սկզբունքների մշակման համար մեծ նշանակություն ունեն լեզվաբանական աշխարհագրության տվյալները:

Լեզվի և տարածքային բարբառի տարանջատումը, ինչպես նաև ցեղակից լեզուների բարբառների սահմանազատումը պայմանական է: Սահմանվորապես, լեզվի և բարբառների տարանջատման մոտեցումների տարբերությունը հանգեցնում է զգալի տատանումների գործող լեզուների հաշվման ժամանակ (տարբեր հետազոտողներ նշում են 1-7 հազար լեզուներ): Ընդունված է կարծել, որ մեկ լեզվի բարբառակիրները իրար լավ հասկանում են, իսկ տարբեր լեզուների լեզվակիրները միմյանց դժվարությամբ են հասկանում կամ էլ ընդհանրապես չեն հասկանում: Սակայն հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ միևնույն լեզվի տարբեր բարբառները փոխադարձաբար անհասկանալի են, ինչպես օրինակ՝ չինարենի շատ բարբառներ (բանավոր տարբերակները), տարածականորեն

տարանջատված գերմաներենի բարբառները և նույնիսկ ռուսերենի որոշ բարբառներ: Սրան հակառակ՝ որոշ ցեղակից լեզուների լեզվակիրները, ինչպես օրինակ՝ շվեդներն ու նորվեգացիները, ռուսներն ու բելառուսները, մոնղոլներն ու կավմիկները, թուրքական լեզուների մեծամասնության կրողները միմյանց հասկանում են համեմատաբար հեշտությամբ: Բոլոր դեպքերում «լեզու՞, թե՞ բարբառ» հարցին միանշանակ կարելի է պատասխանել. լեզուն ունի պետական կարգավիճակ, ինքնուրույն գիր և այլն, իսկ բարբառները՝ ոչ: Բարբառի պատկանելությունը աշխարհագրորեն սահմանակից այս կամ այն լեզվին որոշվում է բացառապես արտալեզվական չափանիշներով, ինչպիսիք են բարբառակիրների ազգային ինքնագիտակցությունը, նրանց կողմից օգտագործվող այս կամ այն գրական լեզվին նախապատվություն տալը և այլն:

Տարածքային բարբառները գրական լեզուներից ունեն մի շարք գործառնությային տարբերություններ: Օրինակ՝ բարբառը ունի կիրառության տարածքային սահմանափակում, մինչդեռ գրական լեզուն կիրառվում է տվյալ լեզվի ամբողջ տարածքում, բարբառն ունի առավելապես կենցաղային բնույթ, այն հանդես է գալիս հիմնականում բանավոր դրսևորմամբ: Պաշտոնական իրավիճակներում և գրավոր խոսքում լեզվակիրները սովորաբար կիրառում են գրական լեզուն:

Բարբառի գործառնությունը սահմանափակվում է տվյալ տարածքով, օրինակ՝ հայկական շատ գյուղերում ծագումով տեղացի համագյուղացիների միջև ընդունված է խոսել տեղի բարբառով, այսպիսի մարդկանց կողմից գրական լեզվի օգտագործումը ծիծաղելի, ծաղրալի արձագանք է ստանում:

Մարդկանցից շատերը, որ խոսում են գրական լեզվի խոսակցական տարբերակով, անցյալում բարբառակիրներ են եղել և ինչ-որ կերպ պահպանում են բարբառային առանձնահատկությունները: Հարցումները ցույց են տալիս, որ այն հիմնականում արտահայտվում է հնչյունաբանության մեջ և սակավ՝ գրավոր խոսքի մեջ՝ ի տարբերություն առանձին քերականական և բառային բարբառաբանությունների:

Խոսակցական լեզվի ուսումնասիրության մեջ հանրալեզվաբանական գործոնների դերը

Հանրալեզվաբանությունը հասարակագիտությունից (սոցիոլոգիայից) շատ մեթոդներ է փոխառել, օրինակ՝ զանգվածային հետազոտության մեթոդը, հարցաթերթիկների կազմումը, բանավոր հարցումները, հարցագրույցը: Պետք է նշել, սակայն, որ փոխառելով վերոնշյալ մեթոդները՝ հանրալեզվաբանները դրանք ծառայեցնում են բացառապես լեզվի ուսումնասիրությանը, բացի այդ՝ դրանց հիման վրա ստեղծում ինքնուրույն մեթոդներ լեզվական փաստերի և լեզվակիրների առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

Այն հանրույթներում, որտեղ կիրառվում են երկու, երեք և ավելի լեզուներ, հանրալեզվաբանը պետք է ուսումնասիրի ոչ թե առանձին լեզուների լեզվական փաստերը, այլ դրանց փոխհարաբերության, գործառնման մեխանիզմները: Պետք է պարզի հետևյալ հարցերի

պատասխանները. հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում են դրանք կիրառվում, ինչպիսի՞ն են դրանց փոխհարաբերությունները՝ ըստ դերի և գործառույթի, ո՞ր լեզուն է տիրապետող, ո՞ր լեզուն է պաշտոնական, և ո՞րը՝ կենցաղային: Հետևաբար՝ հարցումները կազմակերպելիս և հարցաթերիկներ կազմելիս հաշվի են առնվել վերոնշյալ հանգամանքները:

Հանրալեզվաբանության մեջ կան նրան բնորոշ որոշակի հասկացություններ: Դիտարկենք դրանցից մի քանիսը, որոնք համեմատաբար ավելի մեծ կարևորություն ունեն և արտահայտում են այս գիտակարգի էությունը:

Լեզվական հանրույթ: Լեզվական հանրույթը այնպիսի մարդկանց մեթոդություն է, որոնք միավորվում են հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կապերով, առօրյա կյանքում հաղորդակցվում տվյալ հանրույթի համար ընդհանուր մեկ լեզվով:

Որպես լեզվական հանրույթ կարող են դիտարկվել մարդկանց խմբեր՝ անկախ ներառվող անհատների քանակից: Օրինակ՝ որևէ երկիր, պետություն, ընտանիք, սպորտային թիմ և այլն: Ուստի յուրաքանչյուր հանրույթի առանձնացման նախապայման կարող են համարվել հասարակական կյանքի ընդհանրությունը և պարբերական հաղորդակցման առկայությունը: Լեզվական որևէ մեծ հանրույթ կարող է ներառել ավելի փոքր հանրույթներ: Օրինակ՝ Հայաստանի հանրապետությունը, որպես մեծ հանրույթ, ներառում է տարբեր մարզերի հանրույթները: Կամ Երևանը, որպես մեծ հանրույթ, ներառում է տարբեր վարչական շրջանների հանրույթները, դրանք էլ իրենց հերթին՝ տարբեր հաստատությունների, ձեռնարկությունների հանրույթներ:

Որքան փոքր է լեզվական հանրույթը, այնքան միատարր է նրա լեզուն: Օրինակ՝ եթե միջնակարգ դպրոցը դիտարկենք որպես լեզվական հանրույթ, ապա կարելի է նկատել, որ նրանում գործառույթի հիմնական լեզուն մեկն է: Պետք է նշել, սակայն, որ միշտ չէ, որ փոքր լեզվական հանրույթի լեզուն մեկն է կամ համեմատաբար միատարր է: Օրինակ՝ ընտանիքում կարող է գործառել ոչ թե մեկ, այլ երկու կամ ավելի լեզու:

Մեթոդներ: Հանրալեզվաբանությանը բնորոշ մեթոդները կարելի է բաժանել երեք խմբի.

1. նյութի հավաքման մեթոդներ.
2. նյութի խմբավորման մեթոդներ.
3. ստացվող տվյալների գնահատման մեթոդներ:

Առաջին խմբում ընդգրկվում են այն մեթոդները, որոնք հանրալեզվաբանությունը փոխառել է հասարակագիտությունից (սոցիոլոգիայից), հասարակական հոգեբանությունից և մասամբ բարբառագիտությունից: Երկրորդ և երրորդ խմբերում մեծ ընդգրկում ունեն մաթեմատիկական վիճակագրության մեթոդները:

Պետք է նշել, որ հավաքված, խմբավորված, վիճակագրական նախապայմաններով գնահատված նյութը կարիք ունի հանրալեզվաբանական փոխակերպման, որն էլ հնարավորություն է տալիս վեր հանելու լեզվի և հասարակական ինստիտուտների միջև նշանակալից կապերը:

Հանրալեզվաբանները տեղեկույթի հավաքման ժամանակ հաճախ դիմում են դիտարկմանը և տարբեր բնույթի հարցումներին: Լայնորեն կիրառվում է նաև գրավոր աղբյուրների վերլուծության մեթոդը: Բնականաբար, հաճախ այս մեթոդները համակցվում են. վերջնական վերլուծությունից հետո հետազոտողը առաջ է քաշում որևէ դրույթ, որը ստուգվում է դիտարկման ընթացքում: Ստուգելու համար հետազոտողը կարող է դիմել իրեն հետաքրքրող լեզվական հանրույթի հարցումների մեթոդին:

Սովորական դիտարկման հետ հանրալեզվաբանները կիրառում են նաև ներառված դիտարկման մեթոդը: Հետազոտության այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հետազոտողը ևս ներառվում է իր կողմից ուսումնասիրվող, դիտարկվող խմբում: Բնականաբար, այս մեթոդը կարող է կիրառվել, եթե հետազոտողը բոլոր մախապայմաններով համապատասխանում է իր կողմից դիտարկվող խմբին:

Ինչպես սովորական, այնպես էլ ներառված դիտարկման դեպքում հետազոտողը պետք է գրանցի դիտարկվող խոսքային նյութը: Նյութի գրանցումը կարելի է կատարել երկու եղանակով՝ գրավոր և տեխնիկական: Եթե հետազոտողն ուսումնասիրում է առանձին լեզվական միավորներ՝ բառեր, բառաձևեր, շարահյուսական կառույցներ և այլն, ապա ավելի արդյունավետ է գրավոր գրանցման եղանակը: Իսկ եթե հետազոտողը նպատակ ունի ուսումնասիրելու ամբողջական խոսքը, նրա դրսևորման ձևերը, արտասանական, հնչերանգային առանձնահատկությունները, ապա գրավոր գրանցումը արդյունավետ չէ, քանի որ հնարավոր չէ գրանցել ամբողջական անկաշկանդ խոսքը, այլ միայն պատահիկներ, այն էլ խիստ անձնային ընտրությամբ: Ուստի այդ դեպքում անհրաժեշտ է գրանցել տեխնիկական եղանակով՝ ձայնագրիչներով, իսկ եթե անհրաժեշտ է ուսումնասիրել նաև խոսքին ուղեկցվող դիմախաղը և (շարժաձևերը), ապա պետք է դիմել տեսաձայնագրման եղանակին:

Նյութի գրանցումը կարող է լինել ինչպես բացահայտ, այնպես էլ թաքնված եղանակներով: Բացահայտ գրանցման դեպքում հետազոտողը պետք է տեղեկացնի իր ուսումնասիրության (կեղծ կամ ճշմարիտ) նպատակի մասին: Այս դեպքում, սակայն, բանավոր խոսքը լիովին անկաշկանդ լինել չի կարող: Թաքնված գրանցման դեպքում լեզվակիրը խոսում է անկաշկանդ, առանց վերահսկելու սեփական խոսքը, ուստի ստացվող տվյալները կարող են ավելի ճշգրիտ բնորոշել լեզվակրի խոսքը:

Հանրալեզվաբանության մեջ լայնորեն կիրառվում են գրավոր հարցաթերթիկավորման, բանավոր հարցազրույցի մեթոդները, որոնք նպատակ ունեն պարզելու լեզվական տվյալ հանրույթին բնորոշ լեզուն:

Հավաքված տվյալները ներկայացվում են աղյուսակների ձևով և ենթարկվում խմբավորման: Այնուհետև հաջորդում է մաթեմատիկական վիճակագրության մեթոդով հավաքված և խմբավորված նյութի գնահատումը, որի արդյունքում էլ հետազոտողը պարզում է կիրառվող լեզվի և լեզվակիրների հասարակական առանձնահատկությունների կապը և առնչությունները:

Որոշ դիտարկումներ Երևանի խոսակցական լեզվի հասարակական տարբերակվածության վերաբերյալ

Լեզվաբանության մեջ տարածված է համաժողովրդական լեզվի գաղափարը, որը հասկանալի, ընկալելի է տվյալ հանրության կողմից: Սակայն այդ համաժողովրդական լեզուն չի կարող բացարձակապես միասնական լինել, քանի որ կան գործոններ, որոնց հետևանքով այն դառնում է անհամասեռ: Լեզվի տարբերակայնությունը լեզվաբանական գրականության մեջ ընդունված է բաժանել երեք խմբի.

1. լեզվի տարածական տարբերակներ՝ բարբառներ.
2. լեզվի ժամանակային տարբերակներ՝ լեզվի պատմության փուլեր.
3. լեզվի հասարակական տարբերակներ:

Յայտնի է, որ լեզվի հասարակական տարբերակումը նկատել է դեռևս 17-րդ դարում Գոնսալո դե Կորեսաը: Նա հստակ առանձնացնում էր լեզվի մի շարք հասարակական տարատեսակներ. «Պետք է նշել, որ լեզուն, բացի զավառներում գործառու բարբառներից, ունի որոշակի տարատեսակներ՝ կախված տվյալ տարածքի բնակիչների տարիքից, հասարակական դիրքից, ունեցվածքից. գոյություն ունեն գյուղացու, քաղաքացու, պաշտոնավոր մարդու, ծառայողի, գիտնականի, հոգևորականի, կանանց, տղամարդկանց, երեխայի և այլ տիպի լեզուներ»²¹: Սա բավականին ընդունելի տարբերակում է, ուստի կարելի է ասել, որ ընդհանրապես լեզվավիճակը կախված է տվյալ լեզվական հանրությանը բնորոշ հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ամբողջությունից:

Այսպես՝ կարող են լինել առանձնահատկություններ՝ կապված լեզվակիրների տարիքի հետ (երեխայի լեզուն միշտ տարբերվում է մեծահասակի լեզվից, ավագ սերնդի ներկայացուցիչների խոսքը երբեմն տարբերվում է կրտսեր սերնդի ներկայացուցիչների խոսքից): Այնուհետև, հայտնի են լեզուներ, որոնցում զգալի տարբերություններ կան կանանց և տղամարդկանց խոսքի միջև (օրինակ՝ Ամերիկայում կարաիբների, յուկագիրների, Բուլվիայի չիկիտա լեզուներում²²): Լեզվի տարբերակայնությունը կարող է կախված լինել նաև մարդու կրթական մակարդակից (հմտ. կրթված մարդու և անգրագետ մարդու խոսքը): Խոսքի բնույթը մեծապես պայմանավորված է նաև մարդկանց զբաղմունքով, հետաքրքրություններով և այլն: Մարդկանց՝ տարբեր դասերի պատկանելը, հասարակական ծագումը, բնակավայրը, միջավայրը և նպաստում են լեզվական որոշ առանձնահատկությունների առաջացմանը:

Տվյալ դեպքում մեր խնդիրն է՝ որոշել այն հասարակական պայմանները, որոնք ընկած են Երևանի խոսակցական լեզվի հիմքում, վեր հանել և ներակայացնել դրանցով պայմանավորված լեզվագործածության առանձնահատկությունները՝ 1) առօրյա խոսքի հնչյունական, բառային, շարահյուսական և ոճական յուրահատկությունները, 2) Երևանի տարբեր

²¹ Степанов Г., *Типология языковых состояний и ситуаций в странах романской речи*. М., 1976, с. 22.

²² Է. Աղայան, *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 641:

համայնքների բնակիչների բանավոր խոսքի ընդհանրություններն ու տարբերությունները, 3) փոխներթափանցումների և փոխազդեցությունների հետևանք հանդիսացող հատկանիշները:

Ուսումնասիրության իրականացման համար կազմակերպվել են հարցումներ Երևանի տարբեր վարչական շրջաններում և առանձին վայրերում, կատարվել համեմատություններ և այլն:

Հասարակական հարցումները կազմակերպվել են երկու ուղղությամբ: Նախ՝ փորձել ենք պարզել բնակչության հասարակական առանձնահատկությունները, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ Երևանի խոսակցական լեզվի ուսումնասիրության համար: Որպես լեզվական հանրույթ ընտրել ենք Երևանի 12 վարչական շրջանների բնակչությանը: Հարցումները հնարավորություն են տալիս պարզելու լեզվակրի հետևյալ հասարակական առանձնահատկությունները.

1. Բնակչության վայրը՝ ըստ Երևանի 12 վարչական շրջանների. սրանով նպատակ ունենք պարզելու Երևանի խոսակցական լեզվի տարածական տարբերակվածությունը: Չնայած այսօր հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ կենտրոնացած չեն որևէ կոնկրետ համայնքում, ինչպես խորհրդային տարիներին (օրինակ՝ Երևանի ծայրամասերում կենտրոնացած էր աշխատավոր բնակչությունը, մշակութային գործիչները հիմնականում բնակվում էին կենտրոնական հատվածում և այլն), բայց այնուամենայնիվ այսօր էլ կարելի է նկատել նախորդ տարիներին ձևավորված և ավանդույթով պահպանված սովորույթներ, խոսակցական լեզվում արմատացած առանձնահատուկ դրսևորումներ: Գիշտ է՝ տարածական այդ տարբերությունները շատ չնչին են, բայց որոշակի պատկերացում են տալիս լեզվի արդի վիճակի մասին: Օրինակ՝ Երևանի որոշ համայնքներում կամ թաղամասերում ձևավորվել են որոշ պայմանական լեզուներ կամ ժարգոններ, որոնք ավանդույթով փոխանցվում են սերնդեսերունդ:

2. Կրթական մակարդակը՝ տարրական, միջնակարգ, բարձրագույն: Հարցումները ցույց են տալիս, որ այսօր, ի տարբերություն խորհրդային տարիների, բնակչության մեծ մասը բարձրագույն կրթություն ունի, սակայն դա ոչ մի կերպ չի նպաստում սեփական լեզվի նկատմամբ վերահսկողությանը կամ լեզվի տիրապետման բարձր մակարդակին: Թվում էր, թե կրթված մարդիկ քիչ թե շատ պատասխանատու են լինում լեզվական հարցերում և ենթագիտակցաբար վերահսկում են իրենց խոսքը: Նշենք, որ բարձրագույն կրթություն ունենալը դեռևս լեզվական մորմին հետևելու չափանիշ չէ:

3. Մասնագիտությունը. ինչպես կրթական մակարդակի դեպքում, այստեղ ևս պետք է նշել, որ լեզվակիրների մեծ մասը մասնագիտություն ունի, սակայն տարբեր հանգամանքների բերումով այլ զբաղմունք է ունենում, չի տիրապետում մասնագիտական բառապաշարին: Ինչպես գիտենք, մարդ որքան հաճախ է առնչվում իրականության այս կամ այն բնագավառին, այնքան ավելի է այն առանձնանում տվյալ մարդու լեզվում: Ուստի մասնագիտությամբ զբաղվելու համգամանքը բավականին մեծ է լեզվակրի խոսքային առանձնահատկությունների ուսումնասիրության

գործում: Բացի այդ՝ մասնագիտական ցանկացած բնագավառ ունի իրեն բնորոշ բառապաշարը, տերմինաբանությունը և այլն: Կան նաև պայմանական-մասնագիտական լեզուներ, որոնք բնորոշ են տարբեր հասարակական խմբերին:

4. **Ջբաղմունքը.** հարցումները ցույց են տալիս, որ չնչին տոկոս են կազմում մասնագիտությամբ զբաղվող լեզվակիրները. նրանց հիմնական մասի զբաղմունքը այլ ոլորտներում է: Ինչպես արդեն նշել ենք, ինչ-որ չափով իրար առնչվող մարդկանց խմբերում կարող են առաջանալ խմբային (կամ կուրյորատիվ) ժարգոններ: Նման ժարգոններն ունեն ոչ այնքան գործառական անհրաժեշտություն, որքան արտահայտիչ լինելու ձգտում:

5. **Տարիքը.** միշտ էլ խոսքում առկա են լեզվակրի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված դրսևորումներ: Մեծահասակի խոսքը բնականաբար տարբերվում է դեռահասի խոսքից: Տարիքային բաժանումը կատարել ենք հետևյալ կերպ. 1) մինչև 16 տարեկան (մինչև ավագ դպրոցական տարիքը, երբ դեռահասը դեռ մասնագիտական ընտրություն չի կատարել), 2) 17-25 տարեկան (նկատի ենք ունեցել ավագ դպրոցականների և ուսանողների տարիքային մոտավոր շեմը), 3) 26-35 տարեկան (երիտասարդության՝ ԴՅ օրենսդրությամբ ընդունված շեմը), 4) 36-65 տարեկան (մեծահասակների՝ մինչև թոշակառու դառնալու տարիքային շեմը), 5) 66 և ավելի տարեկան (թոշակառու բնակչության տարիքային շեմը):

6. **Մայրենի լեզու.** քանի որ խորհրդային տարիներից եկող ավանդույթով այսօր էլ բնակչության մեջ շատ կան ռուսախոսներ, մայրենի լեզուն որոշելու համար 3 ուղղությամբ ենք հարցում կազմակերպել. արդյոք մայրենին հայերենն է, ռուսերենը, թե՞ այլ լեզու:

7. **Ընտանիքում գործածվող հիմնական լեզուն.** միշտ չէ, որ ընտանիքում գործածվող հիմնական լեզուն միայն մայրենի լեզուն է: Ընտանիքում կարող է գործածվել ոչ թե մեկ, այլ մի քանի լեզու: Ուստի շատ կարևոր է որոշել ընտանիքում գործածվող հիմնական լեզուն, դրանով պայմանավորված էլ պարզ կդառնան լեզվական փոխներթափանցումները, կընդգծվի լեզվական տվյալ հանրությին բնորոշ տիրապետող լեզուն վերջինիս տիրապետման աստիճանը և այլն:

8. **Հեռուստահաղորդումների և մամուլի լեզուն.** այսօր մեր կյանքի անբաժանելի մասն են կազմում հեռուստատեսությունը և մամուլը՝ թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային տարբերակով: Բնականաբար դրանցում գործածվող լեզուն իր դրոշմն է դնում լեզվակրի աշխարհայացքի, լեզվագործածության առանձնահատկությունների վրա: Դժվար չէ նկատել, որ հեռուստահաղորդումներում և մամուլում տեղ գտած լեզվական շատ սխալներ արագ յուրացվում են լեզվակրի կողմից և դառնում նրա խոսքի անբաժանելի բաղադրիչ: Լեզվակրի խոսքի վրա իրենց որոշակի հետքն են թողնում նաև օտարալեզու հաղորդումներն ու մամուլը: Գիշտ է՝ այսօր հեռուստատեսության և ռադիոյի մասին ԴՅ օրենքը²³ արգելում է հանրային

23 Տե՛ս <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1464>: Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները)

հեռուստաալիքներով օտարալեզու հաղորդումների և գովազդների հեռարձակումը, սակայն մեր օրերում թվային հեռուստաալիքները հնարավորություն են տալիս տարբեր լեզուներով հեռուստահաղորդումներ դիտելու: Ուստի հեռուստադիտողն ինքն է որոշում՝ որ լեզվով դիտի տվյալ հաղորդումը կամ ընթերցի մամուլը: Այս դեպքում մեր խնդիրն է պարզել, թե լեզվակիրը ո՞ր լեզվով է նախընտրում հաղորդում դիտել, մամուլ կարդալ, և ամենակարևորը՝ ինչու: Այս հարցումը հնարավորություն է տալիս պարզելու ոչ միայն նախընտրելի լեզուն, այլև որոշելու վերջինիս առավելությունները, և եթե այն մայրենին չէ, ապա ինչո՞վ է գիջում մայրենին:

9. Երևանցի լինելու տիպը. այս հարցումը հնարավորություն է տալիս պարզելու Երևանում բնակվողի տիպը. լեզվակիրը բնի՞կ է, թե՞ ոչ: Իսկ եթե բնիկ չէ լեզվակիրը, ապա պետք է որոշել նրա բարբառային պատկանելությունը: Դա թույլ կտա տեսնելու բարբառային տարբեր ներթափանցումները, խոսակցական լեզվում արմատացած ձևերը:

Հավաքված տվյալները ներկայացրել ենք արդյուսակների ձևով և ենթարկել խմբավորման: Այնուհետև, մաթեմատիկական վիճակագրության մեթոդով կատարվել է հավաքված և խմբավորված նյութի գնահատումը, որի արդյունքում էլ պարզվել են Երևանի խոսակցական լեզվի և լեզվակիրների հասարակական առանձնահատկությունների կապն ու առնչությունները: Պետք է նշել, սակայն, որ այս տվյալները դեռևս բավարար չեն լեզվի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար, այս տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել արտալեզվական գործոնների վերաբերյալ: Սրանց արդյունքները պետք է համադրվեն գրավոր և տեխնիկական եղանակով գրանցված դիտարկման նյութերի արդյունքների հետ (արդյունքները ներկայացվում են հաջորդ գլուխներում): Այդ ամենից հետո միայն հնարավոր է ներկայացնել լիարժեք պատկեր Երևանի խոսակցական լեզվի արդի վիճակի, խնդիրների, զարգացման միտումների վերաբերյալ:

հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով:

Հարցաթերթիկ

Վարչական շրջանները	<input type="checkbox"/> Աջափնյակ	<input type="checkbox"/> Ավան	<input type="checkbox"/> Արաբիր		
	<input type="checkbox"/> Դավթաշեն	<input type="checkbox"/> Էրեբունի	<input type="checkbox"/> Կենտրոն		
	<input type="checkbox"/> Մալաթիա-Սեբաստիա	<input type="checkbox"/> Նոր Նորք	<input type="checkbox"/> Նորք-Մարաշ		
	<input type="checkbox"/> Նուբարաշեն	<input type="checkbox"/> Շենգավիթ	<input type="checkbox"/> Քանաքեռ-Զեյթուն		
Կրթությունը	<input type="checkbox"/> տարրական	<input type="checkbox"/> միջնակարգ	<input type="checkbox"/> բարձրագույն		
Մասնագիտացումը ²⁴					
Զբաղմունքը					
Տարիքը	<input type="checkbox"/> մինչև 16	<input type="checkbox"/> 17-25	<input type="checkbox"/> 26-35	<input type="checkbox"/> 36-65	<input type="checkbox"/> 66 և ավելի
Մայրենի լեզուն	<input type="checkbox"/> հայերեն	<input type="checkbox"/> ռուսերեն	<input type="checkbox"/> այլ		
Ընտանիքում գործավոր հիմնական լեզուն	<input type="checkbox"/> հայերեն	<input type="checkbox"/> ռուսերեն	<input type="checkbox"/> այլ		
Հեռուստահաղորդումների և ընթերցվող մամուլի լեզուն	<input type="checkbox"/> հայերեն	<input type="checkbox"/> ռուսերեն	<input type="checkbox"/> այլ		
Պատճառը *					
Երևանցի լինելու տիպը	<input type="checkbox"/> բնիկ		<input type="checkbox"/> ոչ բնիկ		
Բարբառային պատկանելությունը *					

²⁴ *-ով դաշտերը լրացնել միայն անհրաժեշտության դեպքում:

ԳԼՈՒԽ 2

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐԸ

Մեր լեզուն ներկայումս գտնվում է գրականի և առօրյա խոսակցականի հակասությունների բարդ գործընթացում: Իրողությունն այն է, որ դրանց միջև այժմ հսկայական անջրպետ կա:

Հարցազրույց-հարցաթերթիկների և անկաշկանդ խոսքի ծայնագրությունների միջոցով ուսումնասիրվել և գրանցվել են բանավոր խոսքում հաճախակի հանդիպող բազմաթիվ շեղումներ ու խախտումներ, որոնք առկա են և՛ հնչյունական, և՛ բառագիտական, և՛ քերականական բոլոր մակարդակներում:

Երևանի խոսակցական լեզվի ուսումնասիրության մեջ ամենից առաջ մեր ուշադրությունն են գրավել հաճախակի հանդիպող հնչյունական այնպիսի երևույթներ, որոնք շեղվում են ուղղախոսական նորմից (ավելորդ հնչյունների գործածություն, անհրաժեշտ հնչյունների անկում, ոչ ճիշտ հնչյունափոխություններ և այլն):

Այսպես՝ խոսակիցների անկաշկանդ շփման ժամանակ, երբ խոսքը չի վերահսկվում, ավելի շատ են հնչյունական սխալները. որոշ հնչյուններ փոխում են իրենց որակը, թուլանում են կամ բոլորովին սղվում, նույնիսկ կարող են չհնչվել ամբողջական վանկեր, սակայն այս երևույթը չի խաթարում բանավոր խոսքի ընկալումը, քանի որ անմիջական հաղորդակցության ժամանակ խոսակիցներին արդեն հայտնի է իրադրությունը և խոսակցության նյութը, հետևաբար կիսատ ու անհստակ, ոչ ամբողջությամբ արտասանված բառը լիովին հասկացվում է. խոսողներն իրար հասկանում են նաև շարժումներով, դիմախաղով ու հնչերանգով:

Ձայնավորների սղումը կամ անկումը հայերենում մեծ մասամբ արդյունք է կից վանկերի նույնական ձայնավորների կամ նույնական վանկերից մեկի ամփոփման, որն էլ արտահայտվում է դրանց անկումով: Բերենք ձայնավորների անկման մի շարք օրինակներ, որոնք, սակայն, նույն արժեքը չունեն. դրանց մի մասը տարածված երևույթ է, իսկ մյուսը՝ ոչ, թեև հատուկ է խոսակցական լեզվին:

Կան մեծ հաճախականություն ունեցող բառեր, որոնց մեջ տեղի է ունենում **ու** ձայնավորի լիակատար սղում՝ անկում, օրինակ՝ *ցտեսություն*-ը մեծ մասամբ հնչվում է **ցրտեսյուն//ստեսյուն**, *շնորհակալությունը*՝ **շնորակալյուն**, *գործունեությունը*՝ **գործնեություն**, այդպես նաև՝ **ուսցիչ** (ուսուցիչ), **ուսչական** (ուսուցչական), **խօսակցյուն** (խոսակցություն) և այլն: Ինչպես նկատեցինք, երբեմն խոսքի արագ տեմպում հանդիպում են այնպիսի սղումներ, երբ ձայնավորի հետ միասին սղվում են նաև այլ հնչյուններ:

Առօրյա խոսքում **ու** ձայնավորը երբեմն հնչյունափոխվում է **ա**-ի, ինչպես՝ **դիմացկանություն** (փոխ.՝ դիմացկունություն):

Ի ձայնավորը կարող է վերածվել **ը**-ի *պիտի*, *հիմի*, *իմչի* և այլ բառերում, ինչպես՝ **պ{ը}տի**, **հ{ը}մի**, **{ը}նչի** և այլն:

Ի ձայնավորի անկման դեպքերից են՝ **բար լուս**, երբեմն նույնիսկ՝ **բայ լուս** (բարի լույս), **չեն մանում** (չեն իմանում), **օրգինալ** (օրիգինալ), **լգել** (լիզել) և այլն:

Սրան հակառակ՝ ավելորդ **ի**-ով են արտաբերվում *լինելություն*, *պատկանելություն* բառերը, ինչպես՝ **լինելություն**, **պատկանելիություն**:

Բավական տարածված է որոշ բառեր առանց **ա** ձայնավորի գործածելը, ինչպես՝ **բարյացկամ** (բարյացակամ), **գնհատել**, **գնհատական** (գնահատել, գնահատական), **գողնալ** (գողանալ), **դաստիարակ** (դաստիարակ), **սնկանալ** (սնանկանալ) և այլն:

Ա ձայնավորի ավելորդ գործածությունն ենք նկատում **ըստ արժանավոյն** բառում (փոխ.՝ ըստ արժանվոյն), ինչպես նաև *յոթանասունի* համաբանությանը սխալ տարածված **ութանասուն** ձևում (փոխ.՝ ութսուն) և այլն:

Երբեմն **ա** ձայնավորը հնչյունափոխվում է **ո**-ի, որը ընդունելի չէ, սխալ է, ինչպես՝ **մոտովորապես** (փոխ.՝ մոտավորապես):

Ո ձայնավորի անկման դեպքերից են՝ **կաննավոր** (կանոնավոր), **կաթղիկոս** (կաթողիկոս):

Ռուսերենի *-որ* վերջավորությունն ունեցող բոլոր գոյականները հայերենի խոսակցական տարբերակում սովորաբար արտասանվում են *-ըր*, ինչպես՝ **դիրեկտոր-դիրեկտ[ը]ր**, **Վիկտոր-Վիկտ[ը]ր**, **ռեկտոր-ռեկտ[ը]ր**, **պրոֆեսոր-պրոֆես[ը]ր** և այլն:

Ե ձայնավորի ավելորդ գործածություն ենք տեսնում **տարեկետում** բառում (փոխ.՝ տարկետում. այն *տարի* բառի հետ կապ չունի, բառացի նշանակում է «նշանակված ժամանակից դուրս՝ տար»):

Երբեմն **ե** ձայնավորի հնչյունափոխված սխալ ձևերի ենք հանդիպում, ինչպես՝ **ներեղություն** (փոխ.՝ ներողություն):

Ը ձայնավորի ոչ շեշտակիր լինելը հաճախ վերջինիս անկման, տեղափոխության, ինչպես նաև հավելման պատճառ է դառնում, ինչպես՝ **գ[ը]տ[ը]նվել** (փոխ.՝ գ[ը]տն[ը]վել), **երդ[ը]վել** (փոխ.՝ երդվել), **թաք[ը]նվել** (փոխ.՝ թաքն[ը]վել), **ժ[ը]յա[ը]տալ** (փոխ.՝ ժ[ը]յատալ), **կ[ը]րկ[ը]նել** (փոխ.՝ կ[ը]րկնել), **հայտ[ը]նվել** (փոխ.՝ հայտն[ը]վել), **հագ[ը]նվել** (փոխ.՝ հագն[ը]վել), **ծեռն[ը]պահ** (փոխ.՝ ձեռն[ը]նպահ), **ծեռն[ը]տու** (փոխ.՝ ձեռն[ը]նտու), **ք[ը]ն[ը]նել** (փոխ.՝ ք[ը]ննել) և այլն: **Ը** ձայնավորի հավելումներ կարող ենք հանդիպել նաև բառավերջում, ինչպես՝ **վեց[ը] հոգով**, **ութ[ը] տարեկան** և այլն, բայց երբ հարկավոր է ասել *տասը* (*տասը տարեկան*, *տասը հազար*, *տասը մարդ* և այլն), արտասանում են **տաս**՝ **ը** ձայնավորի անկումով:

Արտասանական ոլորտում ակնհայտ է երկհնչյունների վերածումը պարզ ձայնավորների (հատկապես՝ *այ-է* անցումը և՛ բառասկզբում, և՛ բառամիջում): Այստեղից էլ *այս*, *այր*, *այն* ցուցական դերանունների և նրանցից կազմված բաղադրյալ ձևերի խոսակցական տարբերակները՝ **ես**, **էր**, **էն**, **եսպես**, **էրպես**, **էնպան**, **էստեղ** և այլն, ինչպես նաև՝ **հեր**, **մեր**, **քուր**, **լիս//լուս**, **գեղ**, **գեղացի** և այլն:

Գրական լեզվի խոսակցական տարբերակում բաղաձայնների անկումը կամ թուլացումը ավելի քիչ է հանդիպում, քան ձայնավորների անկումը,

քանի որ բառի հնչյունական պատկերի հիմնական ժանրությունը ընկնում է բաղաձայնների վրա:

Խոսակցական լեզվում բաղաձայների անկումը մի շարք դեպքերում պայմանավորված է բառի մեջ հանդիպող բաղաձայնների բնույթով: Երբ իրար են հաջորդում արտասանության նույն տեղն ունեցող կամ արտասանության տեղով մոտ հնչյուններ, ապա հնչումը խիստ դժվարանում է, և անկաշկանդ, ազատ խոսքում այդ խմբի հնչյուններից նախորդողը կա՛մ շատ թույլ է արտասանվում, որ հազիվ լսելի է, կա՛մ բոլորովին ընկնում է, ինչպես՝ *պաճառ, անպաճառ, պաճեն, մաչելի, Սկրչյան* բառերն արտասանվում են առանց *տ*-ի: Այս երևույթը կարելի է բացատրել նաև խոսքի արագ տեմպով, ինչպես՝ *չաշատ* (շատ-շատ) բառի արտասանությունը:

Այդպես նաև խոսքի արագ ընթացքի ժամանակ երբեմն սղվում է *ժ* բաղաձայնը, ինչպես՝ *երաշտական* (փոխ. երաժշտական), *բշկական* (փոխ. բժշկական) և այլն:

Խոսակցական լեզվում *դ* բաղաձայնի հավելում է նկատվում մի շարք բառերում, ինչպես՝ *սանդր, մանդր, ծանդր*:

Բ-ի անկումը մի շարք դեպքերում ունի ժողովրդախոսակցական բնույթ, ինչպես՝ *դուս արի* (դուրս արի), *աղջըկեք* (աղջկերք), *տղեք* (տղերք), *յեփ օր* (երբ որ) և այլն:

Ր բաղաձայնի անկում շատ է լինում *երկրորդ* թվականի արտասանության ժամանակ, ինչպես՝ *եկրորդ*, ինչպես նաև հրամայական եղանակի եզակի թվի բայերը գրեթե բոլորն արտասանում են առանց *ր*-ի, ինչպես՝ *գրի ղ-գրի՛, խոսի ղ-խոսի՛*, այդպես նաև՝ *նստի՛, կանգնի՛, մաքրի՛* և այլն:

Ր-ն երբեմն *ռ* է հնչվում, որն ընդունելի չէ, ինչպես՝ *մա{ռ}տ, ա{ռ}ծիվ, մրմուն-մ{ռ}մուն, մրցել-մ{ռ}ցել, հարբել-հա{ռ}բել, վերնագիր-վե{ռ}նագիր, Ա{ռ}մեն, Ա{ռ}ման*: Սա ոչ միայն ռուսախոսների շրջանակում է տարածված, այլև հայկական կրթություն ունեցողների, նույնիսկ հայերենի մասնագետների: Փոխառյալ բառերում նույնպես շատ հաճախ *ռ* է հնչվում, ինչպես՝ *օպե{ռ}ա, դ{ռ}ամա, սպո{ռ}տ, էնե{ռ}գիա* և այլն: Խոսակցական լեզվում երբեմն *ռ*-ն է հնչվում *ր*, ինչպես՝ *պառկել-պա{ր}կել*:

Երևանի լեզվին հատուկ է նաև *ղ* բաղաձայնի անկումը, ինչպես՝ *ես կոմ* (կողմ) *արի, էն կոմով* (կողմով) *բեր, թո* (թող) *նստի, ըստե* (էստեղ//այստեղ), *մի տե* (տեղ) *պահի, ըտե* (էտեղ//այդտեղ), *ընդե* (էնտեղ//այնտեղ) և այլն:

Բաղաձայնների անկման երևույթներ կարող են երևան գալ բառավերջում, ինչպես՝ *լ* և *ս* բաղաձայնների անկումը՝ *չեմ գալի* (չեմ գալիս), *չես բերե* (չես բերել), *չի տվե* (չի տվել), *չի ասե* (չի ասել), *չի տալի* (չի տալիս), *որտի՛ց ես ճարե* (որտեղի՛ց ես ճարել), *բան ա՛ պատահե* (պատահել) և այլն: Այս երևույթը գրական նորմի տեսանկյունից ընդունելի չէ և հատուկ է միայն ժողովրդախոսակցական լեզվին: *Լ* բաղաձայնի անկումով է արտասանվում *փայլիլել* (փայլվիլել) բառը:

Ս բաղաձայնի հավելումով է արտասանվում *երկուս* բառը. պետք է հիշել, որ ոչ թե *երկուս*, այլ *երկու* (ս-ով ձևը գործածվում է, երբ թվին մասնիկ կամ բառ է ավելանում, ինչպես՝ *երկուսով, երկուսուկես* և այլն):

Ս բաղաձայնը *հիսուն* բառում *վաթսուն* {*վացուն*}-ի համաբանությանը արտասանվում է *ց* {*հիցուն*}:

Նկատելի է բառավերջի *ս*-ի ձայնեղացում՝ հատկապես փոխառյալ բառերում, ինչպես՝ *ֆոկուս-ֆոկուս{գ}, սոուս-սուս{գ}, թիֆլիս-թիֆլի{գ}, գլորուս-գլորուս{գ}, ավտորուս-ավտորուս{գ}* և այլն:

Ն բաղաձայնի անկումով են արտասանում հետևյալ բառերը՝ *առաջի, վերջի*, ինչպես՝ «*Առաջի* (առաջին) անգամ են տեսնում ըսենց բան», «*Վերջի* (վերջին) անգամ իրենց տանն են տեսել», կամ համատարած սխալ է *պատճե* բառը (փոխ.՝ պատճեն) և այլն:

Բայց ահա որոշ բառեր էլ արտասանվում են **Ն** բաղաձայնի հավելումով, ինչը ընդունելի չէ, ինչպես՝ *ավելնորդ* (ավելորդ), *կանանչ* (կանաչ), *կանանցի* (կանացի), *մանրունք* (մանրուք), *ճանանչել* (ճանաչել), *ամանչել* (ամաչել), *անձեռնոցիկ* (անձեռոցիկ), *արտասունք* (արտասուք), *մանրունք* (մանրուք), *ընձեռնել* (ընձեռել), *մարմանք* (մարմաչ) և այլն:

Հայտնի է, որ **ե** և **ո** տառերը բառամիջում՝ բաղաձայնից (բացառություն են կազմում **կ** և **չ** մասնիկով սկսվող բայածները, որոնց վրա արտասանական այս օրենքը չի տարածվում) հետո, **է** և **օ** պետք է արտասանվեն, սակայն խոսակցական լեզվում դրանք սխալ են արտասանվում, ինչպես՝ *անլլելանելի, քսանլլերկու, անլլորոշ, անլլողնաշար, անլլորակ, բարլլորակ, չարլլորակ* և այլն:

Ազատ, անկաշկանդ խոսքում շատ են հնչյունների առնմանության, տարնմանության դեպքերը, հնչյունների համընկման հնարավորությունները: Տեղի է ունենում հնչյունների տարնմանում ըստ արտաբերման տեղի, ինչպես՝ *անփոփում* (փոխ.՝ ամփոփում), *անբիոն* (փոխ.՝ ամբիոն), *անբարիշտ* (փոխ.՝ ամբարիշտ), *Սնբատ* (փոխ.՝ Սմբատ), *շանփուր* (փոխ.՝ շամփուր), *ապստանք* (փոխ.՝ ապստամք), *անբաստանյալ* (փոխ.՝ ամբաստանյալ), *ամպայման* (փոխ.՝ անպայման), *ամմիջապես* (փոխ.՝ ամմիջապես):

Շատ մարդիկ երբեմն անհասականալի պատճառներով սխալ են արտասանում մի շարք բառեր՝ **ն**-ի փոխարեն **մ** հնչյունը գործածելով, ինչպես՝ *կոկոմ* (փոխ.՝ կոկոն), *ինչքամ* (ինչքան):

Ս բաղաձայնի հավելում կա *իրավմամբ* (փոխ.՝ իրավամբ) բառում:

Հ հնչյունի հավելումով են արտասանում *ելնել, ելա* բառերը, ինչպես՝ *հելնել, հելա, հ*-ի անկումով՝ *նախագա* (նախագահ), *հաշվապահ* (հաշվապահ), *հերթապահ* (հերթապահ):

Յ բաղաձայնի հավելում կա *գլյազար* (գազար), *սյուննյակ, հորեղբոնյր* բառերում: Դրափոխության հետևանքով երբեմն **յ** բաղաձայնը հայտնվում է ոչ իր տեղում, ինչպես՝ *աղուսյակ* (փոխ.՝ աղուսակ), *սույնակ* (փոխ.՝ սյունակ) և այլն:

-Ույժ, -ույշ, -ույծ հնչյունակապակցություն ունեցող բառերում առկա է **յ**-ի անկում, ինչպես՝ *ակնաբույժ* (ակնաբույժ), *զգուշ* (զգույշ), *տույժ* (տույժ), *մեղվաբույժ* (մեղվաբույժ): Այս երևույթը նույնպես բանավոր լեզվում լայն տարածում ունի: Առանց **յ**-ի արտասանությունն այնքան է արմատացել, որ արդեն պետական հիմնարկություններում են այդպես գրում՝ *ատամնաբույժ, մանկաբույժ* և այլն:

Շատ տարածված է նաև **ույ** երկհնչյունի պարզեցված արտասանությունը հետևյալ բառերում՝ **արուն, ծուն, սառուց, ալուր, կապուտ, լուս** և այլն:

Եվ հակառակ երևույթը կա. երբ պետք է **ույ** երկհնչյունը վերածվի **ու** պարզ ձայնավորի՝ կանոնի համաձայն, սխալմամբ արտասանվում է **ույ**, ինչպես՝ **գույնավոր** (փոխ.՝ գունավոր), **գույզընկեր** (փոխ.՝ գուզընկեր), **թուլանալ** (փոխ.՝ թուլանալ), **ծուլանալ** (փոխ.՝ ծուլանալ), **կույրանալ** (փոխ.՝ կուրանալ), **համբույրել** (փոխ.՝ համբուրել), **մշակութային** (փոխ.՝ մշակութային) և այլն:

Թեքված ձևերում **վ** հնչյունը առանձին դեպքերում արտասանվում է **Ֆ՝ հաքաֆ** (*հագավ*), **էկաֆ** (*եկավ*), **բերէլօֆ** (*բերելով*), **աֆսոյօֆ** (*ավտոյով*):

Երբեմն անտեղի քմայնացվում է դասական թվականի **-երորդ** վերջածանցին նախորդող **թ** հնչյունը և լսվում է **ց**, ինչպես՝ **յո[ց]երորդ, ու[ց]երորդ**:

Երևանի խոսակցական լեզվին հատուկ են նաև բաղաձայնների արտասանական որոշ տեղաշարժերը, հատկապես առանձին բարբառների և խոսվածքների ազդեցության հետևանքով (ձայնների շնչեղացում, խլացում և հակառակը). սրանք հիմնականում անհատական բնույթ ունեն, ինչպես՝ **ընկեր-ընգեր, ընկնել-ընգնել, հանկարծ-հանգարծ, գդալ-քթալ, գտնել-քթնել, գցել-քցել, խրտվիլակ-խրթվիլակ, երեկ-էրեգ, հրիկուն-հրիգուն, կիպ-քիփ, փտել-փթել, սուտ-սութ, սպանախ-սպանաղ, վարկաբեկել-վարքաբեկել, ախորժակ-ախոռժակ, լրիվ-լռիվ, ճանծ-ճանք, ծունկ-ծունգ** և այլն:

Շատ տարածված է հնչյունների *դրափոխությունը*, ինչպես՝ **համբուր** (փոխ.՝ համբուր), **ծույն** (փոխ.՝ ձյուն), **հույր** (փոխ.՝ հյուր), **մույս** (փոխ.՝ մյուս), **ինքնուրյուն** (փոխ.՝ ինքնուրույն), **ողջյուն** (փոխ.՝ ողջույն), **հույթ** (փոխ.՝ հյութ), **զոնքաչ** (փոխ.՝ զոքանչ), **բախշել** (փոխ.՝ բաշխել), **սիպտակ** (փոխ.՝ սպիտակ), **բալանի** (փոխ.՝ բանալի), **ալանի²⁵** (ոչ արդի իմաստով) (փոխ.՝ անալի), **ցելաֆոն** (փոխ.՝ ցելոֆան) և այլն:

Խոսքի արագ արտաբերման ընթացքում հնչյուններից բացի կարող են սղվել նաև վանկեր, ինչպես՝ **խօթթավոր** (խորհրդավոր), **խօթթակցել** (խորհրդակցել), **շնորկալցյուն** (շնորհակալություն) և այլն: Երբեմն էլ հնչյունական սղումները կարող են այն աստիճանի հասնել, որ բառից մնա մի փոքր մաս, ինչպես՝ **որովհետև՝ որտև, մորաքույր՝ մոք, հորաքույր՝ հոք, անձնանուններում՝ Վարդան՝ Վրթո, Գառնիկ՝ Գոնո, Բաղդասար՝ Բղդո** և այլն. այսպիսի դեպքերում մեծ մասամբ սղվում են ձայնավորները:

Պետք է խոսել նաև ռուսերենից հայերենին մացած բառերի՝ ռուսերենի մեմոությամբ արտաբերելու սովորության մասին, ինչպես՝ **Մոսկվա-Մասկվա. կոնֆետ-կանֆետ, շոկոլադ-շակալադ, քսեռքս-քսեռքքս, տորթ-տոռծիկ, կոնպոզիտոր-կամպազիտոր, պոլիկլինիկա-պալիկլինիկա**, այդպես նաև՝ **ծիտան, պոլիծեսնիկ, կոլեկծիվ, պրակծիկա, ֆակուլծետ, մեծիա, ռաձիո, ձիպլոմ, ակածմիա, Ձինամն** («տ»-ի փոխարեն՝ «ծ» և «դ»-ի փոխարեն՝ «ձ»): Ավելին, այս սկզբունքը հետևողականորեն կիրառվում է նաև մեծ թվով հայերեն բառերի նկատմամբ,

²⁵ *Ալանի* նշանակում է թզի կամ դեղձի չրից պատրաստված քաղցրավենիք:

այսինքն՝ ոչ միայն՝ **սանժիմետր** և **պոլիծիկա**, այլև՝ **ճարահածյալ**, **ածյան**, **պածյան**, **մածյան**, **առավոծյան**, **արևմծյան**, **Արարածյան** և այլն, ոչ միայն **Վլաձիկ**, **Վալոձյա**, **Չիանա**, **Էձիկ կամ Արծյոմ**, այլև **Ծիգրան**, **Քագրածյան**, **Քրուծյան**, **Գալսծյան**, **Լենինգրածյան**, **Քայածյան**:

Բանավոր խոսքի մեջ մի քանի այլ նմանատիպ շեղումներ էլ կան: Կարելի է առանձնացնել բառերի մի փոքր խումբ, որտեղ «ց»-ն բռնում է «դ»-ի տեղը. **արցյունք**, **արցյոք**, **բրցյա**: Ավելի հաճախադեպ է «թ»-ի փոխարինումը «ց»-ով **-ություն** (**-ության**, **-ությամբ**) վերջավորության մեջ, ինչպես՝ **հաջողուցյուն**, **առողջուցյուն**, **հանրապետուցյուն**, **արագուցյուն** և այլն: Այսօր շատ քիչ է հավանականությունը տեսնել մեկին, որը նման դեպքերում արտաբերում է «թ», այլ ոչ թե «ց»: Այսպես խոսում են գրեթե բոլորը լրագրողն ու հեռուստահաղորդավարը, բանաստեղծն ու գրականագետը, ուստի անիմաստ է թվում այս կիրարկման՝ որպես շեղման և այս տեղում «թ» հնչյունի իրավունքի վերականգնման մասին խոսելը: Ակնհայտ է, որ այս խոսելաձևը գալիս է դպրոցից և ընտանիքից (չպետք է թերագնահատել նաև հեռուստատեսության դերը), այն այժմ նորմ է, որին պետք է վարժվեն նրանք, ովքեր ցանկանում են «լինել ինչպես բոլորը»:

ԳԼՈՒԽ 3

ԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Բառը լեզվի հիմնական նյութական բաղադրիչն է, նրա ատաղձը, հաղորդակցման ամենակարևոր լեզվական միավորը, ուստի և լեզվական ցանկացած ոլորտի համար խիստ կարևոր ու անհրաժեշտ է բառի ու ընդհանրապես բառապաշարի ուսումնասիրությունը:

Հայտնի է, որ բառը խոսքում, նախադասության մեջ հանդես է գալիս իր երկու հիմնական գործառույթներով կամ հատկանիշներով՝ անվանողական դերով և հուզարտահայտչական երանգավորմամբ: Յուրաքանչյուր լեզվի բառապաշարն ուսումնասիրելիս նախ անհրաժեշտ է պարզել տարբեր բառաշերտերի արտահայտչական դերն ու ոճական երանգավորումը, քանի որ ոճական գործառույթ կարող են ունենալ համազգային լեզվի բառապաշարի ամենատարբեր շերտերը:

Երևանի առօրյա-խոսակցական լեզուն տարբերակվում է նաև իր բառակազմական-բառապաշարային առանձնահատկություններով: Խոսակցական լեզվի բառապաշարը առավել լայն ժողովրդական զանգվածների առօրյա հաղորդակցման միջոց է, որ դրսևորվում է լեզվի բանավոր գործառության ոլորտում՝ հիմնականում՝ զրույցների և երկխոսությունների ձևով: Բառապաշարի ժողովրդախոսակցական շերտը լեզվի մշտապես փոփոխվող և զարգացող ոլորտն է, որտեղ փոխադարձաբար ներգործում են և՛ լեզվական, և՛ արտալեզվական, և՛ գրական ու ոչ գրական, և՛ թե տարբերակային ձևերի տարրերն ու իրողությունները: Ամենից առաջ բառապաշարի այս հիմնական շերտը կազմում են կիրառական մեծ հաճախականություն ունեցող ընդհանուր խոսակցական, առօրյա-կենցաղային բառերը, որոնց շնորհիվ ապահովվում է առօրյա, սովորական հաղորդակցումը: Սրանք **համագործածական բառերն** են, որոնք կազմում են բառապաշարի ամենաստվար մասը, հանդես են գալիս համազգային լեզվի բոլոր ոլորտներում, ունեն կիրառության մեծ հաճախականություն, բառապաշարի հիմքն են կազմում և ընկած են հաղորդակցման գործառույթի հիմքում գործառական բոլոր ոճերում, չունեն կիրառական որևէ սահմանափակում: Այս բառերն ընդհանուր են և գործածվում են բոլոր նրանց կողմից, ովքեր խոսում են ժամանակակից արևելահայերենով՝ անկախ նրանց զբաղմունքից, կրթությունից, հասարակության մեջ ունեցած դիրքից, տարիքից, սեռից և այլ հանգամանքներից: Դրանք կազմում են լեզվի բառապաշարի այն մասը, առանց որի հնարավոր չէ հայերեն խոսել, այսինքն՝ կենսականորեն անհրաժեշտ բառեր են առօրյա հաղորդակցման համար, ինչպես՝ **աչք, բերան, ոտք, ձեռք, սիրտ, տուն, ծառ, հաց, ջուր, շատ, հեռու, օր, ցերեկ** և այլն:

Այսպիսով՝ համագործածական բառաշերտի մեջ մտնում են առօրյա, մարդուն շրջապատող աշխարհի կենցաղային առարկաներ, երևույթներ, հատկանիշներ, գործողություն արտահայտող, դրանք անվանող բառեր,

դերանուններ, թվականներ և այլն, որոնք բնորոշ են լեզվի գործառական բոլոր ոլորտներին: Սակայն պետք է նշել, որ ամենասովորական բառերն էլ, ինչպիսիք են՝ *հաց, ջուր, քար* և այլն, կարող են խոսքի մեջ ձեռք բերել այլ իմաստներ, դառնալ ոճաբանորեն նշույթավոր միավորներ, ինչպես՝ **հացից գրկել, ասածները ջրել, քար սիրտ ունենալ** և այլն:

Սեզանից ամեն մեկն ունի իր բառապաշարը, բայց ոչ միանման ու միատարր, ոչ էլ հավասարապես հարուստ: Դա պայմանավորված է տարբեր հանգամանքներով՝ մարդու կրթության, ընտանեկան ու դպրոցական դաստիարակության աստիճանով, ապրած միջավայրով, մասնագիտության բնույթով և այլն: Ինչ խոսք, կարդացած ու զարգացած մարդու բառապաշարն ավելի հարուստ է:

Մարդիկ իրենց ծանոթ բոլոր բառերը չէ, որ կիրառում են իրենց խոսքում կամ գիտեն դրանց իմաստներն ու նրբիմաստները, ուստի և չեն կարող հավասար հաջողությամբ գործի դնել առօրյա կյանքում: Կան բազմաթիվ բառեր, որ կարդալիս ու լսելիս լավ հասկանում ենք, բայց չենք գործածում: Դրանք այն բառերն են, որ տեղ ունեն մեր ոչ թե գործում, այլ ոչ գործուն բառապաշարում:

ՃՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐՆ ՈՒ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Երևանի խոսակցական լեզվի բառապաշարը դասակարգելիս հաշվի ենք առել այն հանգամանքը, որ բառապաշարի ոչ բոլոր միավորներն են հավասարապես գործածվում հասարակության բոլոր անդամների կողմից: Այսինքն՝ կան բառեր կամ բառախմբեր, որոնց կիրառությունն ունի հասարակական սահմանափակում. դրանք հատուկ են որոշակի ոլորտների ու գործածական են տվյալ հանրության որոշակի խմբերի կողմից: Այդպիսի բառերից են բարբառային բառերը:

Բարբառն ազգային լեզվի տարածքային տարբերակ է, հատկանշվում է հատուկ բառապաշարով, հնչյունական, քերականական ու ոճաբանական յուրահատկությամբ և գործածվում է որոշակի տարածքի կամ հասարակության շրջանակներում: Այս բառերը բնականաբար, կիրառության սահմանափակ ոլորտ ունեն և սովորաբար անվանում են այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք իրենց համարժեքներն ունեն նաև լեզվի ընդհանրական շերտի մեջ:

Բարբառային բառերը սովորաբար առանձնանում են բառապաշարի գրական շերտից, հիմնականում գործածվում են առօրյա խոսակցական լեզվում և բնորոշ չեն գիտական, պաշտոնական, գրասենյակային ոճերին:

Ըստ Ս. Մելքոնյանի՝ բարբառային բառերն ու ձևերն իրենց ելությամբ, գրական նորմի նկատմամբ ունեցած առնչությամբ միատեսակ չեն, դրանց մի մասը տեղային բնույթի է, ամմատչելի հանրության համար և բավականին հեռու գրական նորմից, իսկ մյուսը համեմատաբար ավելի ընդհանրական նշանակություն և կիրառություն ունի²⁶:

²⁶ Ս.Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 107:

Կան շատ բարբառային բառեր, որ թեև ունեն իրենց համարժեքները գրական հայերենում, սակայն խոսողները նախընտրում են օգտագործել բարբառային բառը. պատճառն այն է, որ դրանք մատչելի են ամենքին և ունեն երանգային տարբերություններ, ինչպես՝ չկա այնպիսի բառ, որ կարողանա լիարժեք փոխարինել **ջան** բառին, կամ, օրինակ, մի շարք վառ ու կենդանի արտահայտություններ, հարադիր բայեր (**ծեռ քաշել, ձեռքըրը ծալել, ձեռքին նայել, ձեռքից գալ**), որոնք գալիս են բարբառներից ու թեև ունեն գրական համարժեքները, սակայն առանձնանում են դրանցից իրենց երանգային տարբերությամբ:

Երևանի խոսակցական լեզվում հաճախակի գործածվում են այնպիսի բառեր, որոնք դեռևս ամբողջապես չեն ձուլվել գրական լեզվին, և բարբառային երանգը, այնուամենայնիվ, զգալի է թե՛ կազմությամբ, թե՛ իմաստով և թե՛ ոճական կիրառությամբ, ինչպես՝ **բաժինք, էգուց, դմբո, աչքալուսանք, իրասածի, տնփեսա, սղկել, մոգոնել, լպստել, դնգատել, ժածիկ** և այլն: Շատ բառեր էլ իրենց իմաստներով և ոճական կիրառությամբ այլ առանձնահատկություններով կանգնած են գրական լեզվի եզրին, մտնում են խոսակցական բառապաշարի մեջ, ինչպես՝ **թրփոշ, բարուր, գոնչո, ճիժ, ուզվոր, դանդալոշ** և այլն:

Երևանի խոսակցական լեզվում հանդիպող բարբառային բոլոր բառերը նույն դերն ու նշանակությունը, նույն ակտիվությունը չունեն: Որոշ բառեր ավելի մեծ հաճախականությամբ են կիրառվում, քան մյուսները: Այսպես՝ **աղաթ, բալքի, ամբաղ-գամբաղ, ափաշքյարա, էրուց, էրկու բերան, ըսկի, թաք, թամամ, թոզ ու դուման, հերս, հերստտել, դոչաղ, յարաք, նամարդ, օղորթ** և այլն:

Բարբառային բառեր հատկապես շատ ենք հանդիպում մեծահասակների խոսքում, ինչպես՝ **դուդուշ անել (բրդուճ անել), դըբա, դատարկուն, լազաթին** (լավ), **լաչակ, դաչաղություն, չուրի, սաբաք, օրշնանք** և այլն, կամ նման արտահայտություններ՝ «Մեծ թոռս **տասըմն ա**, փոքրս **ութըմն ա**», «Լավ մարթ ա առե, իրար **բըռըմ են**» (համապատասխան զույգ են), «Դեյրես լվացի, **նստավ** (իջավ, ցածրացավ)», «Տասը **բերան** են պահըմ» (հոգի, անձնավորություն), «Հորն ա **քաշե**» (նմանվել), «Հորիցը **քաշվըմ ա**» (ամաչել), «**Քաշի**, տես ինչքա՞ն ա» (կշռել), «Ի՛նչ ասես **քաշել են** դրա երեսիցը» (կրել) և այլն:

Իհարկե, ինչպես նկատեցինք, դիտված որոշ բարբառային բառեր ժողովրդախոսակցական բառերի մեջ են ընդգրկվում այժմ, և դժվար է դրանց սահմանները հստակ որոշել, քանի որ շատ բառեր մի կողմից հարում են խոսակցականին, մյուս կողմից՝ բարբառայինին, ինչպես նաև՝ **բիբար, բմբուլ, բոլ, դիթ, թարս, թարսել, թրաշել, կնիկ, ճար, չոլ, պուճուր, տնագ անել, քյասիթ, էրեխով, թալակ, թառլան, չափար, ջիվան, ջոթ, ռանգ, տռուզ** և այլն:

Ժողովրդախոսակցական բառերը, ի տարբերություն բարբառային բառերի, տարածքային մեղ սահմանափակում չունեն, ավելի մատչելի են տարբեր բարբառներով խոսող հանրությանը: Ժողովրդախոսակցական բառաշերտը կիրառվում է առօրյա խոսակցական ոլորտում: Այս շերտին բնորոշ է հուզաարտահայտչական երանգավորում ունեցող բառերի առատությունը, որոնք բանավոր խոսքին հաղորդում են աշխույժ ու կենդանի

երանգ: Այս բառաշերտում մեծ տեղ են գրավում բարբառներից եկող և այժմ էլ բարբառներում գործածական, սակայն ժողովրդախոսակցական ոճին բնորոշ մի շարք բառեր ու բառակապակցություններ, ինչպես և դարձվածային կապակցություններ ու արտահայտություններ, օրինակ՝ **ալ, աշխարհք, բոյ, թուշ, խակ, պոռշ, ջուխտ, խելառ, բերանի համ, աչքին թոզ փչել, ախ բաշել, բկին կանգնել, խելքի տոպրակ, շան օրի ընկնել, յուլա գնալ** և այլն: Շատերն են այսօր հակված ժողովրդախոսակցական և բարբառային լեզվամիջոցներ օգտագործելու, և հազիվ թե նրանց համար դրական դեր կատարեն գրական լեզվի պարտադիր կանոնները: Այսպես՝ ամօրյա խոսքում հաճախ ենք հանդիպում **ես, էդ, էն** և սրանցից կազմված ձևերը՝ «**էն ժամանակվա ամեն ինչն ուրիշ էր**», «**էդքան պետք չէր կտրել**», «**ես էլ մեր տունը**», **հեր ու մեր՝ «Յերս տանը չի»**, «**Ա՛յ մեր, ի՞նչ աս էղել**», «**Յե՛ր քան, ու ի՛նչ ես**» և այլն, **ախպեր, ախչի, արա՛՝ «Չէ, ախպե՛ր քան, պետք չի»**, «**Ախչի՛, ի՛նչ էղար**», «**Արա՛, էտ ո՞վ աս գանգում**» և այլն, **հա, չէ՛՝ «Յա՛, էղպես էլ կանենք»**, «**Չէ՛, էտ մեկը չէղավ**» և այլն, նաև բազմաթիվ ուրիշ ժողովրդախոսակցական ու բարբառային ձևեր, ինչպես՝ **պետքս չի, ծիշտ չի, հայրա, իշի փալան, ձեռ, եսիմ, հա քան, ինչ կնիկ աս** և այլն:

Հաճախակի են գործածվում նաև՝ **-ակ, -ուկ, -իկ (-լիկ)** փաղաքշական, փոքրացուցիչ ածանցները, օրինակ՝ **ճատիկ, սևուկ, ծուտիկ, ծագուկ**, ինչպես նաև՝ փոխառյալ **-չիկ, -չո** մասնիկները՝ **Արմանչո, Վահանչիկ, Սուրենչո, Էլենչո, Սարտինչո** և այլն:

Վերոհիշյալ բոլոր բառերը համեմատաբար ընդհանրական նշանակություն և կիրառություն ունեն²⁷, գործածվում են ժողովրդական ավելի լայն զանգվածների կողմից, ունեն ավելի լայն ընդգրկում, տեղայնացված չեն: Այսպիսով՝ սրանք ոճական արժեքով լեզվական տարբեր իրողություններ են, թեև նույն են իրենց ժողովրդական խոսքի երանգներով:

Իհարկե, այս սկզբունքը չի կարելի կիրառել բոլոր բառերի նկատմամբ, և հենց սա է պատճառը, որ երբեմն միևնույն բառը հանդիպում ենք և՛ ժողովրդախոսակցական, և՛ բարբառային բառաշերտի մեջ:

Ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ առանձնանում են հուզաարտահայտչական երանգավորում ունեցող ցածր ոճի այն բառերը, որոնք ունեն որոշակի հասարակաբանական ոճական երանգ և, բնականաբար, ոճական նշույթավոր բառեր են, ինչպես՝ **սառուց, կապուտ, հեր, մեր, ախպեր, գել, լեն, ծեր, կայնել, ախչի, էրկու, իրեք, եսիմ, խի, յա, ընչի, ըտե, ըսքան, ըստուց, ընդուց, ով ասես, ինչ աս ըլե, քառսուն, հավթել, լողնալ, վախցընել, հիշըցնել, չի բերե, չի տալի, և վերջապես՝ ստեղ, ընդդդ, ըսենց, ըստից, ընդից, էթալ, տենալ, էս, էդ, էն, էսպես, էղպես** և այլն: Սրանցից շատերը ծագումով բարբառային են, սակայն հայոց լեզվի զարգացման ներկա փուլում գիտակցվում են որպես ժողովրդախոսակցական լեզվի իրողություններ²⁸ կամ հասարակաբանություններ:

²⁷ Ս. Մելքոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Ե., 1984, էջ 107:

²⁸ *Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն*, Ե., 1981, էջ 69:

Դրանց մեջ կան նաև բացասական կամ կշտամբական երանգ ունեցող բառեր, որոնց գործածությունը առավելապես բնորոշ է բառապաշարի խոսակցական շերտին, օրինակ՝ **անտաշ, բացբերան, փալաս, զգվոտոց, փչան, սսկվել** և այլն, իսկ մյուսներն էլ չեն համապատասխանում գրական նորմին և ունեն գեղեկաբանական երանգ, ինչպես՝ **լակել, սասկել, զխտկվել, բթվել, լափել, շնթոկել, տոզել, սֆաթ, քյաֆթառ** և այլն:

Քանի որ ժողովրդախոսակցական լեզուն ուղղակիորեն կապված է բարբառների հետ, ապա չի դադարում անընդհատ բարբառային իրողություններով համալրվելու գործընթացը: Այս բառաշերտի հիմնական կորիզն են կազմում մեր ժողովրդի կենցաղն ու սովորույթները անվանող բառերն ու արտահայտությունները (**աչքածակ, ազապ, բստրել, բոխչա, գիժ, գծվել, գժանոց, թուշ, թունդ, կոլոտ, կոնծել, հանաքջի, ծղվել, ծարել, մեռել, շոր, շորեղեն, պոռոշ, վռազ, փոշմանել** և այլն), ինչպես նաև հարադրավոր և կրկնավոր բարդությունները: «Հարադիր բառերը (այդ թվում կրկնավորները) հայերենի լեզվամտածողությանը ազգային երանգ տվող կարևոր միջոց են և առավել ցայտուն կերպով են արտացոլում մեր ժողովրդի՝ պատկերավոր արտահայտվելու անսպառ կարողությունները»²⁹: Այսպես՝ հաճախակի գործածվող հարադիր բառերից են՝ **գրագ գալ, կուշ գալ, փուլ գալ, շուռ գալ, շուռ ու մուռ գալ, շուռ տալ, շառ անել, տանուլ տալ, քացի տալ, երեսով տալ, թարգ տալ, միտքը բերել, թիփի անել, դարդ անել, յոլա տանել, թրև գալ, շունչ առնել, սիլի-բիլի անել, գլխով անել, աչքով անել, հալ ու մաշ լինել, ձեռ ու ոտ ընկնել, վրա տալ, երես թեթել, վերուվար անել, փետրահան անել, բմբլահան անել, տակնուվրա անել, հուպ տալ, սևերես անել, քեֆ անել, ման գալ, սաղ լինել, գոռ տալ, եփել-թափել** և այլն, կրկնավորներից՝ **խունջիկ-մունջիկ, հոնգուր-մոնգուր, ալան-թալան, սուսիկ-փուսիկ, մուշ-մուշ, կում-կում, պարապ-սարապ, քահ-քահ, շախով-շուխով, չեն ու չում, բիզ-բիզ** և այլն:

Երևանի խոսակցական լեզվում, ինչպես ցույց են տալիս հարցումները, հաճախ պարզ և զուգահեռ ձևերից նախընտրում են հարադրավոր ձևերը, ինչպես՝ **գործ անել** (աշխատել), **լաց լինել** (լացել), **ձեռ առնել** (ծաղրել), **կերուխում** (քեֆ, խնջույք), **տուն ու տեղ** (ընտանիք, օջախ) և այլն: Կան հարադրություններ էլ, որոնք իմաստային առումով գրական լեզվում չունեն իրենց համարժեք ձևերը, ուստի և հավասարապես գործածական են և՛ խոսակցական ոճում, և՛ գրական լեզվի տարբեր ոլորտներում, ինչպես՝ **յոլա գնալ, քսի տալ, յախու դնել** և այլն:

Այս խմբի մեջ հավասարապես կարող են առանձնացվել նաև բնածայնական բառերը, ձայնարկությունները, դարձվածներն ու դարձվածային արժեք ունեցող բառակապակցությունները (**ոտքը ընկնել, մեջքը կոտրել, լեզուն լալկվել, գլխի վրա տեղ ունենալ, մատին փաթթաթան սարքել, գլխին օյին խաղալ, հաշիվ տեսնել, հաշիվ մաքրել, համ նալին տալ, համ մեխին, բախտը բերել, ոտով-գլխով կորչել, բոյին մեռնել, տեղ ու դադար չլինել, աշխարհը չի քանդվի, պոչ խաղացնել, գլխին գոռ տալ, քամու բերանը տալ, խելքի տոպրակ, շեն մնալ, մի**

²⁹ Արտ. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Ե., 1970, էջ 48:

գլուխ ուտել//նայել, գլխին//խելքին զոռ տալ և այլն, ինչպես նաև առածներն ու ասացվածքները («**Գյուղ կանգնի, գերան կկտորի**», «**Ընկերովի մահը հարսանիք է**», «**Լեզվի ծակածին դեղ չկա**», «**Մի խելքը լավ է, երկուսը՝ ավելի լավ**», «**Փոս փորոզը ինքն ա ընկնում փոսը**», «**Տասը չափիր, նոր մեկը կտորիր**», «**Հարսի հաստ կոնքերով, փեսուն լավություն ա անում**», «**Կռիվ ա, փլավ չեն բաժանում**», «**Կու ժ, քեզ են ասում, կուլա՛, դու լսիր**» և այլն), անծօքներն ու օրհնանքները («**Հերդ էլ անհիծած**», «**Հողեմ գլուխդ**», «**Գյոռքեգյոռ ըլնես**», «**Ապրի արևդ**», «**Տա Աստված**», «**Աստված բարին կատարի**» և այլն) և խոսքային պատրաստի այլ կապակցություններ:

Բարբառների կամ առանձին խոսվածքների միջոցով բազմաթիվ բառեր խոսակցական լեզվին են անցել մի շարք արևելյան լեզուներից (թուրք-պարսկական և արաբական) և մեծ տարածում ունեն երևանի խոսակցական լեզվում, կազմում են նրա հասարակաբանական-խոսակցական բառաշերտը (երբեմն գործածվում են նաև գրական լեզվում, ինչպես՝ **ազիզ, ջան, քիզյար, չոբան, մուրազ, թասիք** և այլն): Մեր բոլոր բարբառները (այդ թվում՝ Արարատյան բարբառի ենթաբարբառներն ու խոսվածքները, որի հիման վրա կատարել ենք մեր ուսումնասիրությունը), բառային փոխառություններ են կատարել այլ լեզուներից: Հայտնի է այն հանգամանքը, որ հաճախ դժվար է լինում որոշել թե այս կամ այն բառը, ո՞ր լեզվից է փոխառված, այդ փոխառությունը կատարված է բուն լեզվից, թե՛ միջնորդաբար: Դրանցից շատերն այժմ երևանի խոսակցական լեզվում գործածվում են, ինչպես՝ պարսկերենից³⁰՝ **արբուռ, բազառ, բախտ, բալիշ, բախչա, բեթար, բեխաբար, բոստան, լազյան, լեշ, խամ, խիար, խումարբազ, հավես, հեշ, մահանա, մեյմուն, մուխտառ, չանա, չանգյալ, չոք, ջան, ջանավար, քիզյար, քիվան, ջուխտ, սթար, սինի, փեշ, փոշման, փուշ, քաչալ, քափ, քյաբաբ, քյալ, քյալա, քյամար, քոռ, քյորփա** և այլն, թուրքերենից՝ **ադաշ, ամազ, աման, արշին, բալա, բալքի, բայդուշ, բաջանադ, բիբար, բիլազուկ, բիլակ, բիջ, բիրիթ, բուդ, բուդ, բուլ, բողազ, բոյ, գյամ, գյոռ, գյորա, գյուլաշ, դալան, դաստա, դիլիմ, դոշ, դոշաբ, դոստ, դուզ, դուզգյունի, դուշման, զավզակ, զոռ, զոռբա, զուռնա, զհա ր, թազա, թայ, թավա, թոփալ, լայադ, լայադին, լաքա, խաշլամա, խարաբ, հունար, դայթան, դայիշ, դավուրմա, դափադ, դուշ, դոնախ, մախաթ, մադալ, յախու, յավաշ, յորդան, շալվար, չալմա, չադ, չարոխ, չափալախ, չաքուջ, չիբան, չոլ, պուճախ, ջանջալ, ջեյրան, սադ, սաս, սարսադ, ավադ, սվադչի, սուրու, սոյ, վազ գալ, փիս, փյուսքուլ, քյոմուր, քյոփակ, քոք, քյասիք, օյադ, օյին, օյինբազ** և այլն, արաբերենից՝ **ազաբ, ամանաթ, ալիք, աջալ, բարաքյաթ, եթիմ, զիկու մ, զիբիլ, զոռ, թայֆա, թադարուք, ինադ, իշտահ, լայադ, խաբար, խաթր, խարաբ, խեր, հազըր, հալ, հալալ, հալբաթ, հախ, հայվան, համբալ, հարամ, հարիֆ, հեսաբ, հինա, հերս, դադր, դալաթ, դալմադալ, դսմաթ, դուրբան, մաջալ, մուխաննաթ, մուշտարի, մուննաթ, մուրազ, յարաբ, նադդ, նամուս, նաֆաս, շառ,**

30 Տե՛ս Ա. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, *Արարատյան բարբառի խոսվածքները* Գոլտեմբերյանի խոսվածքում, Ե., 1973, էջ 184-203, Ա. Դուկասյան, *Առօրյա բառարան*, Ե., 2013, էջ 255-278, Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., հտ. 1-4, 1971-1979:

շարքաթ, շուլալ, ջաֆա, ջըհանդամ, ջեր, ռադ ըլնել, սալամաթ, սաթըլջամ, սամթ, սհաթ, սուփրա, վախտ, քեֆ և այլն:

Աստիճանաբար գրականամուն են նաև ժողովրդախոսակցական մի շարք բառեր, որի պատճառով էլ երբեմն դժվարանում ենք սահմանազատել գրական ու խոսակցական լեզուների բառերը: Նման բառերից են՝ **արևկող, արյունլվա, աղջիկտես, աղջիկավարի, ամթանք, ահել, աչքալուսանք, բկլիկ, դիոլ, երեսառած, երկուերեսանի, գումնա, էլի, ընկերովի, թալան, թափով, թեժանալ, թոնիր, թոնրատուն, իրիկուն, լացկան, հերիք, մարդավարի, նազ ու տուզ, շեն, տնփեսա, փեշ, քնաթաթախ, օրապակաս** և այլն: Նշված բառերը հիմնականում բնորոշ են խոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում են գրական լեզու, տարածվելով դառնում նրա բառագանձի շերտերից մեկը (այդպես նաև՝ **սազել, շալակած, հարսանքավոր, թառել, լեղապատառ, բա** և այլն):

Խոսակցական լեզուն գրական լեզվի և բարբառների միջև գտնվող, բարբառներից վեր կանգնած լեզվական գոյաձևն է, որը լայնորեն ծառայում է առօրյա, առտնին հաղորդակցությանը: Այն գրական լեզվի նման նորմավորված և մշակված չէ, պարզապես պետք է կարողանանք մեծ ջանքեր գործադրել այն գրական լեզվին մոտեցնելու՝ գրական մշակման ու նորմավորման ենթարկելով:

Թեև ժամանակակից գրական հայերենը, ձեռք բերելով բանավոր հաղորդակցման գործառնություններ, դուրս է մղել տարածքային բարբառները, սակայն միևնույն ժամանակ հարստանում և ընդլայնում է իր շրջանակաները դուրս մղված լեզվական իրողությունների հաշվին: Այսօրվա պայմաններում, գրական լեզվի տիրապետման ընթացքում բարբառային շատ տարբերություններ հետզհետե վերանում են, թեև իսպառ վերանալ չեն կարող: Բարբառները երբեմն նպաստում են համաժողովրդական լեզվի բյուրեղացմանը, հարստացմուն և համ ու հոտ են տալիս նրան: Իսկ դա կախված է յուրաքանչյուրի ճաշակից ու հմտությունից:

«Ուրեմն, եկեք եզրակացնենք՝ բարբառները մեր լեզվի հարստությունն են, ուստի և պետք է լավ վերաբերվել նրանց՝ առանց թույլ տալու, որ նրանք հախուռն ու անկոչ միջամտություններով խաթարեն գրական հայերենը»³¹:

ԺԱՐԳՈՆԱՅԻՆ ԲԱՌԵՐՆ ՈՒ ԳՈՒՅԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Խոսակցական լեզվի բառապաշարում նկատելի են ժարգոնային բառեր ու արտահայտություններ:

Ժարգոնային, անհարկի բառերը³² գրական լեզվից դուրս են և ցածր ոճի արտահայտություններ են, դիտվելով իբրև բացասական երևույթի դրսևորում՝ մերժելի են, ունեն ժամանակավոր խոսակցական բնույթ (հները

³¹ **Լ. Գալստյան, Ձրույցներ լեզվի մասին**, Ե., 1986, էջ 45:

³² **Ժարգոնը** ֆրանսերեն բառ է և նշանակում է տվյալ հասարակական խմբի կամ որևէ խմբակցության ընդհանուր լեզու, որը տարբերվում է ընդհանուր լեզվից իր յուրահատուկ բառերով ու արտահայտություններով:

մոռացվում են, երևան են գալիս նորերը), հաճախ օգտագործվում են ուրիշներին անհասկանալի լինելու նպատակով, որ սովորաբար վերագրել են հասարակության մեջ հանցագործ խմբերին, սակայն ներկայումս սահմանափակումներ կարծես չկան: Ժարգոնային բնույթի բառեր են հաճախ գործածում դեռահասները՝ **գողական գնալ**, **գազան կինո**, **դող** (լավ), **ջոզել**, **հաբոզել** (լկտիանալ), **տուֆտել** (անկապ խոսել), **բոց ա** (արտասովոր, տարօրինակ, ինքնօրինակ, յուրահատուկ), այդպես նաև՝ **թույն ա** (**թույն** բառի «շատ լավ» իմաստով տարբեր կիրառությունները այսօր փոքրից մեծ օգտագործում են՝ **թույն կինո**, **թույն աղջիկ**, **թույն մաշնա**, **թույն շոր** և այլն): Դպրոցականների, ուսանողների բառապաշարում ժարգոնային բնույթ ունեն, օրինակ, հաճախակի գործածվող բառերի կրճատ ձևերը՝ **անգլ** (անգլերեն), **աշխարհ** (աշխարհագրություն), **բնագ** (բնագիտություն), **թվաբ** (թվաբանություն), **պատմ** (պատմություն), **լիկվիդ** (պարտքերի լիկվիդացման շրջան), **մագ** (մագնիտոֆոն), **ժամո** (ժամադրություն), **չպո** (ծածկաթերթիկ) և այլ բառեր: Երիտասարդները հաճախ են գործածում նման բառեր, ինչպես՝ **ֆոցնել** (խաբել), **ցրել** (գողանալ), **բքել** (շատ ծխել), **դուխով** (համարձակ), **քյառթու** (գռեհիկ), **փոստ ա** (զվարճալի), **լոքշ ա** (պարապություն), **ֆագոս** (անկայուն մարդ) և այլն:

Մեծ տարածում գտած ժարգոնային բառերի և արտահայտությունների շարքը բավականին ընդարձակ է և հասկանալի հասարակության լայն զանգվածի կողմից, թեև մեր հասարակությունը մերժում է ժարգոնը այն պարզ գիտակցմամբ, որ մեր օրերում այն կրողների մեծ մասը կրթական ցածր մակարդակ ունի: Յուրաքանչյուր մարդ, ով գիտելիքների զգալի պաշար է ստանում՝ հասնելով ինքնագիտակցության մի որոշակի աստիճանի, փորձում է խուսափել ժարգոնից, սակայն այսօր շատերն են խոսում խոսակցական ժարգոնախառը լեզվով, և ամենից ցավալին այն է, որ ժարգոնային արտահայտությունները խորթ չեն նաև իզական սեռի ներկայացուցիչներին: Երևանյան պատանիների խոսքից են սղագրված նաև հետևյալ օրինակները՝ «Արա՛, էդ տողկեն ո՞վ ա, խի՞ ա թթվել վրներս», «Չափալախեսն, պատին սվարկա կըլնես», «Լյուրոյ մամենտ ժիգնիդ տոսը կկտրեսն», «Ռազբիրատ կանենք, լիշնի կհանենք», «Չաչոտի վախտ, էտի ինձի կըլնգի», «Մի հատ որ չկվալտի, տեղնուտեղը ասֆալտին չիգանկեն հելավ», «Բլեֆ ես անում» և այլն:

Ժարգոնին բնորոշ են՝ ա) բառին նոր իմաստ հաղորդելը, ինչպես՝ **խոտ** (ամհանկացող, չափազանց միամիտ), **ժախել** (մատնել), **ժախվել** (մատնվել), **ժակվել** (ճշմարտությունն ակամա բացահայտել), **կերցնել** (պատասխանը տալ), **կոչկվել** (վատ դրության մեջ ընկնել, դժվարության հանդիպել), **կոտրել** (հեղինակազրկել), **չորել** (կոպտել), **քաշել** (վճատել), դրանց մի մասը դարձվածային բնույթ ունի՝ **արյուն վերցնել** (զգվեցնել), **գծերից ընկնել** (նախկին հեղինակությունը կորցնել), **կուտ տալ** (խաբել, համոզել), **ձև բռնել** (իրեն ներկայացնել ավելին, քան իրականում, ձևանալ), **յուղ վառել** (անիմաստ խոսել, բ) օտար բառեր գործածելը, ինչպես՝ **կառոչի** (մի խոսքով, կարճ ասած), **օտիդո** (ամբողջությամբ), **չերեզ** (միջոցով), **վաժմի** (կարևոր), **վոժժի** (կարծես թե), **ուժե** (արդեն), **տուտժե** (իսկույն), այդպես նաև՝ **դավայ**, **վեշնի**, **պոստոը**, **կանկոետնի**, **մաշնա**, **ժալետչիկ** և

այլն, գ) յուրահատուկ կապակցություններ ստեղծելը՝ **անկախ մայլա, գազ տված, թաղի գող, հավախի բազար, յանը տարած, քյալեն թափած** և այլն:

Անժխտելի է այն փաստը, որ ցանկացած լեզվում էլ գոյություն ունեն գռեհկաբանություններ ու ժարգոնային տարրեր, որոնք ձևավորվում են տարիների ընթացքում: Սակայն Հայաստանում այսօր, որը շատ ցավալի է, մի հոծ խումբ ժարգոնը դարձրել է «հարազատ լեզու»: Այն խրախուսելի չէ և՛ դաստիարակչական, և՛ առավել ևս գեղագիտական նկատառումներով:

Ժարգոնային բառերի մեջ կան բազմաթիվ բայական հարադրություններ, որոնց ոչ բայական բաղադրիչը հիմնականում օտար բառ է, ինչպես՝ **աբառտոկա խլել** (պատասխանել), **աղալժենի անել** (զիջել), **աչոտ տալ** (հաշիվ տալ), **ատկազ գալ** (հրաժարվել), **գռուզիտ անել** (հոգեբանական, բարոյական կամ ֆիզիկական ճնշում գործադրելով՝ մեկին դրդել ինչ-որ քայլի), **դաբռո տալ** (թուլյատրել, արտոնություն տալ), **դավադիտ անել** (զգվացնել), **դուխից ընկնել** (վիատվել), **զաստավիտ անել** (ստիպել), **ժալետ անել** (ափսոսալ), **լոնկա անել** (շփոթեցնել), **կայֆավատ ըլնել** (ծաղրել), **կուռսի ըլնել** (տեղյակ լինել), **նակազատ անել** (պատժել), **մանթո մնալ** (շփոթվել), **մառոզ անել** (ուշադրություն գրավել), **մուտիտ անել** (ստել, խաբել), **նառոշնի անել** (դիտմամբ անել), **պալիտ ըլնել** (բռնվել), **պոզիցնատ գալ** (խոստովանել), **վալնավատ ըլնել** (անհանգստանալ), **վանյատ անել** (վատ հոտ արձակել), **վիռուչատ անել** (փրկել, օգնել), **տոշկա բռնել** (ծաղրել), **ցեպիտ անել** (շրջապատել), **ուգավարիտ անել** (հանոզել), **ֆագերը գցել** (հունից դուրս գալ) և այլն:

Ժարգոնի տարածմանը լայնորեն նպաստում է նաև հեռուստատեսությունը, որն այսօր մեծ նշանակություն է տալիս այդ բառապաշարը կրող անձանց՝ ակամայից դառնալով այդ երևույթի խրախուսման միջոց:

Թեև հեռուստատեսությունը կոչված է բարձրացնելու հասարակության գեղագիտական մակարդակը, սակայն ցածրորակ, երբեմն գռեհիկ հեռուստահաղորդումների և հեռուստասերիալների միջոցով խեղաթյուրված լեզու է մատուցվում (**ատեցնյակ, ախպերնյակ, ընգերնյակ, պտա ուտաս, պտա խոսաս, հլա բռնա դրան** և այլն) մեր հասարակությանը, որն ավելի մատչելի է շարքային հեռուստադիտողին և հատկապես այդ լեզուն արագորեն յուրացնող երեխաներին:

Երևանի խոսակցական լեզվում գործածվող ոչ գրական տարրերից են նաև **գռեհկաբանությունները**: Դրանք բացասական երանգ ունեցող, հանրորեն կոպիտ, գռեհիկ ճանաչված բառերն ու արտահայտություններն են, հիմնականում արհամարհական, անարգական, հայիոյական բառերը, ինչպես՝ **քյալ, խդր, տուֆտա, քնծխ, չմո** (արժանապատվությունից զուրկ): Այս բառերը ևս գրական լեզվի նորմից դուրս են և բնորոշվում են հասարակացման, պարզեցման, ցածրացման, կոպտության երանգներով: Դրանք հատուկ են առօրյա բարբառախառն խոսակցական լեզվին, օրինակ՝ **զխտկվիր, ռեխդ փակիր, դանդալոշ, շնթռել, լակել, խժռել, ռնդել, զարիումար ու չոռ** և այլն:

Որքան էլ ցավալի է խոստովանել, մեր օրինակներն աննկատ ձայնագրությունների միջոցով գրառել ենք մեզ շրջապատող պատանիների և

երիտասարդների խոսքից, որ չգիտես՝ դրանք հասարակաբանություն են, ժարգոն, թե՛ գռեհկաբանություն. թերևս բոլորի անհաջող միասնությունն են, որոնք չափազանց տգեղ են դարձնում խոսքը: Այսպես՝ **եզոտ** (ուժեղ, սպորտային կազմվածք ունեցող), **տրաքած** (հարբած), **ցկցկալ**, **տծժալ** (հաճելի ժամանակ անցկացնել), **դժժալ** (շատ ուժեղ ծիծաղել), **մզզցնել** (ապուշացնել), **խզարել** (փայլուն ձևով ի կատար ածել), **չորով դնել** (կոպտել), **մեքենան ցբխել** (շատ ուժեղ կոտրել), **վերջն ա**, երբեմն էլ **վեռշն ա** (շատ արտասովոր), **ճաքել էինք**, **բացում ա**, **ջոգած ա**, **մորթած ես պահել**, **հելար ստուց**, «**Ապե՛, ի՛նչ կարանք թափովի մեջ խփենք**», «**Գազ տու բռնը**», «**Կողս լռվի**», «**Մեռնեն սրդիդ կլապանների զնգզնգոցին**», «**Մի հատ գթի քեզ**», «**Քո սանրվածքը ինձ մորթում ա**», «**Ինձի էսի բեսամթ դզում ա**», «**էս ի՛նչ բազար ա**», «**Քեզի տոշնի պահի**», «**Լավի վրով ա գրել, ոչ թե վատի վրով**» և այլն:

Այդպես նաև մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք դարձյալ ունեն հասարակաբանական երանգավորում (այսինքն՝ փողոցային-երիտասարդական), հիմնականում օգտագործվում են կրտսեր սերնդի ներկայացուցիչների, ինչպես նաև կրթական միջին և ցածր մակարդակ ունեցողների կողմից՝ գիտակցված կերպով խոսքը ոճավորելու, միևնույն ժամանակ հասարակական մյուս խմբերի խոսքին հակադրվելու նպատակով, ինչպես՝ **տուզիկ** (ոչ հեղինակավոր), **մամայի բալա**, **պայթած դեմք**, **հավեսով տուպոյ**, **ջիգարով գեղո**, **գռազով գեշ**, **քյալի բազարներ**, **դենքին թռնել** (անպատվել, ասել), **տռաս հանել** (շատ բարկանալ), **ատեց** (հայրիկ), «**հորս արև**», «**մորս արև**», «**էս ո՛վ ես ,արա՛, «երդում եմ կերե**», «**վրովդ կանցնեն**» (սպառնալիք), «**վատ ե՛ս**», «**լավ չե՛ս**, **արա՛**», «**ա՛յ հոգնած**», «**ծիգ պահի քեզ**» (իրեն խելք չպահողին՝ հորդոր), «**տուպոյ մեռնում ա**», «**գյաջ ըլնեն, թե տենց սիրուն աղջիկ տեսել ես**», «**ազի՛ գ, վրես սիգարես կա՛, ախպորդ ծխցնես**», «**վրես փող կա՛**», «**կափարիչս թռնում ա**», «**տոռնուզ ա մոտդ**», «**նայի քեզ դեպոռտ չանեն ձեր տուն**», «**արդեն յուղ ես վառում**», «**դուխ տվինք, դառար դուխովկա**», «**թեփ ուտում, դեսպե մեծանում ա**», «**դեպոռտ էղի ստուց**» և այլն:

Նշված բոլոր բառերն ու արտահայտությունները, անշուշտ, որոշակիորեն տարբերվում են խոսակցական բառապաշարից՝ իրենց ոճական-արտահայտչական գունավորմամբ և հիմնականում արտահայտում են բացասական երանգավորում:

Երբեմն նմանատիպ բառերն ու արտահայտություններն ունենում են՝ **հոմանիշներ**, ինչպես՝ **սորտ-կտոր-կադր-տիպ** (բնորոշում ինչ-որ մեկի), **տուֆտել** (անկապ խոսել) և **բըլթըցնել** (դուրս տալ), **շոպլիկություն անել** և **սապրոմվել**՝ «բժնել» իմաստով, **դժալ** և **կայֆավատ լինել** («ծաղրել ինչ-որ մեկին»), **վզին դնել** և **գռուզիտ անել**՝ «ճնշում գործադրել» իմաստով, **վիզ դնել** և **տասովկա տենալ** («մի բանի ճարը տեսնելը»), **լղել- բզել-տփել-սպանել** («ծեծել»), **ժմոտ** և **ժալետշիկ** («ժլատ»), **լոմկա** և **մանթո** («չափազանց հիասթափված»), **սպանում ա** և **մորթում ա** («չափազանց շատ է հիացնում»), **չամովել-կպոշկել-ուներբից կախվել-կախվել դենքին-ծակած պահել** («զզվեցնել, միևնույն հարցով հոգնեցնել»), **համանուններ**,

ինչպես՝ **կպցնել** («մի տեղից մի բան ճարել»)–**կպցնել** («ինչ-որ մեկին գրավել»)–**կպցնել** («հարված հասցնել»), **հագնել** («կռվել»), օրինակ՝ «էլի հագել են իրար էն երկուսը»–**հագնել** («երկար ժամանակ ինչ-որ նույն բանով զբաղվել»), օրինակ՝ «Աչքերս քոռացավ, ինչ են հագել սրան», **հականիշներ՝ բիրթ** (հասկացող)–**քյալ** (բուխ) և այլն:

Այսպիսի սղագրությունների (մասամբ էլ ձայնագրությունների) շարանը կարելի է երկար շարունակել՝ ցույց տալով, թե ինչ աստիճանի կարող է այլակերպվել լեզուն, հասնել անճանաչելիության: Ուրեմն և անվիճելի է, որ բանավոր լեզուն էլ լուրջ ուշադրություն ու խնամք է պահանջում:

Սովորույթը մեծ ուժ է, բայց դրա դեմ պայքարելը անհնար չէ: Ինքնահսկումն ու ինքնիշխումը այն գորեղ միջոցներն են, որոնք կարող են վերացնել վատ սովորույթները:

Յուրաքանչյուր մարդու մեծագույն արժեքներից մեկը մեր մայրենին անաղարտ պահելն է, որն ավանդվել է մեզ դարերի խորքից, և այսօր պետք է մեր սրբազան առաքելությունը համարենք այն հետագա սերունդներին անաղարտ ավանդելը:

Չեն սխալվում լեզվաբանները, երբ գռեհիկ խոսվածքի ակունքը տեսնում են մարդու ներաշխարհում, նրա դաստիարակության մեջ: Եվ ասում են՝ եթե ուզում եք, որ մարդիկ կիրթ, մարդավայել խոսեն՝ նրանց հոգին պիտի դաստիարակեք, այլապես դուրս կգա, որ բուն պատճառը թողած՝ պայքարում ենք հետևանքի դեմ:

Կարծում ենք՝ այստեղ տեղին է հիշել Իոսիֆ Բրոդսկու մաղթանքը՝ ուղղված Միջիգանի համալսարանի շրջանավարտներին. «Այժմ էլ, հետագայում էլ, կարծում եմ, իմաստ ունի կենտրոնանալ սեփական լեզվի ճշգրտության վրա: Աշխատե՛ք ընդլայնել ձեր բառապաշարը և դրա հետ վարվե՛ք այնպես, ինչպես վարվում եք ձեր բանկային հաշվի հետ: Ավելի շատ ուշադրություն հատկացրեք և աշխատեք ավելացնել ձեր շահաբաժինը... Նպատակը ձեր ինքնարտահայտումը հնարավորինս լիարժեք ու ճշգրիտ դարձնելն է...»³³:

«Երբեմն լեզուն համեմատում են ծովի հետ...առաջին հայացքից՝ ոչ մի ընդհանուր բան: Սակայն ծովում, ինչպես և լեզվում, հաճախ հանդիպում են անհարազատ տարրեր, այսինքն աղբ, որը ծովն ինքը նպաստավոր պայմաններում անպայման դուրս է նետում: Հուսանք, որ մեր լեզվի ինքնամաքրման շնորհը կհարատևի»³⁴:

ԴՊՊՎԱԾԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Բանավոր, խոսակցական լեզվին բնորոշ են նաև, այսպես կոչված, *դիպկածային բառերը*, որոնք հիմնականում ձևավորվում կամ ստեղծվում են խոսքի տվյալ պահին, հաղորդակցման տվյալ գործընթացում, և որոնք համարվում են նաև անհատական նորաբանություններ, հաճախ կարող են

³³ Գրական թերթ, 3 սեպտեմբերի, 2010:

³⁴ Տե՛ս www.armedia.am:

նույնիսկ շեղվել գրական լեզվի բառակազմական կամ ավանդական օրինաչափություններից և հանդես գալ իբրև հնարովի, ստեղծովի կամ սարքովի բառեր, ինչպես՝ **սնիկերսել, թեյխտ, ննջատուփ (դագաղ), օրհորդապնդիչ (ջենթլմեն), գեղազավր (շատ տգեղ), պոզասայլակ (տրոլեյբուս), փրփրազմփիկ (շամպայն), ուժանիվ (մոտոցիկլետ), երկարակլորախնորածակ (մակարոն)** և այլն: Նշված բառերն իրենց պատկերավորությամբ, արտահայտչականությամբ ու տեսանելիությամբ հաճախ գործածվում են բացասական, երգիծական ու ծաղրական նպատակներով:

Նշենք նաև, որ դիպվածային բառերը հիմնականում ստեղծվում են երիտասարդների, ինչպես նաև փոքր տարիքի երեխաների կողմից, ինչպես՝ «Ի՞նչ ես **ճպոչորվել**» (հարդարվել), «Մա՛մ, գնալու ե՛նք **բժշկանոց**» (հիվանդանոց) և այլն:

Այսպիսով՝ դիպվածային բառերը գործածվում են բանավոր խոսակցական լեզվում՝ իբր թե խոսքն ավելի հանդիչ, պատկերավոր դարձնելու համար: Այս կարգի նորաբանությունները կարող են միայն մեկանգամյա գործածություն ունենալ խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում ընդհանրապես դուրս մնալ բառապաշարից:

Սակայն միշտ չէ, որ բոլոր դիպվածաբանությունները մոռացվում են: Որոշ բառեր, իրոք, ծնվում են ու մեռնում անմիջապես, որոշ բառեր էլ բուն են դնում նեղ միջավայրում (ընտանիքում, դասարանում, ընկերական տվյալ շրջանում և այլն), որոշ բառեր ու դարձվածային միավորներ էլ ավելի լայն տարածում են գտնում՝ թափանցելով համաժողովրդական խոսակցական լեզվի մեջ:

**ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՆՆԵՐՈՎ
ՓՈՒՍԱՐԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ**

Օտարաբանություններ: Լեզվի մշակման և հարստացման ամենաշոշափելի դրսևորումը միշտ էլ եղել է բառապաշարի մակարդակում: Բառապաշարը լեզվի բաղադրիչներից ամենազգայունն է, որն անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն, հետևաբար այն անընդհատ համալրվում է նորանոր բառերով, ինչպես նաև փոխառություններով: Իսկ փոխառությունը լեզուների բառային կազմի հարստացման արտաքին միջոցներից մեկն է:

Քանի որ լեզուն անտարբեր չէ հասարակական երևույթների նկատմամբ, հետևաբար լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում են հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը: Լեզուն փոփոխվում է նաև մարդու լեզվամտածողության փոփոխության հետևանքով:

Ներկա փուլում, տարբեր երկրների ու ժողովուրդների հետ ունենալով մշակութային, գիտական, տնտեսական բազմաբնույթ կապեր, փոխադարձ այցելություններ ու շփումներ, միջազգային մասշտաբով ձեռնարկվող

միջոցառումներ ու համագործակցություն, նյութական ու հոգևոր արժեքների փոխանցումներ, առևտրական ու քաղաքական կապեր և այլն՝ հայոց լեզվի բառապաշարը բնականաբար ավելի մեծ չափերով է համալրվում նորանոր բառերով: Հասարակական յուրաքանչյուր նոր հարաբերություն նոր ծիւրեր է գցում մեր լեզվում, մանավանդ առօրյայում գործածվող խոսակցական հայերենում, որը, մատչելի լինելով բոլորի համար, հասարակական այդ նոր հարաբերությունների պայմաններում օրեցօր հեռանում է գրական հայերենից. խորապես պղծատվում և խաթարվում է բանավոր հայերենը: Մեր առօրյա խոսքում օգտագործվում են բազմաթիվ ու բազմաբնույթ օտար բառեր:

Դեռևս խորհրդային շրջանում, որոշակի զարգացման պայմաններում, հայոց լեզուն համալրվել է բազմաթիվ նոր բառերով և փոխառություններով: Ռուսերենը շատ մեծ ազդեցություն է ունեցել հայերենի հարստացման գործում: Լինելով ազգամիջյան հաղորդակցման լեզու՝ այն ամրակայվել է հայերենի բառապաշարում, և շատ քչերն են կարողանում ազատվել դրանից: Կյո բառերը մեծ մասամբ կենցաղային են, կազմում են մեր բառապաշարի անբաժանելի մասը, որոնցից հնարավորին չափ պետք է ազատվել, ինչպես՝ **գալստուկ, լիֆտ, մեշուկ, մեբել, շոֆեռ, կռանտ, կռավաթ, պաժառ, պոլ, պատալոկ, սոկ, վեդոռ, վեշ, տապոռ** և այլն:

Գրական լեզվում արդեն սովորական դարձած բազմաթիվ հայերեն բառերի փոխարեն բանավոր անկաշկանդ խոսքում շարունակում են գործածվել դրանց ոչ հայերեն համարժեքները (**պալտո, սամալյոտ, կոնսերվա, լիֆտ, վիտրինա, գդաչի, անալիզ, լապատկա, մայկա, չուլկի, պեռչատկա, սումկա, չոտկ, բառաբան, լողկա, ժարիտ անել, գալուբոյ, օրանժ, սեռի, բալկոն** և այլն): Դրանց շարքում հաճախ հանդիպում են աղավաղված ձևեր (**պոյեզ, կռռավաթ, վիշնի, կալբաստ, պալտոն, տալերկա, ինիստուտ** և այլն): Կամ՝ յուրաքանչյուր հայ գիտի *արկղ, հովանոց, վերելակ, ընդմիջում, տակառ, գարեջուր, պաղպաղակ, խումբ, դեղատուն, ծորակ, խոհանոց, շաքարավազ, փաստաթուղթ, կամուրջ, դեկ, այգի, բռնակ, պահարան* և բազմաթիվ այլ հայերեն բառեր, սակայն, իմանալով հանդերձ, հաճախ չի գործածում դրանք և սովորության համաձայն ասում է՝ **յաշիկ, զոնտիկ, լիֆտ, պերերիվ, բոչկա, պիվա, մառոժնի, գռուպա, ապտեկա, կռանտ, կուխնյա, պեսոկ, դակումենտ, մոստ, ռուլ, սադ, ռուչկա, շկաֆ** և այլն:

Գեղեցիկ և անաղարտ հայերեն խոսք այժմ, այնուամենայնիվ, կարելի է լսել հասարակական վայրերում, ընտանիքներում: Բարեբախտաբար, կան մարդիկ, որոնք ուշադիր են իրենց խոսքի նկատմամբ, սիրով, երկյուղածությամբ են վերաբերվում մայրենի լեզվին և հայերեն խոսքի մեջ չեն գործածում վերոնշյալ և անհարկի, ոչ հայերեն այլ բառեր:

Իսկ նրանք, ովքեր անփութ են իրենց խոսքի նկատմամբ, չեն խնայում իրենց գեղեցիկ մայրենին, բնականաբար, չեն խնայում նաև իրենց: Հայերենը և ռուսերենը շարունակ խառնելով՝ մի նախադասության մեջ մի քանի անգամ լեզվից լեզու են անցնում, ինչպես՝ **«Ախչի, գործ չունես, պոչոն տուտ....»**, **«Էս թագա ե՞ն նաչնոյ զանավեսկեթ, լավ վիդ ունեն»**, **«Խռուստալն էլ լրիվ իմպոտնի ա, մի հատ պռաստոյ բան չունի: Բա որ լյուստրեն տենաս....»**, **«Նրա նոր կվառտիռան ո՞նց ա»** և այլն: Այստեղ մեծ դեր

ունեն սովորույթի ուժը, սեփական խոսքի նկատմամբ անփութ լինելը, ինչպես նաև խոսքի ինքնահսկման բացակայությունը: Նմանապես նաև՝ **«Իմ դուզյանների մեք կա՛ն»**, **«Դուժիժ տուր ինձ»**, **«Ռաստամոշկա եմ արել»**, **«Գագավիկի մոտ էի գնացել»** և այլ արտահայտություններ: Սովորույթի ուժը հատկապես մեծ է բառերի ժարգոնային գործածությունների դեպքում (**դաժե, վայոժե, գատո, նեուժելի, պոռտը, վարչե, վարչե տը, վորչեմ** և այլն):

Ոմանք էլ, ըստ իրենց ճաշակի, աղավաղում են անձնանունները՝ հնչողությունը մոտեցնելով ռուսերենի հնչողությանը, ինչպես՝ **Անահիտը՝ Անահիդա, Կարինեն՝ Կառա, Մարիամը՝ Մառա, Արամը՝ Առամ, Առամչիկ, Տիգրանը՝ Ծիգռան, Ծիգռանչիկ** և այլն:

Այսպիսով՝ օտարաբանություններ օգտագործում են, առանց բացառության, բոլոր բնագավառներում տարբեր զբաղմունքի տեր մարդիկ: Բազմաթիվ օտարաբանություններ կան բժշկության ասպարեզում՝ **աբխոդ** (բուժայց), **պրիստուլայ** (մուպա), **պրոֆիլակտիկա** (կանխարգելում), **պուլս** (զարկերակ), **ստացիոնար** (հիվանդանոցային, կացիկ), **տարլետկա** (հաբ), **տամպոն** (վիրախժուժ) և այլն, երաժշտության ոլորտում՝ **բառաբան, բառաբանչիկ** (թմբուկ, թմբկահար), **գիտառա, գիտառիստ** (կիթառ, կիթառահար), **գաստոռլ** (հյուրախաղ), **գենեռալնի** (գլխավոր), **գվուկ** (ծայն), **ժյուրի** (հանձնախումբ), **կլիպ** (հոլովակ) և այլն, դպրոցներում, բուհերում՝ **դիրեկտոր, ավտոռեֆերատ** (սեղմագիր), **լիկվիդ** (վերաբնություն), **գաչոտ** (ստուգարք), **գաչոտնիկ** (ստուգման գրքուկ), **նեղաբոռ** (թերի, թերլրում) և այլն, տարբեր աշխատավայրերում՝ **դակումենտ** (փաստաթուղթ), **դեկրետ** (հռչակագիր), **կադաստր** (իրարժեք), **պապկա** (թղթապանակ), **պիտիմինուտկա** (թուղքածողով), **պտիչկա** (մշագիր), **սկրեպ** (ամրակ) և այլն: Անհարկի օտարաբանությունների անհավատալիորեն մեծ քանակ հանդիպում ենք արհեստավորների շրջապատում՝ **բոլտ** (հեղյուս), **գայկա** (մանեկ), **գակագ** (պատվեր), **գապչաստ** (պահեստամաս), **ժեշտ** (թիթեղ), **կռան** (կռունկ, ամբարձիչ), **կուսաչկա** (կտրիչ), **չիֆովկա** (հղկում), **շուռուլայ** (պտուտակ, պողոսակ), **պալիրովկա** (փայլեցում), **պայալնիկ** (զոդիչ), **պլանկա** (շերտածողիկ, շրիշակ), **պռառաբ** (աշխղեկ), **ռեզբա** (պարուրակ), **սմասկա** (յուղում), **ստանոկ** (հաստոց), **քիրպիչ, քյարպիչ** (աղյուս) և այլն³⁵:

Եթե մինչև այսօր հիմնականում մեր առօրյայում գործածում էինք ռուսերեն բառեր, որոնք կանաց-կանաց դուրս են մղվում մեր բառապաշարից, ապա այժմ ավելի մեծ արագությամբ ներս են խուժում արդեն մեծ տարածում գտած անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներից վերցված բառերը, որոնց տեսակարար կշիռը օրեցօր շատ ավելի է մեծանում: Ամենուր առնչվելով օտար երևույթներին՝ տեսնում և զգում ենք, թե ինչպես է խոսակցական ու առօրյա շփման լեզուն ողողվում օտարահունչ ու օտար ծագման բառերով: Մեր հասարակությունը չի կարողանում պահպանել հայերենն ու հայկականը, ընդհակառակը՝ հայ երիտասարդությունը, օրինակ,

³⁵ **Լ. Ղանոյան**, Օտար բառերի գործածությունը խոսքի իրարդային արտահայտություններում, երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողով, Ե., 2012:

քննադատում է այն, ինչ հայկական է՝ սկսած երաժշտությունից մինչև մտածելակերպ: Այսօր «գարգացած» հայ երիտասարդի շուրթերից տեղի թե անտեղի անընդմեջ լսվում են հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ **ok, please, thanks, hi, bye**, «**FULL ա**», «**BRAND-ովի ա քոնր**», «**LIKE անել**», «**Լայթբ** և **տարածեք**», «**Ֆոի քառ ենք անում**», «**Ֆլեշմոք ենք անելու**», «**Քենսլ արա**», «**Քոնենթել են**», «**Քոփի են արել**», «**էսոր փարթի ա**», «**Անցկացվում է քաստինգ**», «**Սերը իրա մոտ պիլ ա տվել**», «**Ստատուսը կբարձրանա**», նաև՝ **դրայվ, շոպինգ, սեյվ** և այլն:

Բայց ինչու՞, միթե մեր լեզուն չունի այդ բառերի համարժեքը, չէ՞ որ նման բառապաշար գործածող անհատը չի կարող կոչվել գրագետ, ունենալ պատշաճ բանավոր խոսք: Իսկ երեխայի մասին ի՞նչ ասես, որ տարբեր տարիքում փորձելով ընդօրինակել՝ իր բառապաշարը հարստացնում է այս բառակույտերով: Որտեղի՞ց է գալիս այս երևույթը: Իհարկե, նախ համակարգչից, ԶԼՄ-ներից, հեռուստատեսության տարբեր նախագծերից ու սերիալներից, որոնց բառապաշարը կայծակնային արագությամբ դառնում է մեր երիտասարդության ու փոքրերի սեփականությունը: Հայոց լեզուն ակամայից լցվում է օտար ծագում ունեցող բառերով: Շատ բառեր էլ մեր բառապաշար են մուտք գործում խանութների ցուցափեղկերին կամ ճակատային մասերում գրված, ինչպես նաև՝ տաքսիների, սննդի և այլ տիպի սպասարկման կենտրոնների անվանումներից, ինչպես՝ **Երևան սիթի, Երևան Սոլ, Դալմա Գարդեն**, օտար անվանումներ ունեն բազմաթիվ ֆիրմաներ, միջոցառումներ, մարգարողջական կենտրոններ (**Oxigen**), խանութներ (**Avenue des Fleurs**) ու առևտրի բազմաթիվ սրահներ (**Klaik**), հաղորդումների վերնագրեր (**Vitamin club, Tatoo art, Telemarket, Deluxe, Desktop, Ֆուրոր, Բլեֆ, Էքսկլուզիվ, Քոփի ռայթ, Սեկտոր PRO**), մեքենաների սպասարկումների անվանումներ (**GLOBAL LIMO SERVICE**), հեռուստատալիքներ (**TV, ATV, TV 5, Լայմ, Արմենիա**) և այլն, երբեմնի սրճարանների և հանրախանութների փոխարեն հաճախ գործածվում են **կաֆեներ-ը, սուպերմարկետներ-ն ու հիպերմարկետներ-ը**:

Այսպիսով՝ ռուսերեն բառերի մի մեծ խումբ կա (**պրիվետ, պակա, մարշրուտկա, աստանովկա, մոստ, մարոժնի, աբիդնի, բումաժնիկ, գալուբոյ, գռուբի, կալենդար, կակոռագ, կամենտարիա, կատաստոժֆա, կարիերա, կարիչնիվի, կաֆե, կլաս, կլասիկ, պրինցիպի, ռոզրվի, սիրենըվի, սուպեռ, վոլգար, ունիկալ, ուլուտ** և այլն), որ լայնորեն օգտագործվում է խոսակցական հայերենում: Եվ եթե այս փաստը կարելի է բացատրել պարզ սովորույթի ուժով, ապա դժվար է նույն կերպ բացատրել Հայաստանում ռուսական դիմելաձևի (**Այսինչ Այսինչովիչ**) անխուսափելի, լայն տարածումը: Թերևս ռուսերենի իմացությունը հիմա անհրաժեշտ չէ վերնախավին պատկանելու համար, բայց ակնհայտ է, որ ռուսական դիմելաձևը Հայաստանում շարունակում է լինել հարգանքի և հասարակական որոշակի կարգավիճակի ճանաչման և արտահայտման անփոխարինելի միջոց:

Օտարաբանությունները ոչ անհրաժեշտ, անհարկի փոխառություններ են, գրական լեզվի նորմի սահմաններում երբեմն նույնիսկ մերժելի, անթույլատրելի լեզվական իրողություններ, մանավանդ, երբ նկատի ենք ունենում իմաստային և քերականական օտարաբանությունները, օտարաբան

շարահյուսական կառույցները, որոնք այնքան շատ են մեր գրական հայերենի ձևաբանական ու շարահյուսական և նույնիսկ՝ հնչական-արտասանական համակարգերում³⁶ :

Փոխառություններ: Հայոց լեզուն աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից է, որը, անցնելով երկար ու փորձություններով լի հաղթական ճանապարհ, արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում ենթարկվել է բազում փոփոխությունների, սակայն ինքնամաքովել ու միաժամանակ հարստացել է ոչ միայն իր սեփական բառարմատների հիման վրա ստեղծված նորակազմ բառերով, այլև տարբեր լեզուներից կատարած փոխառություններով:

Բառապաշարի հարստացման երկու կարևոր ու հիմնական միջոցներից մեկը ուրիշ լեզուներից կատարվող փոխառություններով բառային կազմի համալրումն է, բառապաշարի հարստացման արտալեզվական գործոնը: **Փոխառություն** այն երևույթն է, երբ լեզուն իր չունեցած բառը կամ արտահայտությունը վերցնում է այլ լեզվից:

Աշխարհի բոլոր լեզուներն էլ այս կամ այն չափով բառեր են վերցնում հարևան ու հեռավոր ժողովուրդների լեզուներից: Օտար բառերի ընդունումը անխուսափելի երևույթ է լեզուների համար, և թերևս չի կարելի մատնանշել որևէ լեզու, որի բառապաշարի մեջ օտար բառեր չլինեն: Բոլոր լեզուները, սակայն, հավասարաչափ չեն օգտվում այդ միջոցից: Կան լեզուներ, որոնց բառապաշարի մի զգալի մասը փոխառություն է, իսկ որոշ լեզուներում փոխառյալ բառերը համեմատաբար քիչ են, որը չենք կարող ասել հայերենի դեպքում: Հայ ժողովուրդը, գտնվելով զանազան կապերի ու փոխհարաբերությունների մեջ, անմիջաբար կամ միջնորդավորված ձևով նոր հասկացությունների ու երևույթների հետ հաճախ վերցնում է նաև դրանց անվանումները: Դրանք լեզվի զարգացման տարբեր փուլերում աստիճանաբար վերածվում են օտարաբանությունների (**կուլտուրամշակույթ, տրադիցիա-ավանդույթ**): Բայց կան փոխառություններ, որոնք երկար ժամանակ գրական լեզվի բառապաշարում չեն ունեցել իրենց համարժեք ազգային ձևերը, մնացել են գործածության մեջ որպես թույլատրելի ձևեր, ինչպես՝ **տրակտոր, ռեկտոր, դեկան, ֆակուլտետ, լաբորատորիա, ֆինանսներ, ֆուտբոլ** և այլն:

Այսօր բազմաթիվ տերմինների համար փորձում են ստեղծել հայերեն համարժեքներ, դրանց մեջ կան հաջողները: Առհասարակ այն, ինչ հնարավոր է փոխարինել և արտահայտել ավելի հասկանալիով ու մատչելիով կամ ճշգրիտով, ապա անպայմանորեն պետք է արտահայտել՝ լինի սովորական բառ, թե տերմին: Սակայն միաժամանակ չպետք է մոռանալ, որ եթե թարգմանենք բոլոր փոխառությունները, ապա մեր լեզուն դրանից կտուժի և ոչ թե կհարստանա:

Փոխառությունների և օտարաբանությունների՝ հայերեն համարժեքներով փոխարինելու խնդիրը: Օտարաբանության դեմ պայքարը և լեզվի մաքրության հարցը միշտ էլ եղել են քննարկման առարկա տարբեր ժամանակաշրջաններում:

³⁶ Այս մասին տե՛ս «Քերականական իրողությունները երևանի խոսակցական լեզվում» բաժնում:

Այսօր շատ փոխառյալ բառեր արդեն ունեն իրենց հայերեն համարժեքները, որոնք նորակերտ բառեր են, սակայն շատերը կոժվարանան դրանք գործածել, ինչպես՝ **ալբոմ** (1. **նկարանի**՝ լուսանկարների պահելու համար, 2. **ծաղկանի**՝ նկարելու համար, 3. **հնչանի, ծայանի, մեղեդանի**՝ երգերի և երաժշտության հավաքածու), **բամբանեռկա** (անուշատուփ), **բասկետբոլ** (զամբյուղախաղ, **զամբյուղագնդակ**), **բասկետբոլիստ** (**զամբյուղորդ**), **գառաժ** (**սայլատնակ**), **գոսպիտալ** (**գինիվակնոց**) և այլն: Այստեղ արդեն խոսքի արհեստականության հարցն է առաջանում: Ոմանց համար խոսքը դառնում է մի տեսակ անբնական: Երբեմն էլ շատերն ամաչում են օգտագործել հայերեն համարժեքը՝ կարծելով՝ ծիծաղելի կթվան շրջապատի մարդկանց, հետևաբար նախընտրում են առօրյայում գործածել օտար բառը՝ սովորույթի համաձայն: Խոսքն այն մարդկանց մասին չէ, որոնք օգտագործում են օտարաբանություն, քանի որ չգիտեն դրա հայերեն համարժեքը: Պատճառն այն է, որ տարիներ շարունակ լսել են փոխառյալ բառը, երբևէ չեն լսել դրա հայերեն համարժեքը: Նման օտար բառերից են՝ **բասանոշկա** (բոկորոտիկ), **բիզուծի** (ծամկալ), **բլոկնոտ** (նոթատետր), **բռա** (որմնաջահ), **բռիլոկ** (մանրազարդ, կախազարդ), **գառշոկ** (1. **ծաղկաման**, 2. **միզաման**), **գրաֆինկա** (սկիհ, ջրխմիկ, սափոր, ջրաման), **գռելկա** (ջերմակ), **լամպուշկա** (լամպ, էլեկտրական լամպ, լուսակ), **խաղունոկ** (քայլասայլակ), **կալորիա** (տերմուս), **գնդակի կամեռ** (փչուկ), **մոզաիկա** (խճանկար), **շամպուն** (օճառաջուր), **շլանգ** (փողորակ), **չալիկա** (1. **հերակալ**, **ծամկալ**, 2. **լվացքակալ**), **չվաթր** (լվափայտ), **մանեկենշիցա** (ցուցորդուհի), **պեդալ** (ոտնակ), **պիժամո** (գիշերազգեստ, **ննջազգեստ**), **սավոկ** (աղբակալ, գոգաթիակ), **սոսկա** (ծծակ), **թրաշի ստանոկ** (սափրակ), **ստոռոշկա** (գծակար), **սուշիկա** (չորանոց), **տաբուրետկա** (աթոռակ), **տյոռկա** (քերիչ), **տումբրչկա** (պահարանիկ) և այլն:

Թեև մեր առօրյա լեզուն զնալով ձգտում է մաքրվել բազում օտար բառերից, շատ ու շատ բառեր դուրս են մղվում մեր բառապաշարից, բազմաթիվ փոխառությունների համար հայերեն համարժեքներ են ստեղծվել ու ստեղծվում, բայց կան այնպիսիները, որոնք այնքան են արմատավորվել մեր լեզվում, որ շատերին թվում է, թե դրանք հենց հայերեն բառեր են: Օրինակ՝ **չաղ** (գեր), **ենիշ** (սեխ), **մուրաբա** (անուշեղեն), **ջազվե/ջազվա** (սրճեփ), **բադրիջան** (սմբուկ), **հայաթ** (բակ), **խեր** (բարիք), **խաթր** (պատիվ), **սապոն** (օճառ), **հալ** (վիճակ), **խաբար** (լուր) և այլն:

Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե հայոց լեզվի դռները պետք է ամուր փակել անհրաժեշտ փոխառությունների առաջ, բոլոր օտար ու փոխառյալ բառերը թարգմանել հայերեն: Եվ երբեք չի կարելի նույնացնել օտարաբանությունը և փոխառությունը, դրանք տարբեր հասկացություններ են:

Լեզուն չի պահպանվի միայն կենցաղային մակարդակում, պետք է այն օգտագործել նաև գիտական միջավայրում: Կարևոր է ստեղծել հայկական տերմիններ, որ գիտական ոլորտում հնարավոր լինի լիովին կիրառել մեր լեզուն:

Պաշտպանելով ճիշտ և ընդունելի սկզբունքներ, առաջարկելով բազմաթիվ հաջող նորակազմություններ՝ պետք է ձգտել հասկանալիին, սակայն վերջին երկու տասնամյակում մեր լեզուն անհարկի օտար բառերից

մաքրելու դրական միտումի հետ միասին հիվանդագին մի մտայնություն առաջացավ՝ բոլոր փոխառյալ, այդ թվում վաղուց լայնորեն գործածվող, արդեն ազգային սեփական բառի իրավունք ստացած ու մատչելի բառերը անպայման փոխարինել հայերեն տարբերակներով: Եվ սկսեցին մեր լեզվից հախուռն վտարվել զանգվածաբար գործածվող, գեղեցիկ ու դուրահունչ շատ բառեր, որոնք ոչ միայն չեն հակասում մեր ազգային լեզվի օրինաչափություններին, այլև արտահայտում են տվյալ բառի կամ հասկացության իմաստը: Արդյունքում գրավոր ու բանավոր խոսքում տարածում գտան հնարովի, անճաշակ ու շինծու, դժվարահունչ ու խեղձած բառակերտումներ (ինչպես՝ **ժավել՝ ճերմակուք, սպիտակուք, թունել՝ մութել, լոգոպեդ՝ խոսարույժ, կոտլետ՝ աղուկ, կոմիտե՝ դեկանի, դեկախումբ**), որոնք օտար բառերի լիակատար համարժեքը չեն: Ահա այդ լեզվական նորություններից մի քանիսը՝ **դաշնույթ (սիմֆոնիա), կերպարարություն (դիզայն), կերպարար, կերպիկ, կերպորդ (դիզայներ), եռանդուժ (էներգիա), երաժշտանոց (կոնսերվատորիա), երգահան (կոմպոզիտոր), երթոն (տրանսպորտ), թեքաբանություն (տեխնոլոգիա), սոցիում (կոլեկտիվ), քարյուղ (նավթ) և այլն:** Կամ՝ **ախտարգել (կարանտին), այլագիր (կոդ), դերանդամ (պրոթեզ), դիրքաթիվ (կոորդինատ), զրուցահանդես (թոք շոու), թաղքագրիչ (ֆլումաստեր), խափանարարություն (դիվերսիա), ծրիչ (սկաներ), մրցատյան (ժյուրի), ցնցանկար (թրիլեր)** և այլն:

Կան բառեր էլ, որոնք շատ երկար ժամանակ օգտագործվել են մեր կողմից միջազգային տարբերակներով, այժմ հասարակության կողմից անընդունելի են դրանց հայերեն համարժեքները, ինչպես՝ **դպրորդ (ասպիրանտ), դպրապետ (գիտությունների դոկտոր), դպիր (գիտությունների թեկնածու), ավարտաճառային (դիպլոմային), ուսվարանոց (դեկամատ)** և այլ նորակազմություններ: Ամհաջող բառակերտումներ ենք համարում նաև **ձեպ (արագ) բառից սերող նորակազմությունները, ինչպես՝ ձեպատար, ձեպիկ, ձեպո (տաքսի), ձեպորդ (տաքսու վարորդ), ձպերթ (մետրո):**

Նոր բառերի ստեղծման և փոխառված բառերի հայերենացման միտումը, անշուշտ, դրական քայլ է, քանի որ տեղի է ունենում նաև լեզվի բառապաշարի հարստացում: Բայց հարց է առաջանում. որքանով են այս նորաստեղծ բառերը իմաստով ու հնչեղությամբ համարժեք չթարգմանված տարբերակին:

Մեր լեզուն արհեստական ու անհաջող բառակերտումներով չխճողելու համար հարկավոր է լուրջ մտոեցում ցուցաբերել բառաստեղծման հարցերին, բազմակողմանիորեն քննության ենթարկել ամեն մի բառ, հետո գործածության մեջ դնել:

Ընդհանրապես, իբրև կանոն, բառերի գոյատևումը պայմանավորված է խոսքի մեջ նրանց կիրառությամբ, ուստի որքան հաճախադեպ են հանդես գալիս նրանք ու լայն ընդգրկում ստանում, այնքան անհրաժեշտ ու հարագատ են թվում՝ դառնալով սովորական գործածության բառեր, որից հետո դրանց կիրառությունը աստիճանաբար օրինականացվում է: Դժբախտաբար այդպիսի ճակատագիր են ունենում երբեմն նաև արհեստական, անճաշակ ու անհաջող կազմություններ, մի բան, որ հիմնականում պայմանավորվում է առանձին մարդկանց, իսկ երբեմն էլ նաև

հասարակության անտարբերությամբ, որոնք լայնորեն գործածում են այդպիսիք՝ առանց հաշվի առնելու դրանց նպատակահարմարությունը:

Այստեղ հարցն այն է, թե արդյո՞ք բոլոր միջազգային բառերն ու տերմինները անվերապահորեն պետք է ընդունել, թե՞ պետք է օգտվել լեզվի սեփական ներքին հնարավորություններից, դիմել բառակազմությանը: Մեր կարծիքով պետք է հաշվի առնել բառի գործածության անհրաժեշտությունը, նպատակահարմարությունն ու չափը: Փոխառություններին պետք է դիմել միայն անհրաժեշտության դեպքում, երբ լեզվի ներքին միջոցներով հնարավոր չէ արտահայտել փոխառյալ բառի իմաստն ու նշանակությունը: Սա միանգամայն իրավացի պահանջ է, բխում է մեր լեզվի մաքրության շահերից և հաշվի է առնում հայերենի ավանդույթներն ու բառակազմական առանձնահատկությունները:

Թեև որևէ լեզու հարստանում է, եթե օգտվում է փոխառություններից, սակայն անհարկի օտար բառերի ներմուծումը աղավաղում է մեր լեզուն, և դրա դեմ պետք է շարունակական պայքար տարվի: Մեր ժողովուրդը միավորված խոսքի կարիք ունի: Պետք է ամել ամեն ինչ օտարաբանություններին քիչ դիմելու համար՝ պահպանելով մեր լեզվի գեղեցկությունը, ճոխությունն ու ճկունությունը: Եթե ազգային գիտակցության վրա հիմնված կարգախոսը գործի, ապա լեզվի վիճակը հետզհետե կկարգավորվի: Չմոռանանք նաև, որ անհարկի մաքրամոլությունը միայն վնասում է լեզվին:

ԲԱՈՒՊԱՇԱՐԻ ԻՄԱՍՏԱԶԵՎԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Երևանի խոսակցական լեզվում առկա են հոմանիշ բառեր, որոնք մոտ կամ նույնիսկ նույն իմաստն ունեն: Հոմանիշների առկայությունը Երևանի խոսակցական լեզվում ամենից առաջ պայմանավորված է լեզվական միջոցների ընտրությամբ:

Երևանի խոսակցական լեզվում նույնանիշներ են կազմվում գրական լեզվից և բարբառից (նաև՝ ժողովրդախոսակցական) առնված բառերից, ինչպես՝ *կծու-մոռու, խուլ-քյառ, շեկ-կյաժ, փոքր-պզտիկ-պուժուր, կաղ-թոփալ-չոլախ, ապտակ-չափալաղ, համբուրել-պաչել, մոտ-կուշտ, հղի-երեխով, ժլատ-քցիպ* և այլն, համադրական և վերլուծական բառերով՝ *վնաս տալ-վնասել, պար գալ-պարել, բացել-բաց անել, խաղալ-խաղ անել* և այլն:

Հոմանիշների շարքում կարող են լինել լեզվի զարգացման տարբեր փուլերին ու շերտերին պատկանող բառեր, բառակապակցություններ, որոնք ունեն ոճական որոշակի երանգավորում:

Երբեմն հոմանիշները խոսակցական լեզվում դրսևորում են արտահայտչական տարբերություններ: Խոսակցական լեզվում խոսակիցը, ընտրելով համանիշային շարքից այս կամ այն բառը, արտահայտում է իր վերաբերմունքը: Ինչպես՝ *ծիծաղել-խնդալ-սեպերը բացել-հռռալ-սեպերը կշտել-բերանը բացել* համանիշները նույն իմաստն են արտահայտում, բայց տարբեր գնահատությունն ու վերաբերմունք ունեն. *ծիծաղել-ը* չեզոք գնահատություն ունի, *խնդալ-ը, հռռալ-ը*՝ բացասական գնահատություն,

իսկ սեպտեմբեր կշտել-ն ու բերանը բացել-ը արտահայտում են անարգական վերաբերմունք: Ամենից առաջ այստեղ դրսևորվում է խոսողի անհատական, կամային վերաբերմունքը որևէ անձի կամ առարկայի ու երևույթի նկատմամբ: Ինչպես օրինակ՝ **մեռնել-մահանալ-վախճանվել-սատկել-ոտքերը տնկել-դժոխք գնալ, սպանել-լեշը փռել-շանսատակ անել-սատկացնել-գլուխը ուտել-վիզը կտրել, արտահայտվել-տուֆտել-դուրս տալ-բլթացնել-բլթի կոծակին նստել-ելույթ ունենալ, սիրել-պաշտել-երկրպագել-գժվել-ջանը դող ընկնել:**

Ոճական հոմանիշները արտահայտում են նույն բառային իմաստը, սակայն հակադրվում են գործառական, հուզարտահայտչական կողմով և հանդես են գալիս լեզվի գործառական և անհատական ոճերում: Ոճական հոմանիշները շատ են երևանի խոսակցական լեզվում, հիմնականում առանառում են խոսակցական ոճի բարբառային բառերից, այսպես՝ **ճանապարհ-ճամփա, ընկույզ-պոպոկ, անկողին-տեղեր, տերողորմյա-թզբեխ, ծերունի-պառավ-բիձա, փետուր-բմբուլ, կոկորդ-բուկ** և այլն: Գործառական ոճական տարբերությունները ցույց են տալիս, թե հոմանիշային շարքի անդամը լեզվի որ տարբերակին է պատկանում կամ գործառական որ ոճին (**ոխ-մուռ-վրեժ, հայիոյանք-բֆուր, ապտակ-ճլոթի-սիլլա-չափալաղ, կաղ-թոփալ, համր-լալ, գանգուր-խուճուճ, շիլ-շլղիկ-շաշ, համբուրել-պաչել, ամուսնանալ-պսակվել, զբոսնել-ման գալ, ծեծել-տփել, հարվածել-խփել-չոփել, պատռել-ծղել, իբր թե-յանիմ թե-յանի-մթամ թե** և այլն): Նման համանիշային շարքերում մի կողմից առկա են գրական, մյուս կողմից՝ խոսակցական լեզվի տարբերակային ձևերը:

Հոմանիշների մեկ այլ խմբի մեջ մտնող բաղադրիչները միաժամանակ հակադրվում են և՛ իմաստային³⁷, և՛ ոճական հատկանիշներով և անվանվում են իմաստային-ոճական հոմանիշներ, ինչպես՝ **գիծ-խելառ-ցնդած-ցնորած-խելքը թռցրած, գողանալ-թռցնել-ցրել-շվրցնել** և այլն:

Հոմանշային շարքեր են կազմում նաև դարձվածային միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, բայց տարբերվում են ոճական տարբեր կիրառություններով: Խոսակցական լեզվում դարձվածքներ շատ են գործածվում: Դարձվածային հոմանիշների գործածության ժամանակ անհրաժեշտ է առաջին հերթին նկատի ունենալ կիրառության ոլորտը, ինչպես՝ **խելքը թռցրած-խելքը պակաս-ծուծը բարակ (պակասամիտ, թեթևսողիկ)**, այդպես նաև՝ **տախտակը պակաս-վերնատունը դատարկ-խելքից բոբիկ-խելքից ծարավ, կապից փախած-թոկից փախած-կապը կտրած (անպատկառ, անամոթ)**³⁸:

Այսպիսով՝ առօրյա-խոսակցական լեզվում հոմանիշներն ունեն կիրառական հաճախականություն: Այս դեպքում նրանց գործածության աստիճանը հատկապես կախված է խոսողի անհատականությունից, նրա լեզվական իմացությունից ու հնարավորությունից: Խոսակցական լեզվում

³⁷ Իմաստային են համարվում այն հոմանիշները, որոնք արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց տարբերվում են նրբերանգային իմաստներով (ներմաստներով), **եզեկյան Լ., Դայոց լեզվի ոճագիտություն**, Ե., էջ 206:

³⁸ Դարձվածային միավորների մասին մանրամասն տե՛ս «Դարձվածային միավորները երևանի խոսակցական լեզվում» բաժնում:

գրականին զուգահեռ գործածվում են խոսակցական, բարբառային, հաճախ նաև օտարաբան ձևեր, ինչպես՝ **ծուխ-մուխ, հրել-բրթել, բանասեր-ֆիլոլոգ, խուճապ-պանիկա, լապտեր-ֆանառ** և այլն:

Խոսակցական լեզվում տարածված երևույթ է նաև հականշությունը: Արտահայտելով հակադիր հասկացություններ՝ խոսողը խոսքն ավելի պատկերավոր և դիպուկ է դարձնում, ինչպես՝ **«հնքը կարճ ա, բայց լեզուն շատ ա երկար»**:

Հականիշ բառերի ոճական կիրառությունը պայմանավորող հիմնական հանգամանքը դրանց՝ իմաստով հակադիր լինելն է: Դրա համար էլ միասնաբար հանդես գալու դեպքում է, որ դրանք օժտված են արտահայտչական նշանակությամբ: Խոսակցական լեզվում հաճախ են գործածվում այնպիսի առած-ասացվածքներ ու դարձվածային արտահայտություններ, որոնց մեջ կա հականշություն, ինչպես՝ **«Մտոյկ հարևանը լավ է, քան հեռու բարեկանը»**, **«Փորձած թանը անփորձ մածոնի հետ չեն փոխի»**, **«Շատը գնաց, քիչը մնաց»**, **«Սևը սպիտակից չջուկել»** և այլն:

Առօրյա խոսքում գործածվում են նաև հարանուն բառեր, որոնք հաճախ սխալ կիրառությամբ փոխարինում են իրար: «Հարանունները ձևով նման են, ուստի երբեմն շփոթությունների տեղիք են տալիս: Այդ պատճառով գործածելուց առաջ անհրաժեշտ է ճշտել և մտապահել հարանունների իմաստները»³⁹: Այսպիսով՝ միտքը ճիշտ հաղորդելու համար անհրաժեշտ է ոչ միայն նախադասությունը քերականորեն ճիշտ կազմել, այլև ճիշտ ընտրել բառերը՝ նկատի ունենալով դրանց իմաստները:

Այսպես՝ հաճախ են շփոթության տեղիք տալիս և սխալ կիրառվում այնպիսի բառեր⁴⁰, ինչպես **պահպանել և պաշտպանել**, մինչդեռ սրանք տարբեր իմաստներ ունեն. **պահպանել** նշանակում է **մի բան պահել, որ չկորչի, չմոռացվի**, իսկ **պաշտպանել**՝ **օգնական լինել, սատարել մեկին՝ դեմ կանգնելով մյուսին**:

Ջեկույց բառը նշանակում է **որևէ արարքի, կատարված գործի մասին մեկ ուրիշին, վերադասին բանավոր կամ գրավոր համառոտ տեղեկություն տալը, իրազեկ դարձնելը**, սակայն այն հաճախ շփոթում և կիրառում են **զեկուցում** բառի փոխարեն, որը նշանակում է **որևէ թեմայով ուրիշների առջև հանդես գալը, բանախոսություն**:

Բավականին հաճախ **մեղա գալու** փոխարեն սխալմամբ կիրառում են **մեղանչելը**. **մեղանչել** նշանակում է **մեղք գործել, իսկ մեղա գալ**՝ **ընդհակառակը՝ մեղքը խոստովանել**:

Պատրաստականություն բառը, որ նշանակում է **ընդառաջելու պատրաստ լինել, օգնելու ցանկություն**, հաճախ կիրառում են **պատրաստականություն** բառի փոխարեն, որ նշանակում է **մարդու իմացությունների, կարողությունների չափը, պատրաստվածությունը, որով որորշվում է, թե մի գործ նա պատրաստ է կատարելու, թե՞ ոչ**:

³⁹ Ա. Սարգսյան, Ա. Համբարձումյան, *Հայոց լեզուն և խոսքի մշակույթ*: Ուսումնական ձեռնարկ, ե., 2012, էջ 51:

⁴⁰ Նման բառացանկ տե՛ս «Հավելված 3–ում»:

Վերաբերվել բառը, որ արտահայտում է մեկը մյուսի նկատմամբ ունեցած փոխհարաբերության, վերաբերմունք-ի իմաստ, հաճախ շփոթում և կիրառում են **վերաբերել** բառի փոխարեն. վերջինս կիրառվում է, երբ *խոսքը որևէ մեկի կամ մի բանի մասին է կամ ուղղված է դրան:*

ԴՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵՁՎՈՒՄ

Երևանի խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտը դարձվածային միավորներն են, որոնց միջոցով դրսևորվում է յուրաքանչյուր ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, արտահայտվում տվյալ ժողովրդի բարբերն ու սովորույթը, կենցաղն ու ասրելակերպը: Դրանք, լինելով նաև լեզվի պատկերավորման միջոցներ, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը: Նույնիսկ գեղարվեստական լեզուն այնքան հարուստ չէ դարձվածքներով, որքան խոսակցականը, որը հատկանշվում է ժողովրդի մտածողությունը հարազատորեն, ամենայն նրբությամբ արտահայտելու կարողությամբ:

Իրենց կառուցվածքով և իմաստային յուրահատկություններով դարձվածային միավորներն առնչվում են բառակապակցություններին և նախադասություններին, սակայն ի տարբերություն սովորական բառակապակցությունների, որոնք ստեղծվում են խոսելու պահին, դարձվածքները պատրաստի, կայուն կապակցություններ են, որոնց բաղադրիչները վերահաստավորված են, այսինքն՝ դրանցից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բառարանային բուն իմաստը և ձեռք է բերում նոր նշանակություն, ինչպես՝ **«Չվածեղի սիրուն թավի պոչն են լիզում»**, **«Ի՞նչ ես պոչ խաղացում»**, **«Առաջ քո ծառը քրի, հետո ուրիշի»**, **«Սեփական յուղի մեջ տապակվել»** և այլն:

Այսպիսով՝ դարձվածային միավորները, մեծ ընդհանրություններ ունենալով բառերի հետ, որպես լեզվական առանձին միավորներ՝ ունեն նաև բավական տարբերություններ, հատկապես փաստենք այն հանգամանքը, որ դրանցից շատերն ունեն առկա ստորոգման հատկանիշներ, ինչպես՝ **«Գլխի տակ փափուկ բարձ դնես»**, **«Վանքի հավերն ուտել»**, **«Հոր հարսանիքը միտը բերել»**, **«Սեջներով սև կատու անցնել»**, **«Երկու ոտքը մի մաշիկ դնել»** և այլն:

Սույն բաժնում ընդգրկել ենք Երևանի խոսակցական լեզվից գրի առնված բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք գործածվում են տարբեր տարիքի և տարբեր սեռի բնակիչների կողմից առանց բացառության:

Պետք է նշել, որ խոսքի պատկերավորության և արտահայտչականության համար յուրաքանչյուր ոք աշխատում է գործածել առավել մատչելի, առօրեական բառեր, իսկ այդպիսի բառերն ամենից առաջ մարմնի մասերի անուններն են, ինչպես՝ **սիրտը բաց**, **գլուխը յուղել**, **գլուխը քարովը տալ**, **քիթը կախել**, **քթից բերել**, **աչքից ընկնել**, **աչքի պոչով մայել**, **ականջը ծանր**, **աչքը ծակ**, **խելքը գլխին**, **ծեռից գնալ**, **ծեռքերը լվանալ**, **վիզ ծռել** և այլն: Նման դարձվածքները կենդանացնում են

մեր լեզուն, թեև գրական լեզվի մեջ մեծ տեղ չունեն: Կան բանավոր խոսակցական լեզվի դարձվածային միավորներ էլ, որոնք գերազանցապես առօրյա բանավոր խոսքում են գործածվում, ինչպես՝ **թրև գալ, խելքին փչել, ձեռից գնալ, լեղին ցամաքել, ոտ ու ձեռ ընկնել, սրտից արյուն կաթել** և այլն: Այդպես նաև՝ հաճախակի գործածվող դարձվածային միավորներից են՝ **ձեռքերը ծալած նստել, ջրի ծամիկս դարձնել, քարը փեշից թափել, ջրի երես դուրս գալ, ծայրը ծայրին հասցնել, խոսքը կտուրը գցել, քամի անել, հոգին հանել, գլուխ պահել, խելքը գլուխը հավաքել** և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ դարձվածային արտահայտություններից են՝ **«Հա կասեն, հա կասի, ապո՛, գյազարը քանի՞ ս ա», «Լավ էր, չէ՞, իրա ծառը ջրեց, շլանգը հավաքեց»:**

Գործածվում են նաև այնպիսի դարձվածային միավորներ, որոնք խիստ ազգային երանգավորում ունեն և այլ լեզուներով հնարավոր չէ թարգմանել, ինչպես՝ **աչքդ լույս, աչքի ընկնել, երես տալ, խելքը գլուխը հավաքել, աչքով տալ, ձեռք առնել** և այլն:

Ինչպես նկատեցինք՝ գրի առնված օրինակներից, երևանի խոսակցական լեզվում ամենից տարածվածը երկանդամ կառույցներով դարձվածային միավորներն (այսուհետ՝ նաև ԴՄ) են⁴¹, որոնք բաղադրված են տարբեր խոսքիմասային կաղապարներից, ինչպես՝ գոյական+գոյական՝ **«Բա դու ի՞նչ էիր անում, մեխի գլուխ էիր ըստեղ», «Ձեռքի թաշկինակ են սարքել իրանց համար», «Ա՛յ քեզ բան, բերանի ծամոն դառանք», «Քթի ծակ չունեն ս», «Իմ աչքի փուշն ա էտի», «Մատի փաթաթան ես սարքել», այդպես նաև՝ ածական+գոյական կաղապարով՝ **«էտ չոր գլուխը զգվացրեց արդեն», «Հերիք ա անպոչ գդալի պես քեզ թուպեն մեկ մեջ գցես», «Հին ոսկոր ա, է՛», «Մարմանդ գետից վախեցի ի՛ր»,** գոյների անվանումների զուգորդումով՝ **«Սև օրերդ եկան», «էն սև ագռա՛վը (մարդու համար), «Կանաչ ճանապարհ ենք քեզ մաղթում», «Կարմիր խնձորը բերեցին»,** կամ՝ գոյական+ածական՝ **«Վա յ, քու կողը ինչ հաստ», «Գրպանը ծակ ու ի՛ պիտի գնա», «Աչքը շոռ մարդ ա էտի»,** այդպես նաև՝ **«մեքքը պինդ», «ձեռքը ծանր», «աչքը ծակ», «շունչը ծանր», «երեսը պինդ»** և այլն, թվական+գոյական՝ **«առաջին քայլ», «երրորդ ձեռք», «յոթերորդ երկինք», «երկու խոսք», «չորս պատ»** և այլն, դերբայ+գոյական՝ **«կտորած տաշտակ», «տաշած քար», «թրջած հավ», «հալած յուղ», «վառելու ապրանք», «թափելու բան»,** գոյական+դերբայ՝ **«ձեռքերը ծալած», «քբերը կախած», «աշխարհ տեսած», «առու թռած», «լրբի կերած», «կապը կտրած», «գլխին էկած», «քթով կպցրած», «գետնին կպած», «թոկից փախած», «քթից թռած», «թելից կախված», «թուղթ մրտոող», «աչք ծակող», «ձեռք բռնող», «լավ ուտող»** և այլն: Հաճախ գործածվում են այնպիսի երկանդամ կառույցներ,**

41 Հայ լեզվաբանական գրականության մեջ, ինչպես գիտենք, դարձվածային միավոր տերմինն առաջին անգամ գործածել է Վ. Համբարձումյանն իր թեկնածուական ատենախոսության մեջ: Տե՛ս Վ. Հ. Համբարձումյան, *Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը*, Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 1, Ե., 1981, էջ 148-160: Հմտ. Խ. Բաղիկյան, *Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., 1986, էջ 41:

որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ համագործ են, ունեն հարադրության արժեք, ինչպես՝ **«աղ ու հաց»**, **«թուղթ ու գիր»**, **«հաց ու պանիր»**, **«խաղ ու պար»**, **«թև ու թիկունք»** և այլն: Հաճախ նման կառույցների բաղադրիչները լինում են ածականներ՝ **«Հաստ ու բարակ մի գինն ունի»**, **«Կոշտ ու կոպիտ բան ա, հեջ լավը չի»**, **«Թանկ ու կրակ տվել առել ես, որ ի՞նչ»** և այլն: Երբեմն էլ բաղադրիչները դերբայներ, ածականներ ու գոյականներ են լինում և գրվում են գծիկով, ինչպես՝ **«Անող-դնող աղջիկ ա»**, **«Պակաս-պռատ բաներ շատ ունի»**, **«Գործդ կիսատ-պռատ ես արել»**, **«Էնքան երկար-բարակ խոսեց, զայլես գնաց»**, **«Չէ՛, մեծ ա տարիքով, բայց դե իրա ոտով-ձեռով մարդ ա»**, **«Ինձ աչքով-ունքով ա անում»** և այլն: Թվական+գոյական կառույցով հաճախակի գործածվող դարձվածային միավորներից են **մի** բառով բաղադրվածները, որոնցում վերջինս ոչ թե թվականի, այլ քչության, փոքրության իմաստ ունի, ինչպես՝ **մի բուռ, մի թիզ, մի մատ** և այլն: Որոշ կապակցություններում էլ **մի** թվականն արտահայտում է նմանության իմաստ, ինչպես՝ **«Մի խելքի մարդիկ եք»**, **«Երկուսս էլ մի մտքի ենք»**, **«Էնքան նման էին իրար, ոնց որ մի խնձոր լինեին»**: Կապերով ու կապական բառերով ածականական ԴՄ-ները ցանկանում են ավելի պատկերավոր դարձնել, ինչպես՝ **«Եղունգի չափ բան ա»**, **«Սարի պես տղամարդ ա»**, **«Մազերիս չափ դարդ եմ տեսել»**, **«Մամ ջան, քեզ երկնքի աստղերի չափ եմ սիրում»** և այլն:

Առօրյա խոսքում տարածված են եռանդամ և քառանդամ կառույցներից հետևյալ ԴՄ-ները՝ **«Ինչի՞, դու վերին արտի ցորեն ես»**, **«Իսկական աչքի սուրմա թոցնող ա»**, **«Կոպեկի համար մեռած ա»**, **«Էս կարկուտի տակ ընկած կոշիկներն ինչի՞ ես հագել»**, **«Էս էրեսեն ուղտի ականջում քնած ա»**, **«Էս մեքենան իր դարն ապրած ա արդեն»**, **«Լա՛վ, ոչի՛նչ, ջրի բերած, ջրի տարած»**, **«Հագիվ մի կտոր հացի տեր էղավ»**, **«Մեկի պոչը մյուսի տակն ա»**, **«Մի քոռ կոպեկի համար իրար են ուտում»**, **«Մի փոր հացի համար ինչ ասես կանի»**, **«Հացը գլխին հարամ էղավ»** և այլն:

Կան նույնիսկ հնգանդամ կառույցներով ԴՄ-ների գործածության օրինակներ, ինչպես՝ **«Էտի սատանից յոթ օր առաջ ա ծնվել»**, **«Իր բերնի համը լավ գիտի»**, **«Մի քոռ կոպեկի խելք չունես»**, **«Մի ձեռքով երկու ձմերուկ ա ուզում բռնի»** և այլն:

Պետք է նշել, որ որքան քիչ են ԴՄ-ների բաղադրիչները, այնքան շատ ու գործուն են այդպիսի դարձվածքները, ինչքան շատանում է կառույցի բաղադրիչների թիվը, այնքան քիչ ու պակաս գործուն են դառնում դրանք, որի պատճառը, մեր կարծիքով, մի կողմից՝ խոսքի համառոտության, հակիրճության, արագ արտաբերման ձգտումն է, մյուս կողմից՝ մարդու հիշողության մեջ լավ են պահվում ու հեշտությամբ մտաբերվում ավելի կարճերը:

Դարձվածային միավորների կազմության գործում ամենից առաջ վճռական նշանակություն ունեն տվյալ լեզվի բառային կազմի իմաստային հարստություններն ու բառակազմական հնարավորությունները: Հետևաբար հասկանալի է, որ ավելի շատ դարձվածներ կազմելու հնարավորություններ ունի այն լեզուն, որի բառերը ավելի հարուստ բազմիմաստությամբ են

օժտված. մի հատկանիշ, որը շատ բնութագրական է հայերենին: Հայերենի հարուստ դարձվածակազմին մեծապես նպաստում են հատկապես հարադրավոր կազմությունները:

Դարձվածային միավորները, լինելով տարակազմ կառույցներ, իրենց թե՛ ձևով և թե՛ իմաստով շատ են նմանվում հայերենի հարադրություններին և շատ հաճախ նույնանուն են հարադրական բայերին, դրանք իրարից տարբերակելը բավականին դժվար է, որովհետև հարադրական բայերի մի մասը, դարձվածային արժեք ձեռք բերելով, լրիվ վերածվել է դարձվածային միավորների, իսկ մյուս մասը՝ ոչ:

Հայտնի է, որ բայը խոսքի մասերի համակարգում քերականական ամենահարուստ առանձնահատկություններով օժտված խոսքի մասն է և խոսքի մեջ ամենակարևոր դերն է խաղում. այդ նույն հատկանիշներն էլ բայից անցնում են բայական ԴՄ-ներին: Դառնալով դարձվածի բաղադրիչ՝ բայն իր իմաստային, բառաքերականական ու գործառական հատկանիշներով է օժտում նաև դարձվածային կապակցությանը, որը ոչ միայն անվանում է գործողությունը, եղելությունը կամ դրությունը, այլև արտահայտում է բայերի հետ կապված ամենաբազմազան վերաինաստավորված հարաբերություններ⁴²: Խոսակցական լեզվում հանդիպող ԴՄ-ներից ամենամեծ հաճախականություն ունեն հետևյալ բայերը՝ **գնալ՝ ձեռքից գնալ, ուշքից գնալ, գլուխը գնալ, խելքը գնալ**, առնել՝ **երես առնել, լեզու առնել, առաջն առնել**, տալ՝ **թև տալ, երես տալ, քանուն տալ**, հանել՝ **խելքից հանել, ծանապարհից հանել**, բերել՝ **խելքի բերել, ձեռք բերել, գլխին օյին բերել**, տանել՝ **գլուխ տանել, ականջը տանել** և այլն:

Հանդիպող բայական ԴՄ-ները բաղկացած են մեկ, երկու, երեք և ավելի բաղադրիչներից, ինչպես՝ **թացը չորի հետ վառել, քանը քոր ընկնել, գետնի տակ անցնել, մեկի ոտքի տակը փորել, փշերի վրա նստել, մատները հետն ուտել** և այլն:

Դարձվածները հաճախ նպաստում են ավելի տեսանելի դարձնելու և բացահայտելու առանձին անձանց, կերպարների հոգեվիճակը:

Դարձվածների միջոցով հաճախ խոսողն արտահայտում է իր հիացական վերաբերմունքը՝ **ի՛նչ եմ ասել, աստծու կրակ, կրակի կտոր, լսի կտոր**, զարմանքը՝ **այ բեզ բան, դու մի ասա, բա չես ասի, արի ու տես (որ), ի՛նչ խաբար աս, մեղա աստծու**, հաճելիությունը՝ **աչքիս վրա, գլխիս վրա, բերանի քուրը գնալ, փառք աստծո** և այլն: Կան դարձվածներ էլ, որոնց միջոցով խոսողն արտահայտում է իր կարեկցանքը՝ **խեղճ ու կրակ մարդ աս, թող տանի, ոչի՛նչ**, «**Էկել, վիզը ծռել էր, ինչ անեի**», մտերմիկ ու անմիջական վերաբերմունքը՝ **Մեր մեք ասած, վաղը գնալու աս մեր բաժնից**, «**խոսքը մեր մեք, ասեմ, բայց մարդու բան չասես**», «**ի՛նչ մեղքս քաբցնեմ, ես եմ արել**», օրհնանքները՝ **«Ապրի արևդ»**, «**Մեռնեմ արևիդ, ո՛նց ես**», «**Աստված կսիրես, իրան մի ասա**», «**Տա Աստված, թող քո ուզածով լինի**», «**Աստված բարին կատարի**» և այլն:

⁴² Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 159:

Հաճախ դարձվածների միջոցով խոսողն արտահայտում է իր բացասական վերաբերմունքը խոսքի առարկա հանդիսացող անձի կամ երևույթի նկատմամբ, ինչպես՝ արհամարհանք՝ **աչքերը չոել, աչքի գրող, մեծ-մեծ բրդել, չոր գլուխ, գլուխը քարը, գլուխ տանել, գլխին շան լափ քափել**, հանդիմանանք՝ **մեջքդ կտորվի, տունդ չքանդվի, այ քո տունը շինվի, տունդ քանդվի, աստծու սիրուն, ի սեր աստծո, ի նչ խաբար ա**, հեգնանք՝ **մեկ ականջով մտնել, մյուսով դուրս գալ, բախտին քացի տալ, գրպանում մկներ խաղալ, մկան ծակը հազար թումանով առնել, լեզուն կապ ընկնել, խելքը հացի հետ ուտել, հալած յուղի տեղ ընդունել, փորը վեց-վեց անել, աթոռից պոկ չգալ** և այլն:

Խոսքն արտահայտիչ դարձնելու համար մարդիկ հաճախակի ինքնաբերաբար գործածում են ԴՄ-ներ, նույնիսկ մի նախադասության մեջ կարող են մի քանիսը լինել, ինչպես՝ **«Դրան նայե՛ք, մի ոտքը գերեզմանում ա, որ փչես կրնկնի, էլի ուզում ա իրա ասածով լինի ամեն ինչ»**, **«Սատների արանքով նայի, էտ թոկից փախածն ով ա, որ քեզ բան ասի»**, **«էտ երկու երեսանիին նայեք, ստեղ են ասել՝ մարմանդ գետից վախեցիր»** և այլն:

Դարձվածային միավորներ են գործածում նաև հետևյալ դեպքերում. երբ որևէ մեկը սանձարձակ, չափազանց անվայելուչ կերպով է խոսում, ապա ասում են՝ **«Լեզվի կապերն արձակել է»**, կամ, երբ ինչ-որ բանից գոհանում են, իրենց բավարարված են զգում, ասում են՝ **«Ջա՛ն, սրտիս յուղ քսվեց»**, բայց երբ մեկին խաբում, համոզում են, ասում են՝ **«Գլխին յուղ քսեցին, ծանապարհեցին»** և այլն: Շատ հաճախ էլ լսում ենք՝ **«Լա՛վ, էլ կոկորդիլոսի արցունք մի՛ քափիր»** արտահայտությունը, երբ դիմում են այն մարդուն, որ կեղծ է արտասվում, վիշտ է ցուցադրում, մինչդեռ ներքուստ համոզարտ է: Եթե փորձենք այս դարձվածների մեջ որևէ բառ փոխել, դրանք իրենց նրբիմաստից կզրկվեն: Հենց այս պատճառով էլ դրանք կոչվում են անազատ կապակցություններ, այսինքն՝ դարձվածներ, որոնք մեր գլխում մշտապես կան՝ որպես պատրաստի միավորներ, կառույցներ, որ անհրաժեշտ պահին միանգամից գործի ենք դնում:

Առօրյա խոսքում մարդիկ սիրում են հաճախ առարկան, երևույթը համեմատել տարբեր կենդանիների հետ, ինչպես՝ **«Շնորհակա՛լ եմ, արջի ծառայություն մի՛ մատուցիր»**, **«Գայլի ախորժակ ունես, հա՛՛», «Հին գայլ ա էտի»**, **«Կթու կով ոնց որ լինի, էնքան չաղ ա»**, **«Ոնց որ աղոթած էշ լինես»**, **«էշի նահատակ էղավ»**, այդպես նաև՝ **առյուծի բաժին, ծեր աղվես, ծիու ուժ, եզան համառություն, օձի կծած** և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվում բավականին տարածված են նաև **«էշ կերել, էշ մեծացել ա»**, **«էշ մի՛ սատկի, գարուն կգա, յոնջա կուտես»**, **«Ամենքն իրանց էշն են քշում»**, **«Սատկած ծի են ման գալիս, որ նալերը հանեն»**, ինչպես նաև՝ **«էտ Նոյի թվի կոշիկները ես չեմ հագնի»**, **«Հոր գինն ա դրել վրեն»**, **«էտ բլթիկի կնոպկեդ** (անիմաստ խոսքեր ասել) **կլինի՞ անջատես»** պատկերավոր արտահայտությունները և այլն:

Որքան էլ հետաքրքիր է, բայց պետք է նկատել, որ խոսակցական լեզվում գործածվող բազմաթիվ ԴՄ-ներ կան, որ առնչվում են **շուն** կենդանուն և տարաբնույթ իմաստներ են արտահայտում, օրինակ՝ ինչ-որ

մեկի բախտը բերելու իմաստով ասում են՝ **«Շան բախտ ունի»** բայց մեկի շատ վատ վիճակը ներկայացնելիս ասում են՝ **«Շան օրի ա»** կամ **«Շան օրն ա ընկել»**, անամոթ մարդու համար ասում են՝ **«Շան էրես ունի»**, չափազանց շատ չարչարվողի համար՝ **«Շան քթից ջուր ա խմում»**, հավաքված շատ մարդկանց համար ասում են՝ **«Շունը տիրոջը չի ծանաչում»**, կան նաև՝ **«Շան հոտառություն ունի»**, **«Շան լեզու ունի»**, **«Գյուղ չկա, որ շուն չլինի»**, **«Շուն ու կատու են դարձել»**, **«Ընենց օրը կզցեն, որ շունը ձեռքիցդ հաց չի վերցնի»** և այլն: Շուն բառով բաղադրված մի շարք դարձվածային կապակցություններ էլ մի դեպքում գռեհկաբանական արժեք են ստանում, մի այլ դեպքում՝ թեթև հանդիմանական, մտերմական արտահայտությունների իմաստ, ինչպես՝ **շան տղա, շան աղջիկ, շան որդի**, երբեմն էլ՝ **շան թուլա, շան լակոտ, շան ձագ** և այլն:

Առօրյա խոսքում հաճախակի են գործածվում զիջական բնույթի դարձվածքներ՝ **«Գլուխը քարը, ինչ ուզում ա, թող անի»**, **«Յերն էլ անիծած, թող գնա»**, **«Գործ չունես, դու բան մի խոսա»**, **«Ի՛նչ արած, մենք էլ չենք գնա»**, երկբայական բնույթի դարձվածներ՝ **«Աստված գիտի՝ ուր ա հիմա»**, **«Ով գիտի՝ ինչ ա անում էնտեղ»**, **«Ի՛նչ իմանաս՝ մինչև ուր կհասնի»**, **«Երկու կրակի մեջ են ընկել, չգիտեմ ինչ անեն»**, ինչպես նաև՝ երգիծական վերաբերմունք արտահայտող դարձվածներ, ինչպես՝ **«Էսի մածունը փչելով ա ուտում»**, **«Ա՛յ ծակ փիլիսոփա»**, **«Իսկական ցամաք ծորի աղվես ա»** և այլն:

Երբեմն էլ օգտագործում ենք այնպիսի դարձվածներ, որոնք չափազանցում են իրողությունը կամ երևույթը, դրանով փորձում ենք ուժեղացնել խոսքի տպավորությունը, ինչպես՝ **«Ես արդեն չգիտեմ որն անեն, ես կաշվիցս դուրս եմ գալիս, հազար կտոր եմ լինում, իսկ դու ...»**, **«Ընենց կտամ, որ մկան ծակը հազար թումանով կառնես»**, **«Մազ էր մնում, որ բռնեի, հա՛»**, **«Ընենց լեզու ունի, օձը բնից կհանի»**, **«Ոտով գլխով կորանք»**, **«Ախ՛ի՛ ջան, դրանք հում-հում կուտեն ինձ»**, **«Մեկ էլ, որ տեսել եմ, չէ՛, հոգիդ բուռս կհավաքեմ»**, այդպես նաև՝ **աչքի սուրմա թոցնել, ասեղ գցելու տեղ չլինել, բերանում թուրք ցամաքել, կաշին պլոկել, սիրտը կտոր-կտոր լինել**, երբեմն էլ չափազանցում ենք անհմարին իրավիճակների մատնանշումով, անհամատեղելի իրողությունների համադրումով, ինչպես՝ **ուղտի ականջում քնել, լուն ուղտ շինել, աչքի միջից մազ թոցնել** և այլն:

Շատ ԴԱ-ներ երբեմն կարող են մատնանշել պարօժենկոտություն՝ **«Մենակ մեռնելուս օրը չգիտեմ»**, **«Խաչը իմն ա, զորությունը ես գիտեմ»**:

Երբեմն գործածում ենք այնպիսի ԴԱ-ներ, որոնց արտահայտչականության հարցում կարևորվում է ներքին հանգավորումը, ինչպես՝ **քիթ քթի տալ, խելք խելքի տալ, շուռ ու մուռ տալ, նազ ու սուզ անել** և այլն:

Դարձվածների համար բնորոշ է սեղմությունը (հակիրճությունը): Դրանք խտացված խոսքի անզուգական արտահայտություն են: Դարձվածների սեղմությունը պայմանավորող հիմնական հանգամանքը բառը

ընդհանրացման մեծ ուժով օգտագործելն է՝ «Գիտե՞ս՝ արդեն դանակը ոսկորիս ես հասցրել», «Սեփական ճակատի քրտինքով ապրող մարդ ա», «Ես եմ մեղավոր, գլխիս եմ նստացրել», «Վա՛յ, էս ինչ էրեխեք են, իսկական շուն ու կատու են դարձել», «Շնորհակալ եմ, ինձ արջի ծառայություն մի՛ մատուցի», «Խեղճ էրեխես էքքան տանջվեց՝ հոգին բերանը էկավ» և այլն: Խոսքի սեղմությունը պայմանավորվում է ոչ միայն նրանով, որ սրանց մեջ ավելորդ ոչ մի բառ չկա, այլև նրանով որ շատ սովորական բառերը հանդես են գալիս որպես խոր բովանդակության կրողներ, որպես խորհրդանիշ:

Դարձվածային միավորների հսկայական պաշարի կողքին ունենք նաև առանձին բառերի փոխաբերական կիրառություններ, որոնք խոսակցական լեզվում որոշակի քանակ են կազմում, կարծես ձեռք են բերում դարձվածային նշանակություն, բառ-դարձվածի արժեք՝ **թքած, մեռա՛ծ, զարգանա՛ս** և այլն:

Տարբեր դարձվածներով կարելի է հոմանշային շարքեր կազմել, օրինակ՝ «լռել» բառի իմաստն արտահայտելու համար կարող են գտնվել բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք բոլորն էլ պատկերավոր արտահայտություններ են, ինչպես՝ **բերանը կապել՝ նստել, լեզուն փորը քաշել, լեզուն ծակը կոխել** (գռեհկ.), **լեզուն փորն ընկնել, լեզուն կտրվել, ձայնը փորն ընկնել** և այլն: Այդպես նաև՝ **պատին սեղմել** և **պատին դեմ անել, կաշին փրկել** և **գլխի ճարը տեսնել, ոտքերը լիզել և ոտքերն ընկնել, ջուր ծեծել** և **յուղ վառել** (ժրգ.), **փշերի վրա նստել** և **ասեղների վրա նստել, մի գնդակով երկու նապաստակ որսալ** և **մի ձեռքով երկու ձմերուկ բռնել** և այլն:

Սովորաբար խոսակցական լեզվում գործածվող դարձվածները կարող են նաև հականշային հարաբերության մեջ մտնել, ինչպես՝ **«աչքը դուրս»** (ամուսնական ուխտին դավաճանող) և **«աչքը դռանը»** (ամուսնական կյանքին հավատարիմ տղամարդ), **«ձեռքը բաց»** (առտաածեռն) և **«ձեռքը փակ»** (ժլատ), **«աչքի լույս»** (սիրելի, պաշտելի) և **«աչքի գրող»** (ատելի, անտանելի), **«Աստծու գառ»** (խելոք, հեզ) և **«Աստծու կրակ»** (չար, անհանգիստ), **«էծերը գնալ»** (հանդարտվել) և **«էծերը գալ»** (կամակորություն անել, չափազանց ակտիվանալ) և այլն: Այդպես նաև՝ **հողին հավասարեցնել** և **երկինք բարձրացնել, ջրի գին** և **կրակի գին// հոր գին, լեզուն կարծ** և **լեզուն երկար**:

Դարձվածների սաստկական երանգավորումն ավելի ակնհայտ է դառնում, երբ դրանց բաղադրիչներն են հականիշ բառեր, ինչպես՝ **ծուռը նստել, դուզը խոսալ, ծանր ու թեթև անել, լավ-վատ յուրա գնալ, սևն ու սպիտակը չքոկել//ջոկել, հայիայը գնացել, վայվայն ա մնացել** և այլն:

Երբեմն համանունության երևույթներ են հանդիպում, ինչպես՝ **հողին հավասարեցնել՝** 1.խիստ քննադատել, 2.ավերել, 3.վարկաբեկել, արժանապատվությունից զրկել:

Այսպիսով՝ խոսողը, ինչ-որ իրավիճակից կամ պայմաններից ելնելով, տվյալ մարդուն, առարկան կամ իրավիճակը ավելի լավ բնորոշելու և բնութագրելու համար և դրանով իսկ իր խոսքի ուժը սաստկացնելու, ավելի ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու նպատակով, վերհիշում է լեզվում արդեն եղած, պատրաստի՝ տվյալ պահին ու իրավիճակին շատ

համապատասխան դարձվածային միավորներ: Դրանց շնորհիվ մեր խոսքը դառնում է ավելի վառ, կենդանի ու պատկերավոր:

Դարձվածային միավորները հիմնականում ժողովրդական մտածողության արդյունք են, դրանք նախ առաջանում են խոսակցական լեզվում, ապա նոր անցնում գրականին:

Չպետք է մոռանալ նաև, որ մի շարք դարձվածքներ առաջացել են առածների և ասացվածքների հիման վրա, ինչպես՝ **պղտոր ջրում ձուկ բռնել, ձեռքը փրփուրին գցել, ջուր ծեծել, առուն թռի նոր ասա՝ հոս, մի ձեռով երկու ձմերուկ բռնել** և այլն:

Առածներն ու ասացվածքները՝ որպես ժողովրդական բանահյուսության ժանրեր, խոսքի մեջ նույնպես հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ, այսինքն՝ ստեղծվում են ոչ թե անմիջապես հաղորդակցման ընթացքում, այլ, ինչպես և մյուս դարձվածները, փոխանցվում են պատրաստի վիճակում:

Առածների, ասացվածքների և թևավոր արտահայտությունների ձևային ու իմաստային յուրահատկությունները պայմանավորված են դրանց առաջացման հիմնական նպատակով: Եթե դարձվածներն առաջացել են հասկացությունը պատկերավոր ձևով արտահայտելու նպատակադրումով, ապա առածների, ասացվածքների, թևավոր խոսքերի առաջացումը պայմանավորված է ժողովրդի դարավոր կենսափորձը խտացված, սեղմ ձևով արտահայտելու անհրաժեշտությամբ: Վերջիններիս համար հատկանշականը երևութ, իրողությունը դատողական, տրամաբանական ձևով արտահայտելն է: Այսպես՝ երևանի խոսակցական լեզվում հաճախակի հանդիպող առած-ասացվածքներից են՝ **«Գյուղ կանգնի, գերան կկտորի»**, **«Ընկերովի մահը հարսանիք է»**, **«Լեզվի ծակածին դեղ չկա»**, **«Մի խելքը լավ է, երկուսը ավելի լավ»**, **«Փոս փորողը ինքն ա ընկնում փոսը»**, **«Տասը չափիր, նոր մեկը կտորիր»**, **«Չարսի հաստ կոնքերով փեսուն լավություն ա անում»**, **«Կռիվ ա, փլավ չեն բաժանում»**, **«Կու ժ, քեզ եմ ասում, կուլա՛, դու լսիր»** և այլն:

ԳԼՈՒԽ 4

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Երևանի խոսակցական լեզուն տարբերվում է իր քերականական առանձնահատկություններով, որոնք որոշակիորեն դրսևորվում են և՛ ձևաբանական, և՛ հատկապես շարահյուսական մի շարք իրողություններում:

Բառերի, նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, ինչպես փաստում են Երևանի վարչական տարբեր շրջաններում կատարված հարցումները, տարբեր դրսևորումներ ունեն մեր լեզվի գրական և խոսակցական տարբերակներում: Հետևյալ բաժնում վեր են հանվում խոսակցական լեզվին՝ մասնավորապես Երևանի խոսակցական լեզվին բնորոշ քերականական առանձնահատկությունները: Ներկայացվում են դրանց ոչ գրական դրսևորումները, որոնք արմատացել են խոսակցական լեզվում, ինչպես նաև դրանց պատճառները:

ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Այս բաժնում մեր նպատակն է բացահայտել և ներկայացնել խոսքի մասերի, նրանց քերականական կարգերի ու հատկանիշների ձևաբանական զուգաձևությունների ու տարբերակների ոճական նրբերանգները, նրանց պատկերավորման, արտահայտչական հնարավորությունները: Այս դեպքում արդեն ձևաբանական կարգերի ոճական հնարավորություններն ու դրսևորումներն ավելի նեղ են ու սահմանափակ, քան բառային կամ շարահյուսական մակարդակներում, քանի որ ձևաբանական ոլորտում լեզվական միավորների ընտրության հնարավորությունները, նրանց ոճական, արտահայտչական նրբերանգներն ավելի սահմանափակ են՝ նկատի ունենալով գրական լեզվի նորմի պահանջները:

ԳՈՅԱԿԱՆ: Գոյականի բոլոր քերականական կարգերն այս կամ այն չափով օժտված են ոճական-արտահայտչական հնարավորություններով, առավել ևս գոյականի քերականական այն կարգերը, որոնք հարուստ են զուգաձևություններով և ձևաբանական այլ տարբերակներով:

Հաճախ առօրյա խոսքում անձնանուններին ավելացնում են փաղաքշական-փոքրացուցիչ մասնիկներ, խոսքն ավելի մտերմիկ դարձնելու նպատակով, ինչպես՝ **Անուշիկ, Հայկիկ, Արամիկ** և այլն, երբեմն էլ՝ **Աճո, Կարո, Հովո, Լուսո, Ֆելո, Ռուբո** և այլն: Շատ հաճախ անձնանուններին ավելացնում են օտարաբան «չիկ», «չո» փաղաքշական մասնիկներ, ինչպես՝ **Արմանչո, Կորյունչիկ, Արմենչիկ, Տիգրանչիկ** և այլն: Ոչ մի ժողովուրդ, նույնիսկ անգլիացիները, այնքան չքսպիրյան անուններ չունեն, որքան մենք, շատ հաճախ աղավաղած ձևերով, ինչպես՝ **Օֆեյլա** (Օֆ, Օֆո, Օֆիկ), **Դեզդենոնա** (Դեզ, Դեզո, Դեզի, Դեզիկ), **Ռոմեո** (Ռոմիկ), **Համլետ** (Համո, Համիկ), **Ջուլիետ** (Ջուլ, Ջուլո, Ջուլիկ) և այլն:

Հատուկ անունները՝ անձնանունները, տեղանունները սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում, բայց առանձին դեպքերում ոճական հատուկ

նպատակադրմամբ կարող են հանդես գալ նաև հոգնակիի ձևերով, ինչպես՝ «Դրա ամուսինը տարիներով **մոսկվաներից** տուն չի գալիս», «Մեռավ **ռուսաստանները** քաջ զալով» և այլն:

Գրական լեզվում *տղա*, *աղջիկ*, *երեխա* գոյականները հոգնակի թվում ստանում են -ներ հոգնակերտ մասնիկը, իսկ խոսակցական լեզվում կիրառվում են **տղերը/տղեք**, **աղջկերք**, **երեխեք** և այլ ձևերով:

Եթե գրական լեզվում -*ցի* վերջավորություն ունեցող գոյականները ստանում են -ներ հոգնակերտ մասնիկը, խոսակցական լեզվում դրանց հոգնակին հաճախ ք-ով է կազմվում, ինչպես՝ **քաղաքացիք**, **սննցիք**, **գյուղացիք** և այլն:

Յուրովական զուգածություններից խոսակցական լեզվում նախընտրելի են **-ի** հոլովակազմիչով ձևերը, նույնիսկ այլ հոլովումներին պատկանող գոյականները խոսակցական լեզվում ստանում են **-ի**, ինչպես՝ **եզի** (եզան), **գառի** (գառան), **թաղումի** (թաղման), **անունի** (անվան), **ազգանունի** (ազգանվան), **ծկի** (ծկան) և այլն:

Ստացականություն, պատկանելություն արտահայտելու համար **իմ**, **քո** ստացական դերանունների հետ հաճախ օգտագործվում են նաև նույն իմաստն արտահատող **ս**, **դ** հոդերը՝ **իմ գրիչս**, **քո շորդ** և այլն:

Հաճախ ուղղական հոլովը գործածվում է այլ հոլովի փոխարեն, ինչպես՝ «-Ամեն **տունն** ա՞: -Չէ՛, **տունը** չի», «**Կանգառը** պահի՛»:

Հայտնի է, որ միավանկ բառերին ավելանում է **-եր** հոգնակերտ մասնիկը, բայց հաճախ խոսակցական լեզվում նկատվում են շեղումներ, օրինակ՝ «**Ծառները կանաչել են**»:

ԱԾԱԿԱՆ: Ածականները, որպես առարկայի որակական հատկանիշ ցույց տվող բառախումբ, իրենց զնահատողական դերով խոսքի մեջ ունեն ոճական բազմապիսի երանգավորում ու կիրառություններ, առավել ևս, եթե նկատի ունենանք համեմատության աստիճանների առկայությունը:

Լայն ու բազմազան են որակական ածականների իմաստային ընդգրկումները, դրանցով էլ պայմանավորված են նրանց ոճական բազմապիսի հնարավորություններն ու դրսևորումները: Դրանց գործածումը խոսքին հուզականություն ու արտահայտչականություն է հաղորդում: «**Քո կարծ խելքով ինձ բան ես սովորացնում**», «**Թունդ կռիվ ա գնում դուրսը**» և այլն: Արտահայտչական բազմազանությամբ կիրառական մեծ հաճախականություն ունեն հատկապես գույներ անվանող ածականները, քանի որ բոլոր առարկաներն ունեն գունային ինչ-որ հատկանիշներ⁴³, ինչպես՝ *սև սիրտ*, *վարդագույն ակնոց* և այլն:

Հաճախ բաղդատական աստիճանի իմաստն արտահայտվում է նաև ածականի դրական ձևի և համեմատելի առարկայի բացառական հոլովի միջոցով, ինչպես՝ «**Մեծը փոքրից սիրուն ա**» և այլն:

Որոշ կիրառություններում հանդիպում են նաև այնպիսի դեպքեր, երբ ածականի ուղիղ ձևին ավելանում է նույն ածականի բացառական հոլովածևը, ինչպես՝ «**Լավից լավն էլ կա**»:

⁴³ Ռ. Սկրտյան, *Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն*, Ե., 1982, էջ 135:

ԹՎԱԿԱՆ: Թվական անունը որքան էլ մեծ հաճախականություն ունի երևանի խոսակցական լեզվում, այնուամենայնիվ առանձնակի ոճական երանգավորում չունի, այսինքն՝ չունի պատկերավորություն, հուզական, փոխաբերական իմաստ և բազմիմաստություն:

Պարզապես պետք է նկատել, որ թվականները առօրյա խոսքում կարող են սխալ կիրառություններ ունենալ, ինչպես՝ **տաս** (փոխ.՝ տասը), **ութսանուն** (փոխ.՝ ութսուն), **հարյուր** (փոխ.՝ հարյուր), **իրեք** (փոխ.՝ երեք), **տասերկու** (փոխ.՝ տասներկու) և այլն:

ՂԵՐԱՆՈՒՆ: Երևանի խոսակցական լեզվում խոսքի մասերից կիրառական ավելի մեծ հաճախականություն ունեն դերանունները (հատկապես՝ անձնական և ցուցական):

Անձնական դերանունների ոճական բազմապիսի կիրառություններից մեկն այն է, որ դեմքի քերականական կարգը կարող է ունենալ զանազան դրսևորումներ՝ մի դեմքը փոխարինելով մեկ այլ դեմքով: Այս դեպքում կարևոր նշանակություն ունեն մաս խոսքային իրավիճակն ու միջավայրը: Այսպես՝ ընկերը դիմում է ընկերոջը. **«Ո՞նց ենք»**, մայրը դիմում է փոքրիկին.

«Ի՞նչ ենք ուտելու հիմա», կամ՝ մայրը՝ իր ընկերուհիներին. **«Սենք դեռ պամպերս ենք հագնում»** և այլն, այսինքն՝ երկրորդ դեմքի փոխարեն գործածվում է առաջին դեմքը՝ խոսքին ավելի մտերմիկ երանգավորում հաղորդելու նպատակով:

Առաջին դեմքի դերանունը երբեմն կարող է փոխարինվել երկրորդ դեմքով, հատկապես մենախոսության մեջ. **«Ասա՛ ինչի՞ զնացիր, որ ինքն էլ բողոքի»**, **«Ասա՛ քո ինչի՞ն էր պետք, որ խառնվեցիր, մի բան էլ դու տուժեցիր»** և այլն:

Ինձ և քեզ դերանունների փոխարեն խոսակցական լեզվում հաճախ կիրառվում են դրանց բարբառային ձևերը՝ **ինձի, քեզի...**

Ստացական հոդերի կիրառությունն ավելի հարազատ, մտերմիկ երանգ է հաղորդում խոսքին և նույնպես բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին (**բալես, կյանքս, արևս, սիրտս, Կարենս**): Մեր առօրյա խոսքում նկատելի է նաև ստացական հոդի և դերանվան միաժամանակյա գործածությունը, որը բարբառային իրողություն է և գրական լեզվի նորմով հանձնարարելի չէ, ինչպես՝ **իմ քուրիկս, քո տասիկդ** և այլն:

Որոշակի կիրառություն ունեն նաև անձնական դերանունների՝ միմյանց և այլ խոսքի մասերի հետ զուգորդական կիրառությունները, ինչպես՝ **այ քեզ բան, իրան-իրան (իրեն-իրեն) խոսել** և այլ կապակցությունները, որոնք խոսքին կարող են հաղորդել զարմանք, զայրույթ, հաղորդողի հոգեվիճակ և ոճական որոշակի երանգավորում են ստանում համապատասխան խոսքային իրադրության մեջ:

Ցուցական դերանուններից երևանի խոսակցական լեզվում համեմատաբար ավելի գործուն են *սա, դա, նա, այս, այդ, այն* դերանունները, որոնք, առարկա, հատկանիշ ցույց տալով հանդերձ, երբեմն որոշակի ոճական նպատակով, հատկապես խոսողի վերաբերմունքով պայմանավորված, կարող են գործածվել անձերի փոխարեն: Սա հատկապես լինում է այն դեպքում, երբ խոսողը ոչ բարյացակամ, երբեմն նույնիսկ արհամարհական վերաբերմունք ունի տվյալ անձի նկատմամբ կամ

խոսակիցն ընդհանրապես անծանոթ է նրան, ինչպես՝ **«Սա ի՞նչ է ուզում ինձանից»:**

Արհամարհական վերաբերմունքը հատկապես դրսևորվում է, երբ նշված դերանունները գործածվում են *ո՛վ, ի՞նչ* հարցական դերանունների հետ միաժամանակ, ինչպես՝ **«Էս ի՞նչ մարդ ես», «Ո՞վ ես արա՛»** և այլն:

Ժողովրդախոսակցական բառաշերտի բաղադրիչներ են համարվում նաև դերանվանական համակարգում **այ>է** հնչյունափոխված տարբերակները (**էս, էդ, էն** և սրանցով կազմված ձևերը՝ **էսքան, էդչափ, էդպես, էնպես, էստեղ** և այլն):

ԲԱՅ: Բայը քերականական կարգերով ու հատկանիշներով հարուստ խոսքի մաս է, ունի բազմաթիվ քերականական զուգածություններ ու տարբերակային ձևեր, որոնցով և պայմանավորված են խոսքի մեջ նրա դերն ու արտահայտչական պաշարների հարստությունը: Խոսակցական լեզվում առավել ակնհայտ են բայի դիմավոր, եղանակային ձևերի յուրահատուկ կիրառությունները, չնայած երբեմն որոշակիորեն առանձնանում են նաև առանձին դերբայական ձևեր:

Առանձին դեպքերում կիրառվում են դիմային մի շարք փոխանցումներ, այսպես՝ առաջին դեմքի բայաձևերի գործածությամբ ընդհանրական իմաստով արտահայտվում է նաև երկրորդ դեմքի իմաստ: Ինչպես՝ ուսուցիչը դիմում է աշակերտին. **«Այս տարի լա՛վ ենք սովորելու»**, առաջին դեմքի գործողություն կատարողի իմաստը հաճախ կարող է արտահայտվել երկրորդ դեմքի բայաձևերի միջոցով, ինչպես՝ **«Ինչքան ուզում ես սրան բացատրի, բան չի հասկանում»:**

Ժողովրդախոսակցական լեզվում բաղադրյալ ստորոգյալի երրորդ դեմքի հետ իբրև հանգույց կիրառվում է **ա-ն**, ինչպես՝ **մեծ ա, լավն ա, կանաչ ա**, պարզ ստորոգյալում **ա-ն** փոխարինում է է օժանդակ բային, ինչպես՝ **գրում ա, գալիս ա, ուտում ա** և այլն:

Ինչպես գիտենք, խոսակցական լեզվին բնորոշ է երկար ձևերի փոխարեն կարճերին նախապատվություն տալը, ինչպես՝ **հանձնի, բերի** (փոխ.՝ հանձնեցի, բերեցի), դա փաստում են նաև հարցումները:

Չնայած վերոնշյալին՝ խոսակցական լեզվում հաճախ հնչյունի հավելում է լինում, կամ տվյալ հնչյունը փոխարինվում է մեկ այլ հնչյունով: Շարունակ լսում ենք **կապնվել-ն** (փոխ.՝ կապվել) ու **քծնվել-ը** (փոխ.՝ քծնել), **տուժվել-ն** (փոխ.՝ տուժել) ու **զուգադիպվել-ը** (փոխ.՝ զուգադիպել), **թռնել-ն** (փոխ.՝ թռչել) ու **փախնել-ը** (փոխ.՝ փախչել):

Բայաձևերի (անդեմ թե դիմավոր) սխալ ձևերի գործածության օրինակները երևանի խոսակցական լեզվում նույնպես քիչ չեն:

Ինչ վերաբերում է դերբայների սխալ գործածությանը, ապա շատ տարածված է անորոշ դերբայի **ել, ալ** վերջավորությունների շփոթը, մեկի փոխարեն մյուսի գործածությունը: Օրինակ՝ ճիշտ են՝ **խոսել, կաթել, ցավել, հաչել, թողնել** և այլն: Սխալ են՝ **խոսալ, կաթալ, ցավալ, հաչալ, թողալ** և այլն:

Տարածված է ածանցավոր բայերի ուղիղ (անորոշ դերբայի) ձևերի սխալ գործածությունը: Օրինակ՝ ճիշտ են՝ **թողնել, թռչել, խփվել, կորչել**,

կաչել, վախենալ և այլն: Սխալ են՝ թողել, թռնել, խփնվել, կորել, կպնել, վախել և այլն:

Պատճառական **-եցն** ածանցի փոխարեն հաճախ կիրառվում է **-ացն** ածանցը: Օրինակ՝ ճիշտ են՝ *հիշեցնել, ցավեցնել, քնեցնել, իջեցնել, խոսեցնել, մոտեցնել* և այլն: Սխալ են՝ *հիշացնել, ցավացնել, քնացնել, իջացնել, խոսացնել, մոտացնել* և այլն:

Այստեղ պետք է հիշել, որ **ան** և **են** սոսկածանցավոր բայերի դեպքում (մոտենալ, վախենալ, բարձրանալ, քարանալ) պատճառական ածանցը (ացն, եցն) դրվում է՝ ելնելով սոսկածանցից՝ *մոտեցնել, վախեցնել, բարձրացնել, քարացնել* և այլն:

Խոնարհված բայերի սխալ գործածություններից խոսակցական լեզվում հաճախակի կիրառություն ունեն հետևյալ ձևերը. վաղակատար դերբայով կազմված սահմանական եղանակի վաղակատար ժամանակաձևում կրկնվում է չ սոսկածանցի գործածության սխալը: Օրինակ՝ ճիշտ են՝ *թռել են, կպել են, սառել են, փախել էի, հանգել էր* և այլն: Սխալ են՝ *թռչել են, կպչել են, սառչել են, փախչել էի, հանգչել էր* և այլն:

Պատճառական ածանց (ացն, եցն, ցն) ունեցող բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է ածանցի **ն-ն** ը-ի փոխելով և ավելացնելով **ի, իր, եց, ինք, իք, ին** վերջավորությունները (*խոսեցնել-խոսեցրել-խոսեցրի, խոսեցրիր, խոսեցրեց, բարձրացնել-բարձրացրել-բարձրացրիք, բարձրացրիք, բարձրացրին*): Ուստի և սխալ են *խոսեցրեցի, խոսեցրեցիր, խոսեցրեցրիք, խոսեցրեցին, իջեցրեցի, հարցրեցի, վերցրեցի* և այլ բառերի այս ավելորդ **եց**-երը:

Պետք է նկատել, որ խոսակցական լեզվում հաճախ գործածվում են անցյալ կատարյալի այնպիսի ձևեր, որոնք ավելի շուտ հասարակաբանական իրողություններ են, ինչպես՝ **գրիմ, գնացիմ, կարդացիմ, երգիմ, ասիմ, տեսամ, լսամ, կերամ, էկամ** և այլն:

Խոսակցական լեզվում, իբրև կանոն, անվանական բաղադրյալ ստորոգյալի ժխտականը երրորդ դեմքում ստանում է **ի** հանգույցը, որին միանալով չ ժխտականը՝ դառնում է **չի**, ինչպես՝ **ցուրտ չի, վատը չի, քնած չի, տուն չի** և այլն, գրականում հանձնարարելի են **ցուրտ չէ, վատը չէ, քնած չէ, տուն չէ** և այլ ձևերը:

Խոնարհման համակարգում ևս նախընտրելի են կարճ ու սեղմ ձևերը, և խոնարհման պարզ բայերի հրամայականի և արգելական հրամայականի հոգնակիի մի շարք ձևեր, որոնք գրական լեզվում ցոյական հիմք են ստանում, խոսակցական լեզվում գործածվում են անցոյական ձևերով, ինչպես՝ **գրեցե՛ք-գրե՛ք, նստեցե՛ք-նստե՛ք-մի՛ նստեք, ասացե՛ք-ասե՛ք-մի՛ ասեք**:

Որպես կանոն ե խոնարհման (**-ել** վերջավորությամբ) պարզ և **ա, ե** խոնարհման սոսկածանցավոր բայերի հրամայական եղանակի եզակին (նաև արգելականը) կազմվում է **-իր** վերջավորությամբ (խոսի՛ր, գրի՛ր, թռի՛ր, բարձրացի՛ր, մի՛ երգիր, մի՛ կանգնիր): Խոսակցական լեզվում հիմնականում գործածվում է առանց **ր-ի** ձևը, ինչպես՝ **խոսի՛, գրի՛, կանգնի՛, երգի՛, մի՛ երգի, մի՛ կանգնի** և այլն:

Գրական լեզվում խոնարհված բայով արտահատված առաջին դեմքի բաղադրյալ ստորոգյալի դեպքում երկրորդ բաղադրիչը սովորաբար արտահայտվում է անորոշ դերբայի ուղիղ ձևով՝ **ուզում եմ կանչել, վախենում եմ ասել** և այլն, մինչդեռ խոսակցական լեզվում այն հաճախ կազմվում է խոնարհված բայ+ըղծական եղանակի բայաձև կառույցով, ինչպես՝ **ուզում եմ կանչեմ, վախենում եմ ասեմ** և այլն:

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱՎՅԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

Չթեքվող խոսքի մասերի ոճական արժեքը, նրանց հուզական, արտահայտչական երանգավորումը բավականին սահմանափակ է, քան նախորդ խմբի խոսքի մասերինը, այդ իսկ պատճառով նշված բառախմբերի ոճական երանգավորման քննությանը հաճախ նույնիսկ չեն անդրադառնում:

ՄԱԿՔԱՅ: Պետք է նշել, որ մակբայակերտ ածանցների մի մասը ունի ժողովրդական ծագում և համապատասխանաբար գործածվում է առօրյա խոսակցական ոճում, ինչպես՝ **-վարի՝ մարդավարի, տմավարի, աղայավարի, հայավարի, ընկերավարի, -անց՝ կողքանց, երեսանց, տականց, -են՝ թռվռալեն, զրնգալեն, գրգռալեն, -ու՝ կսկծու, ամոթու, ջգրու, ինտղու** և այլն:

Երևանի խոսակցական լեզվում «դիմաց» գրական ձևի փոխարեն հաճախ կիրառում են «դեմը» ձևը: Այդպես նաև՝ **դեմը, դեսը, դենը** բառերի կիրառությունները մատնանշում են խոսակցական, բարբառային բնույթը, ընդգծում տվյալ անձի գավառական ծագումը, նրա բարբառախոս լինելը, որը միաժամանակ մատնանշում է տվյալ անձի կրթական մակարդակը:

Մակբայների ոճական արժեքն ավելի ակնհայտ է դառնում խոսքում, երբ գործածվում են ժողովրդական ծագում ունեցող և խոսակցական ոճին բնորոշ կազմությամբ ածանցավոր մակբայներ, ինչպես՝ **փոքրուց, մորուց, ամոթու, ջգրու, հայավարի, թռվռալեն** և այլն:

ԿԱՊ: Օտար լեզուների, հատկապես ռուսերենի անմիջական ազդեցությամբ նկատելի են առանձին կապերի սխալ, անտեղի, անհարկի կիրառություններ, որոնք խճողում են խոսքը: Նման կիրառությունները նկատելի են և՛ գրավոր, և՛ բանավոր խոսակցական լեզվում և որպես օտարաբանություններ՝ գրական լեզու են թափանցել հիմնականում մամուլի և թարգմանական գրականության միջոցով: Այսպես՝ բավականին տարածված են «վրա» կապի և նրա խնդիրների սխալ կիրառությունները, ինչպես՝ **«Քո վրա մեծ բեռ ես վերցրել», «Իմ վրա լավ տպավորություն թողեց», «Սիրահարվել է Անհի վրա», «Կասկածում եմ ազնվությանդ վրա»** և այլն:

Ռուսերենի անմիջական ազդեցությամբ է նաև «մոտ» կապի կիրառությունը տեղի իմաստ ցույց տալու առումով, ինչպես՝ **«Տնօրենի մոտ լավ տպավորություն թողեցի»,** երբեմն էլ՝ **«ես ինձ մոտ եմ»** արտահայտությունը: Պետք է հիշել, որ *մոտ* բառը նշանակում է *մոտիկ, կողքին* և ոչ՝ *մեջ*: Յետևաբար սխալ են վերոհիշյալ արտահայտությունները:

Հաճախ անհարկի է գործածվում «համար» կապը: Նշված կապը հաճախ գործածվում է «ինչու» հարցական դերանվան հետ (ինչու համար), որը դարձյալ սխալ է, ճիշտ է՝ «Ինչի՞ համար ես եկել» և այլն:

Երբեմն «միջև» կապի փոխարեն գործածվում է «մեջ»-ը, որը դարձյալ այդ կիրառությամբ համընդարարելի չէ, քանի որ «մեջ»-ը ցույց է տալիս *տեղ, պարունակություն*, մինչդեռ «միջև»-ը՝ երկու կամ ավելի առարկաների կամ անձերի միջև եղած տարածական հարաբերություն և այլն:

Ինչ վերաբերում է կապերի խնդրառության սխալ կիրառություններին, որոնք շատ տարածված են խոսակցական լեզվում, ապա դրանց կանդրադառմանը հաջորդ՝ «Շարահյուսական որոշ իրողություններ երևանի խոսակցական լեզվում» բաժնում:

ՇԱՂԿԱՊ: Խոսակցական լեզվում առավել գործածական են **ու, էլ, թե, բայց, ուրեմն** (երբեմն՝ ուրեմնս), **որ, ինչ, թե, թե որ, քանի, մինչև, մինչև որ, հենց, հենց որ, մինչդեռ, սակայն** շաղկապները:

Ու շաղկապը ավելի հաճախ գործածական է բանավոր խոսքում, քանի որ արտասանական առումով ավելի սեղմ է և բարեհունչ, քան **և**-ը:

Խոսակցական լեզվում գործածական են նաև **համա, ախր** շաղկապները, որոնք հաճախ կարող են փոխարինել ժխտական շարահյուսական կառույցներին:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Լայն առումով վերաբերմունք ցույց տվող խոսքի մասերի առաջին, հիմնական տարբերությունն այն է, որ եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի դատողական վերաբերմունքը և առանձին երանգավորում հաղորդում այս կամ այն հասկացությանը, մինչդեռ ձայնարկություններն արտահայտում են խոսողի անմիջական, զգացական վերաբերմունքը: Հենց սրանցով էլ պայմանավորված են նրանց կիրառությունների առանձնահատկությունները, և այս առումով էլ նրանցից յուրաքանչյուրին անդրադառնալիս անհրաժեշտ է դիտարկել տարբեր չափանիշներով՝ հատկապես նկատի ունենալով նրանց կիրառության ոլորտները գործառական ոճերի համակարգում:

Ձայնարկություններն արտահայտում են խոսողի զգացմունքները՝ ուրախություն, վիշտ, ցավ, հիացմունք, զարմանք, ինչպես՝ **«Ձան, ես ինչ տաք ջուր ա», «Ա՛խ, ոնց ցավաց», «Վա՛յ, ես չեմ դիմանում», «Ա՛յ, քեզ տղա», «Օ՛Ֆ, հոգնել եմ արդեն»** և այլն: Սրանք բացականչական ձայնարկություններն են, իսկ կղչական ձայնարկությունները հիմնականում գործածվում են խոսակցի ուշադրությունը գրավելու համար՝ նրան մի բան հաղորդելու, մի գործողության մղելու և այլ նպատակներով, ինչպես՝ **հե՛յ, է՛յ, ա՛յ, տո՛, դե՛** և այլն:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ նաև **արա** բառին: Թեև խոսակցության լեզվում այս ձայնարկությունն էլ ունի գոյության իրավունք, բայց ցավալի՞ն դրա համաճարակի պես տարածված լինելն է, անխնա շահագործումը անեն առիթով, հուզական բոլոր գունավորումներով, ինչպես՝ **«Արա, լա՛վ էլի, արա՛ », «Արա՛, ձեռ մի տուր», «Չեկա՛ ի, արա՛ », «Վա՛յ, արա՛ »** և այլն:

Ձայնարկություններն, արտահայտելով տարբեր զգացումներ՝ պայմանավորված անհատի, խոսողի տրամադրությամբ, կարող են

բազմիմաստ լինել: Այսպես՝ «վա՛յ», «վա՛խ» ձայնարկությունները տարբեր իրավիճակներում կարող են արտահայտել և՛ զարմանք, և՛ հիացմունք, և՛ ափսոսանք, և՛ դժգոհություն, վախ, ցավ և այլն, ինչպես՝ **«վա՛յ, ինչ վատ բան ստացվեց»**, **«վա՛յ, շատ ուրախ եմ»**, **«վա՛յ, էս դու՞ ես»** և այլն:

ԵՂԱՆԱԿՎՈՐՈՂ ԲԱՆԵՐ (վերաբերականներ): Ըստ իրենց արտահայտած բառային իմաստների՝ եղանակավորող բառերը կարող են լինել հաստատական, ժխտական, ցուցական, երբայական, սաստկական և այլն:

Հաստատական եղանակավորիչներն արտահայտում են հաղորդվող նյութի, ասվածի հավաստի, հաստատական, ստույգ, ճշգրիտ լինելը, ինչպես՝ **իհարկե, իսկապես, իրողք**, իսկ ամենատարածվածը և գործածականը պատասխանական «այո՛» բառն է, խոսակցական «հա՛» տարբերակով, որը որպես պատասխան հաճախ կարող է փոխարինել ամբողջ նախադասությանը՝ դրանով իսկ նպաստելով խոսքի սեղմությանը:

Երիտասարդների խոսքում տարածված սխալ ձևեր են՝ **իրողից, իսկականից, մույնիսկ՝ լուրջ, լրջով** և այլն բառերը, որոնք եղանակավորող բառերի դեր են կատարում, ինչպես՝ **«Լուրջ, Խօր տեսել եմ իրան»**, **«Լրջով, ընձեր, կգաս, չէ՞, Խօր»**, **«Իրողից իրա պես դասախոս էլ չունենք»**:

Ժխտական եղանակավորիչները հիմնականում **ո՛չ** և **չէ՛** ձևերն են. վերջինս հենց խոսակցական ոլորտի տարբերակ է:

Երկբայական եղանակավորիչները արտահայտում են հաղորդվող մտքի, իրականության թվացյալ, անիրական, կասկածելի կամ հավանական լինելը: Բաժանվում են հետևյալ խմբերի՝ երկբայական-հավանական, երկբայական-անհավանական և երկբայական-հարցական: Դրանցից են՝ **գուցե, երևի, ըստ երևույթին, մի՞թե** և այլն: Նշված բառախմբից առավել գործածական մի՞թե եղանակավորիչի փոխարեն խոսակցական լեզվում հաճախ գործածում են **նեուժելի** օտարաբանությունը:

Խոսողի կամայական վերաբերմունքն են արտահայտում և ոճական որոշակի երանգավորում ունեն նաև սաստկական, կամային, զգայական և զիջական եղանակավորիչները, որոնք, դրվելով շարահյուսական կառույցի այս կամ այն անդամի վրա, ընդգծում են այն՝ արտահայտելով սաստկություն, բաղձանք, կանք, ցանկություն: Դրանցից են՝ **թող, ապա, հապա, երանի, երանի թե, երնեկ** և այլն: Առօրյա խոսակցական լեզվին բնորոշ են հատկապես **ոնց որ, հրես, էլի, ոնց որ թե, հո** եղանակավորիչները, որոնք համապատասխան երանգավորում, ժողովրդախոսակցական լիքը են հաղորդում խոսքին: Այդպես նաև՝ **«երնեկ ես էլ քո տարիքին լինեի»**, **«երանի քո հավեսին»**, **«հո ծառադ չեմ»**, **«ոնց որ երեխա լինես»** և այլն:

Խոսքի մասերի գործառնության յուրահատկությունները, ինչպես նաև ընդհանրություններն ու տարբերությունները թե՛ գրական, և թե՛ խոսակցական լեզվում դիտարկելիս անպայման պետք է հաշվի առնել նաև դրանց որակական և քանակական հատկանիշները: Ինչպես նկատել է Ն.

Սարգսյանը⁴⁴, խոսակցական լեզվում, ի տարբերություն գրական լեզվի, մի շարք խոսքի մասեր՝ գոյական, ածական, ինչպես նաև կապերի, շաղկապների ու մակբայների որոշ տեսակներ, համդես են գալիս գործածության նվազ հաճախականությամբ: Դա պայմանավորված է նախ նրանով, որ խոսքի ընթացքում խոսակիցները կարող են միայն մեկ անգամ հիշատակել խոսքի առարկան կամ հատկանիշը (գոյականը կամ ածականը), քանի որ նրանց քաջ հայտնի է խոսակցության մյուսը: Այստեղ ելական դեր ունեն նաև իրադրության մյուս դրսևորումները՝ զգայական միջավայրն ու նախմատացությունը, ինչպես նաև համառոտման, տնտեսման սկզբունքը:

Խոսակցական լեզվում գործածության ակտիվացմամբ ու բարձր հաճախականությամբ աչքի են ընկնում մի շարք խոսքի մասեր՝ դերանուններ, ձայնարկություններ ու վերաբերականներ: Սրանք իրենց գործուն ակտիվությամբ հաճախ օգտագործվում են գոյականների ու ածականների փոխարեն:

Բայ խոսքի մասը «... երկու համակարգերում էլ պահպանում է իր կենտրոնական դերը՝ հանդես գալով որպես հաղորդակցության հիմնական կազմիչ»⁴⁵:

Ըստ մեր իրականացրած մեծածափաղ դիտարկման՝ Երևանի խոսակցական լեզվում տվյալ երևույթների տոկոսային հարաբերությունը նույնն է:

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՇԱՐԿՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շարահյուսությունը լեզվի այն բաժինն է, որն ուսումնասիրում է բառերի և նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, դրանց առանձնահատկությունները, հարաբերություններն իրար նկատմամբ նախադասության կազմում, նախադասության տիպերն ու կառուցվածքը:

Ինչպես գիտենք, բառերն ու նախադասություններն իրար կապակցվում են որոշակի օրինաչափություններով: Բառերի և նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները ունեն նմանություններ և տարբերություններ, դրանք տարբեր դրսևորումներ ունեն մեր լեզվի գրական և խոսակցական տարբերակներում: Մի կողմ թողնելով մեր լեզվի գրական տարբերակի շարահյուսական միջոցների ու եղանակների ուսումնասիրումը՝ ներկայացնենք Երևանի խոսակցական լեզվին բնորոշ շարահյուսական առանձնահատկությունները:

Ինչպես նշել ենք նախորդ բաժնում, խոսակցական լեզուն, ի տարբերություն գրականի, ավելի ազատ է, անկաշկանդ: Քանի որ խոսքը նախապես պատրաստված չէ, ուստի կառուցվածքային ազատություն կա,

⁴⁴ **Ն. Սարգսյան**, *Խոսքի մասերի գործածության առանձնահատկությունները խոսակցական լեզվում*, ԼՂՅ Մեսրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. Կրթությունը և գիտությունը համաշխարհայնացման դարաշրջանում, Ե., «Լիմուշ», 2012, էջ 291-294:

⁴⁵ **Ն. Սարգսյան**, *Նշվ. աշխ.*, էջ 292:

դա, սակայն, չի նշանակում, թե նախադասությունները կազմվում են կամայական սկզբունքներով:

Ի տարբերություն գրական լեզվի՝ խոսակցական լեզվին բնորոշ չեն նախադասության կապակցման բարդ տիպերը, երկարաշունչ նախադասությունները: Առօրյա հաղորդակցման ընթացքում նախապատվությունը տրվում է **պարզ նախադասություններին**, որոնք խոսակցի կողմից հեշտ ընկալելի են: Բացի այդ՝ առատ կիրառություն ունեն խոսքին օժանդակող միջոցները՝ **ժեստերն ու դիմախաղը**, որոնք այս կամ այն կերպ նպաստում են խոսքի ըմբռնմանը, միտքն ավելի արագ ընկալելուն:

Խոսակցական լեզվին բնորոշ է **պարզ**, հատկապես **համառոտ նախադասությունների** կիրառությունը: Լայն կիրառություն ունեն **թերի նախադասությունները**:

Նախադասությունը թերի է, եթե նրա այս կամ այն անդամը կամ մի քանի անդամները բաց են թողնված, բայց խոսքային հյուսվածքում ընկալվում են: Թերի նախադասությունները հիմնականում բնորոշ են լեզվի խոսակցական տարբերակին՝ կենդանի խոսքին, առավելապես կիրառվում են երկխոսություններում: «Խոսակիցը մյուսի խոսքից վերցնում է մի որևէ բառ կամ արտահայտություն՝ իբրև առարկ, և որովհետև մյուսը արդեն լրիվ նախադասությամբ արտահայտել է, հիշյալ առարկը զուգորդվում է լրիվ նախադասության չսաված բառերին և դառնում է լիովին հասկանալի: Օրինակ՝ -Դու այնտեղ կտեսնես տեղական ինտելիգենցիայի ընտիր մասը: - Ինչու՞ ընտիր»⁴⁶: Նախադասության կազմում զեղչվում է այն ամենն, ինչ հնարավոր է կրճատել:

Խոսակցական լեզվին բնորոշ են նախադասության անդամների զեղչման բոլոր տիպերը՝ և՛ ենթական, և՛ ստորոգյալը, և՛ մյուս լրացումները: Պետք է նշել, որ նախադասության անդամների զեղչումը խոսակցական լեզվի ամենաբնորոշ հատկանիշներից մեկն է: Դժվար է գտնել մի նախադասություն, որտեղ որևէ անդամ զեղչված չլինի: Օրինակ՝ *Առավոտը էլի գործի* (Ես առավոտյան էլի գործի եմ գնալու – ստորոգյալի, ենթականի զեղչում): Կամ՝ *Ես հիմար, դու՛ խելացի* (Ես հիմար եմ, դու խելացի ես-օժանդակ բայի զեղչում):

Սովորաբար նախադասության անդամների զեղչումը պայմանավորված է իրադրությամբ: Քանի որ կոնկրետ իրադրության մեջ խոսողի միտքը պարզ է, ուստի զեղչումները ավելի առատ են լինում, նախադասության հնարավոր բոլոր անդամները կրճատվում են: Նախաիրադրության իմացությունը թույլ է տալիս զեղչել նախադասության այն անդամները, որոնք հայտնի են իրադրությունից: Հատկապես երկխոսություններում երբեմն պատասխանական խոսքն արտահայտվում է մեկ բառով, սովորաբար ձայնարկություններով, եղանակավորող բառերով (*ա, չէ, օ՛ֆ, ըհը, հըմ, էհ*), երբեմն էլ նույնիսկ առանց բառերի՝ օժանդակ միջոցներով՝ ժեստերով ու դիմախաղով:

⁴⁶ 4. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, Ե., հ.2, 1964, էջ 59:

Խոսակցական լեզվին բնորոշ են անհանգույց ստորոգյալով նախադասությունները: Օրինակ՝ *Դու խենթ ու խելառ:*

Հաճախ գեղչվում է բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը: Օրինակ՝

- *Չգնացի ր:*

- *Դե որ անծրև էր...* (չգնացի):

Կամ՝

- *Արի՛ մեր տուն:*

- *Որ ջղայնացնե՛ս* (Գամ, որ ջղայնացնե՛ս):

Առհասարակ գեղչումները առատ են հրամայական նախադասություններում, իսկ խոսակցական լեզվում դրանք առավել հաճախակի գործածություն ունեն: Օրինակ՝ *Գործ չունես: Խելո՞ք մնա: Խելո՞ք գլուխդ հավաքի: Լեզուդ քեզ պահի: Գնա՛ գործիդ: Չե՛նդ...*

Պետք է նշել, որ թերի խոսքը, թերի նախադասությունները խոսակցական լեզվում ընկալվում են որպես նորմ:

Լեզուն ինքնին ձգտում է խնայողության, իսկ լեզվում տեղի ունեցող ցանկացած երևույթ նախ և առաջ դրսևորվում է լեզվի խոսակցական տարբերակում: Խոսակցական լեզվին բնորոշ է երկար ձևերի փոխարեն կարճ ձևերին նախապատվություն տալը, տվյալ միտքը մեկ բառով արտահայտելու ձգտումը, լրացումների հնարավոր գեղչումը և այլն: Օրինակ՝ հանձնել քննությունը-հանձնել, ընդունվել բուհ- ընդունվել...

Փոխանունությունները ևս, ինչպես գիտենք, նպաստում են խոսքի սեղմությանն ու խնայողությանը: Ուստի՝ զարմանալի չէ, որ խոսակցական լեզվում առատ կիրառություն ունեն փոխանունությունները, երբ տվյալ բառը արտահայտում է և՛ իր, և՛ փոխարինած բառի իմաստը՝ կցորդության, առընթերության զուգորդությամբ: Այս դեպքում փոխանունությունները դրսևորում են առարկաների միջև եղած զանազան հարաբերություններ: Ներկայացնենք որոշ օրինակներ՝ ըստ էդ. Աղայանի առանձնացրած տիպերի⁴⁷.

1. Պարունակողը՝ պարունակյալի փոխարեն, օրինակ՝ **երկու աման կերավ**, այսինքն՝ *երկու աման ճաշ կերավ*.

2. Հեղինակը՝ ստեղծագործության փոխարեն, օրինակ՝ **Կոմիտաս էր լսում**, այսինքն՝ *Կոմիտասի ստեղծագործություններն էր լսում*, այդպես նաև՝ **էդգար Պո էր կարդում** և այլն.

3. Նյութը՝ նրանից պատրաստված առարկայի փոխարեն, օրինակ՝ **մետաքս է հագել**, այսինքն՝ *մետաքսե հագուստ է հագել*.

4. Գործողությունը՝ արդյունքի փոխարեն, օրինակ՝ **ցուցադրում են նրա աշխատանքները**, այսինքն՝ *աշխատանքի արդյունքները*.

⁴⁷ էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 58-60:

5. Ժամանակը՝ տվյալ ժամանակամիջոցում տեղի ունեցող գործողության, երևույթի, իրադարձության փոխարեն, օրինակ՝ **չորս ժամ ունենք**, այսինքն՝ *չորս ժամ պարապմունք*։

6. Հատկանիշը՝ առարկայի փոխարեն, օրինակ՝ **մեծը**, այսինքն՝ *մեծ տղան*։

7. Պատկանելություն ցույց տվող առարկան՝ պատկանյալի փոխարեն, օրինակ՝ **իմը՝ իմ գիրքը**։

8. Քանակական թվականները՝ չափի միավորների և դրանց հետ կապված առարկաների փոխարեն, օրինակ՝ **երկու կիլո գնեց**, այսինքն՝ *երկու կիլո խնձոր*։

9. Դասական թվականները՝ հաջորդաբար կրկնվող առարկաների փոխարեն, օրինակ՝ **երկրորդը հրատարակվեց**, այսինքն՝ *երկրորդ գիրքը* և այլն։

Չր. Աճառյանը փոխանունության դրսևորում է համարում նաև **կրճատումը**, կամ **զեղչումը** (ellipse, բացթողում)⁴⁸։ Այս դեպքում հարակից բառերի միջև գաղափարական զուգորդությունը այնքան մոտ է, որ մեկը բավական է մյուսի մասին հիշեցնելու համար։ Օրինակ՝ **երկտող՝** երկտող գրության փոխարեն։

Ն. Սարգսյանը նշում է, որ «բացթողումները հաղորդակցության բաղադրության մեջ մտնող, բայց լեզվական դրսևորումներ չստացած երևույթներ են»⁴⁹։ Պետք է նշել, որ դրանք շատ բնորոշ են հատկապես խոսակցական լեզվին, քանի որ խոսակցական լեզուն սիրում է ամեն կարգի կրճատումներ։ Երբեմն որոշ արտահայտություններ կարող են միաժամանակ մի քանի անգամ կրճատվել, օրինակ՝ **10 համարի երթուղային տաքսիով գնում եմ > 10 համարի երթուղայինով գնում եմ > 10-ով գնում եմ**։ Սովորաբար այս կարգի կրճատումները պայմանավորված են լինում խոսքային իրադրությամբ, երբեմն նաև ժամանակաշրջանով։ Օրինակ՝ եթե մի քանի տարի առաջ *ուսանողական* ասելիս նկատի էր առնվում *ուսանողական տոմս* հասկացությունը, ապա այսօր ուսանողության շրջանում առաջին հերթին հասկանում են *ուսանողական ավտոբուս*, չնայած *ուսանողական տոմս* հասկացությունը ևս գործածական է։

Խոսակցական լեզվին բնորոշ են **պարզաբանումները**՝ այնպիսի բառեր կամ արտահայտություններ, որոնք, դրվելով նախադասության վերջում, պարզաբանում են ասվող միտքը կամ լրացուցիչ տեղեկություն են հայտնում։ Դրանք սովորաբար բուն խոսքից առանձնանում են հնչերանգային դադարով։ Օրինակ՝ «*Էսօր մտավ սենյակ՝ տնօրենի սենյակ...*», «*Գնացինք Արզնի, մի հրաշք տեղ...*», «*Գործս պրծա, էսօրվա անելիքս...*»։

⁴⁸ Չր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, Ե., 2005, էջ 59։

⁴⁹ Ն. Սարգսյան, *Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկությունները*, Լեզվի և ոճի հարցեր, հ. 10, Ե., էջ 278։

Ինչպես վերևում նշել էինք, խոսակցական լեզվում նախապատվությունը տրվում է պարզ նախադասություններին, ուստի գրական լեզվին բնորոշ բարդ ստորադասական կառույցների փոխարեն այստեղ կիրառվում են դերբայական դարձվածով պարզ նախադասություններ: Օրինակ՝ «*Քո ասած ձևով կանենք*» (Այն ձևով, որ դու ասում էիր), «*Չոգնած ժամանակ ուրախ երգեր են լսում*» (Այն ժամանակ, երբ հոգնած են լինում, ուրախ երգեր են լսում):

Պետք է նշել, սակայն, որ ոչ բոլոր դերբայական դարձվածներն են խոսակցական լեզվում կիրառվում, օրինակ՝ համակատար դերբայով դարձվածները խոսակցական լեզվում գրեթե չեն կիրառվում, դրա փոխարեն կիրառվում են կապական կառույցներ կամ անորոշ դերբայի բացառական հոլովով ձևեր: Օրինակ՝ *վազելու ժամանակ ընկավ (վազելիս ընկավ) կամ վազելուց ընկավ*:

Խոսակցական լեզվում առատ գործածություն ունեն ոչ թե շաղկապով, այլ **շարահարությամբ** կապակցությունները, որտեղ մեծ դեր ունի հնչերանգը: Օրինակ՝ *Արի՛ տեսնեն: կամ կանչեցի՛ գա...*

Եթե նույնիսկ նախադասության մեջ շաղկապները չեն զեղչվել, ապա նրանց դերը խոսակցական լեզվում հիմնականում գրոյաճանում է, քանի որ կենդանի հաղորդակցման ժամանակ բանավոր խոսքում նրանց դերը ստանձնում է հնչերանգը:

Խոսակցական լեզվում հաճախակի կիրառվում են **անհետևողական** կապակցություններ: Այսինքն՝ երբ նախադասության տարբեր բաղադրիչների միջև կապը խզվում է, երբ բացակայում է նախադասության բաղադրիչներից մեկը, բայց մտովի հնարավոր է վերականգնել: Օրինակ՝ *Մի բան, որ չես հասկանում, հեռու մնա*:

Առօրյա հաղորդակցման ժամանակ հաճախ խոսողը, իր բուն ասելիքը դեռ չավարտած, հավելյալ տեղեկություն է հայտնում, որը բուն խոսքից հնչերանգային դադարով չի առանձնանում: Քանի որ խոսքը նախապատրաստված չէ, երբեմն էլ խոսողի հուզական վիճակով պայմանավորված՝ խոսքում նախադասությունները միահյուսվում են իրար: Խոսողն ինքն իրեն ընդհատում է, խոսքը լրացնում տարբեր պարզաբանող բառերով, հավելադրություններով: Ս. Մելքոնյանը նշում է. «Վերջինս իր արտահայտչականությամբ բավական մասն է մեկնություն արտահայտող միջանկյալ նախադասության: Բայց այդպիսին չէ հատկապես այն պատճառով, որ ուժեղ դադարով չի տրոհվում բուն նախադասությունից, որի մեջ տեղավորված է ինքը: Այս վերջինս կարելի է կոչել միջադիր նախադասություն»⁵⁰: Թեև Ս. Մելքոնյանը սահմանազատում է այս նախադասությունները միջանկյալ նախադասություններից և գրավոր արտահայտելիս չի տրոհում, կարծում ենք՝ սրանք, այնուամենայնիվ, ներդրյալ նախադասություններ են, և գրավոր արտահայտության դեպքում պետք է տրոհվեն: Օրինակ՝ *Չանգեցի դասատուին (մի հրաշք կիմ է)՝ ասեն, որ վաղը չեն ուղարկելու դպրոց Արամիս*:

⁵⁰ Ս. Մելքոնյան, *Աշխ.*, Ե., 1984, էջ 223:

Այսպիսի կիսատ, ընդմիջարկված նախադասություններ առավել հաճախ հանդիպում են հուզական խոսքում: Երբեմն դժվար է լինում որոշել նմանատիպ նախադասությունների սահմանները: Օրինակ՝ *Վաղը, չեմ ասե՛լ, ախպերս, ես դրա ջանհին մեռնեմ, բանակից կգա...* Կամ՝ *Առավոտը, ինչ լավ արև էր, լվացքս փռեցի, է՛ն կնիկն էլ նեմց էր նայում, միանգամից չորացավ...*

Միջանկյալ բառերն ու բառակապակցությունները ևս, ինչպես միջանկյալ նախադասությունները, երանգավորում են խոսքը և խոսողի վերաբերմունքն են արտահայտում խոսքի նկատմամբ: Միջանկյալ բառերի և բառակապակցությունների շարադասությունը նախադասության մեջ պայմանավորված է այն հանգամանքով, թե դրանք վերաբերում են ամբողջ նախադասությանը, թե՞ նախադասության որևէ անդամին: Եթե վերաբերում են ամբողջ նախադասությանը, ապա դրանց շարադասությունը հիմնականում ազատ է: Իսկ եթե վերաբերում են նախադասության մի մասին կամ որևէ անդամին, ապա որքան հնարավոր է՝ մոտ են դրվում այն անդամին կամ միավորին, որին վերաբերում են: Միջանկյալ բառերն ու բառակապակցություններն արտահայտվում են տարբեր խոսքի մասերով, մասնավորապես եղանակավորող բառերով, գոյականներով, ածականներով, դերանուններով և այլն:

Պետք է մշել, որ այն միջանկյալ բառերն ու բառակապակցությունները, որոնք վերաբերում են ամբողջ նախադասությանը, ունեն ազատ շարադասություն, ասվում են նախադասության այն հատվածում, երբ նախընտրում է խոսողը՝ պայմանավորված խոսքի բովանդակությամբ, խոսողի հուզական վիճակով, տվյալ իրադրությամբ և այլն: Օրինակ՝ *Ի՛մ կարծիքով, դու սխալ արեցիր...* Կամ՝ *Դու, ի՛մ կարծիքով, սխալ արեցիր ...* Կամ՝ *Դու սխալ արեցիր, ի՛մ կարծիքով...*

Երբեմն չնախապատրաստված խոսքում, հատկապես հուզական բնույթի, նախադասության որևէ անդամը, որը խոսողը կարևոր է համարում, վերջում կրկնում է, հաճախ կրկնում է չզիտակցելով, որ տվյալ բառն արդեն ասել է: Օրինակ՝ *Ես հաստատ ոչ մեկին չեմ ասել, հաստատ: Կամ՝ Գյուղում լավ էր, հանգստացա, սաղ օրը քնում էի գյուղում...*

Նմանատիպ կրկնություններ առատորեն կիրառվում են երկխոսություններում, որտեղ կրկնությամբ հատուկ շեշտվում է խոսողի կողմից կարևորվող կամ խոսքի խնդրահարույց մասը: Օրինակ՝ *«Չէ՛, չի զանգի, էլ չի զանգի», «Ասա՛, պահանջի՛, ասա՛, թող բերի», «Մի՛ արա, խնդրում եմ, մի՛ արա»...*

Երբեմն էլ խոսողը սկսում է խոսքը, բայց այս կամ այն պատճառով ընդհատում է խոսքը և այլ կերպ ձևակերպում միտքը: Օրինակ՝ *Երեկ զանգեցի, որ... հա՛, վերջը չասեցի, ուզում էի ասելի, որ իզուր մի գնա...* Կամ՝ *Մի՛ մտածի, որ ուզեմաս... դու մտածելու բան չունես...*

Շարադասությունը բառակապակցության բաղադրիչների, նախադասության անդամների և հարակից միավորների դասավորության՝ հանրության կողմից ընդունված կարգն է: Հայերենի շարադասության ընդունված կարգը սահմանել է Մանուկ Աբեղյանը. «Բառերի շարադասության

հիմնական կանոնն այս է՝ ամեն լրացում իր լրացալից առաջ է դրվում»⁵¹: Միակ բացառությունը բացահայտիչն է, որ անփոփոխ կերպով դրվում է բացահայտալից հետո: Խոսակցական լեզվում նախադասության անդամների շարադասության ընդունված կարգը երբեմն չի պահպանվում: Նախադասության սկզբում ասվում է այն բառը, որը խոսողի կողմից կարևորվում է: Դա, սակայն, կարող է հանգեցնել իմաստային կապերի խզմանը: Օրինակ՝ *Ջուր, նենց ծարավ եմ...* Կամ՝ *Յոգնած, տանջված, երեկվանից աշխատում եմ...*

Հայերենին խորթ է սովորական նախադասություններում որոշյալ-որոշիչ և հատկացյալ-հատկացուցիչ կիրառությունը, ինչպես, օրինակ՝ *խանութ հացի, միս տավարի, աղջիկը գյուղից* և այլն: Օտար լեզվի նմանությամբ այս կազմությունները հայերեն կդառնան, եթե ասենք՝ *հացի խանութ, տավարի միս, գյուղից եկած// գյուղացի աղջիկ*:

Ոչ միայն բարեհունչ չեն, այլև մտքի առունով կարող են թյուրիմացությունների տեղիք տալ նախադասության անդամների այնպիսի շարադասությունները, երբ նախադասության գոյականական անդամն ու լրացումը անջատվում են իրարից, նրանց միջև ընկնում է մի ուրիշ գոյականական անդամ: Օրինակ՝ Կարենի սիրո մասին պատմությունը հետաքրքրեց բոլորին:

Պարզ չէ՝ խոսքը Կարենի՝ սիրո պատմության մասին է, թե՞ *սիրո մասին Կարենի պատմության*: Նախադասությունը ճիշտ է շարադասված, եթե առաջին իմաստով է, իսկ եթե երկրորդ իմաստով է, ապա *Կարենի* հատկացուցիչը պետք է տանել իր հատկացյալի մոտ՝ *Սիրո մասին Կարենի պատմությունը հետաքրքրեց բոլորին*:

Շփոթից խուսափելու և միտքը ճիշտ տեղ հասցնելու համար նույն սկզբունքով պետք է վարվել նաև բարդ ստորադասական նախադասության կազմության ժամանակ. *որ, ուր, որտեղ* հարաբերական դերանուններով սկսվող երկրորդական նախադասությունից առաջ՝ գլխավոր նախադասության վերջում, դնել այն անդամը, որի լրացումն է երկրորդական նախադասությունը: Օրինակ՝ *Բոլորին զարմացրեց տղայի ասածը, որը մեզ անծանոթ էր*:

Ենթադրվում է, որ մեզ անծանոթը ասածն է: Իսկ եթե անծանոթը տղան է, ապա միտքը ավելի հստակ կլինի այն դեպքում, երբ *որը* հարաբերականին զուգադիր գլխավոր նախադասության մեջ ասվի *այն* ցուցական դերանունը՝ *Բոլորին զարմացրեց այն տղայի ասածը, որը մեզ անծանոթ էր*:

Երբեմն լրացումը ոչ իր տեղում կիրառելու պատճառով հասկանալի չի դառնում՝ այն գոյականական անդամի որոշիչն է, թե՞ բայական անդամի ձևի պարագան: Օրինակ՝ *Քայլում էր մտամոլոր աղջիկը փողոցում*:

Հստակ չէ՝ *մտամոլորը* աղջկա հոգեվիճակն է, թե՞ քայլելու կերպը: Միտքը հստակ կլինի, եթե որոշիչները դնենք իրենց տեղերում. *Մտամոլոր աղջիկը քայլում էր փողոցում*:

⁵¹ Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 532:

Հաճախ խոսակցական լեզվում խախտվում է շաղկապի շարահասական կարգը: Օրինակ՝

- *Հազար շոր ունես, էլի առար:*

- *Ուզում եմ, որովհետև...*

Կամ՝

- *Էսօր եթե չգաս, կնեղանամ:*

Խոսակցական լեզվում որոշ շաղկապներ, դերանուններ և այլ բառեր կամ բառակապակցություններ, երբեմն խոսքի նախապատրաստված չլինելու պատճառով շարահյուստրեն չկապվելով բուն խոսքին, հանդես են գալիս թարմատարի դերում: Օրինակ՝ «*Հետո ինչ, իմ գործը չի*», «*Ո՛նց, ես էդ մասին չգիտեի*»...

Թարմատարի դերում հաճախ հանդես են գալիս *հա*, *չէ* եղանակավորող բառերը: Օրինակ՝ «*Դու էլ կգաս, չէ՞*», «*Լուսիկի աղջիկն էր, հա՞*»:

Թարմատարի դեր կատարող որոշ շաղկապներ կամ շաղկապական բառեր խիստ խոսակցական բնույթ ունեն և շատ բնորոշ են խոսակցական լեզվին՝ *մենակ թե, հենց, հենց որ, համ... համ, յա, թե չէ...*

Խոսակցական լեզվին առավել բնորոշ են **ներգործական** կառուցվածքի նախադասություններ, կրավորականները ավելի բնորոշ են գրական լեզվին: Օրինակ՝ *Քամին փշրեց սպակիները*: Կամ՝ *Ես տեսա՝ հավաքարարը մաքրեց սենյակները...*

Խոսակցական լեզվում հաճախ չեզոք սեռի բայերից կազմվում են **կրավորականներ**՝ խոսքն ավելի դիպուկ ու հասկանալի դարձնելու համար: Օրինակ՝ *Պիտի խոսվի շեֆի հետ...* Կամ՝ *Պիտի հարցվի, ճշտվի...*

Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում իրար կապակցվող բառերը դրվում են քերականական միևնույն կարգով, օրինակ՝ միևնույն դեմքով, թվով և այլն: Ենթական և ստորոգյալը սովորաբար համաձայնում են դեմքով և թվով, սակայն խոսակցական լեզվում տարածված են ենթակայի և ստորոգյալի անհամաձայնության (բակառության) դեպքեր: Օրինակ՝ *Ես տուրքակի ծանրությունից ձեռներս պոկվում ա...* Կամ՝ *Մազերդ սիրում ա տենց...*

Խոսակցական լեզվում գրականից տարբեր կիրառություն ունեն որոշ կապեր: Ինչպես ցույց են տալիս Երևանի տարբեր համայնքներում իրականացված հարցումները՝ խոսակցական լեզվում վերլուծական և համադրական ձևերից առավել տարածված են վերլուծական ձևերը, այսինքն՝ կապով ու նրա խնդրով արտահայտված ձևերը: Օրինակ՝ հարցվողների մեծ մասը նախընտրում է ասել *սեղանի վրա*, քան թե *սեղանին*, *ընկերների հետ*, քան թե *ընկերներով*, *գործի մասին*, քան թե *գործից* և այլն:

Իհարկե վերլուծական ձևեր երբեմն կիրառվում են ռուսերենի ազդեցությամբ, բառացի թարգմանության պատճառով: Խնդրառության սխալ կիրառություն ունեն խոսակցական լեզվում հատկապես հետևյալ կապերը՝ *մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, նման, հոգուտ, հանձին, ի դեմս, հանուն*: Այս կապերի հետ սովորաբար առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները պետք է դրվեն տրական հոլովով, մինչդեռ խոսակցական

լեզվում շատ տարածված է սեռական հոլովով դրանց կիրառությունը՝ *իմ մոտ, իմ համար, քո պես...*

Յետ նշանակում է միասին, հետևաբար սխալ է՝ *Արամը կռվում էր թշնամու հետ*: Ճիշտ է՝ թշնամու դեմ: Կամ՝ *Արամն ու Արսենը զրուցում էին իրար հետ*: «Իրար հետ»-ը ավելորդ է:

Սխալ է՝ *Նա նվագում է դաշնամուրի վրա, ջութակի վրա*: Ճիշտ է՝ Նա նվագում է դաշնամուր, ջութակ: Կամ՝ *Նա ապրում է Ջաքյանի վրա*: Ճիշտ է՝ Նա ապրում է Ջաքյան փողոցում:

Սոտ բառը նշանակում է *մոտիկ, կողքին* և ոչ՝ *մեջ*: Դետևաբար սխալ է ասել՝ *Նրա մոտ նկատվում է ավելորդ կասկածամտություն*: Կասկածամտությունը նկատվում է նրա մեջ, մտքում, ուղեղում: Սխալ է՝ *Յուրերի մոտ Արամը լավ տպավորություն թողեց*: Ճիշտ է՝ Յուրերը Արամից լավ տպավորություն ստացան: Սխալ է՝ *Թումանյանի մոտ այդ խնդիրներն են արծարծվել*: Ճիշտ է՝ Թումանյանի ստեղծագործության մեջ այդ խնդիրներն են արծարծվել:

Ըստ կապը դրվում է սեռական հոլովով բառի հետ, ուստի ճիշտ է՝ ըստ էության ձևը, և սխալ է՝ *ըստ էությանը*:

Շնորհիվ կապը շփոթում են *պատճառով* կապական բառի հետ՝ գործածելով մեկը մյուսի փոխարեն: Սխալ է ասել՝ *Շատ պարապելու պատճառով նա գերազանցիկ դարձավ*: Ճիշտ է՝ Շատ պարապելու շնորհիվ նա գերազանցիկ դարձավ: Սխալ է՝ *Իր ծուլության շնորհիվ նա հաջողության չհասավ*: Ճիշտ է՝ Իր ծուլության պատճառով նա հաջողության չհասավ: *Շնորհիվ*-ը դրական իմաստ ունի, *պատճառով*-ը սոսկ հետևանքի հիմնավորումն է:

Յանձին կապը գործածվում է եզակի թվով գոյականի հետ, ինչպես՝ *Յանձին նրա՝ ես ունեմ լավ ընկեր*: Յանձինս ձևը գործածվում է հոգնակիի հետ: Օրինակ՝ *Յանձինս նրանց՝ ես լավ ընկերներ ունեմ*: Յակառակ կիրառությունը սխալ է:

Սինչև և ներառյալ կապերի գործածության ժամանակ պետք է հիշել, որ *մինչև*-ը նշում է ինչ-որ կետ, սահման, իսկ *ներառյալ*-ը՝ նաև այդ կետը: Օրինակ՝ *Արձակուրդում են մինչև հուլիսի 19-ը*: Այսինքն՝ հուլիսի 19-ը աշխատանքային է:

Խոսակցական լեզվում գրականից տարբեր կիրառություն ունեն որոշ հոլովական ձևեր: Խոսակցական լեզվին բնորոշ են այնպիսի կառույցներ, երբ ենթական հանդես է գալիս տրական հոլովով կամ որպես ստորոգելիական վերադիր: Սրանք հիմնականում բարբառների ազդեցությամբ առաջացած կիրառություններ են: Օրինակ՝ *Մեր հարևանին մի տղա թոռ ունի*: *Տասու էր, որ առավոտ շուտ արթնանում էր, կար էր անում*:

Բնորոշ են տեղի իմաստով տրական հոլովի կիրառություններ ներգոյականի փոխարեն: Օրինակ՝ *Ես կստանամ, ես մյուսին եմ իջնում...* Կամ՝ *Ես տարի էլ Աշոտս մրցույթին հաղթեց կամ Յամերգին էնքան պարեցինք ...*

Շատ տարաված են տեղի իմաստով հայցական հոլովի կիրառություններ ներգոյականի փոխարեն: Օրինակ՝ *ես երևան եմ ապրում* ... Կամ՝ *ես տարի Քրոուլեթի հանգստացա* ...

ԱՎԵԼՈՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսքում հաճախ կիրառվում են բառեր, որոնք ավելորդ են, խոսքին լրացուցիչ բովանդակություն չեն հաղորդում, չեն նպաստում խոսքն արագ և ավելի արդյունավետ ընկալելուն, ծանրաբեռնում են խոսքը: Այսպիսի բառեր և արտահայտություններ հաճախ կիրառվում են ոչ պաշտոնական, ամօրյա շփման ընթացքում, կենցաղում, մտերմիկ զրույցներում, վիճելիս և բանավիճելիս: Ընդունված է նման կիրառությունները հիմնականում վերագրել աղքատ բառապաշար ունեցող մարդկանց՝ կարծելով, որ նրանք չեն կարողանում խոսքն ավելի բազմազան դարձնել, կիրառել հոմանիշներ, փոխաբերություններ և այլն, ուստի դիմում են ավելորդ բառերի:

Ավելորդաբանությունները կան ավելորդ բառերը ամառապարկում ենք դասակարգել հետևյալ կերպ.

1. Բառեր, որ չեն փոխում խոսքի բովանդակությունը, անհրաժեշտ չեն, մակաբույծ են:

Ոմանք սիրում են բանավոր խոսքում կիրառել այնպիսի բառեր, որոնք անհրաժեշտ չեն տվյալ միտքը ամբողջությամբ արտահայտելու համար: Հաճախ մարդիկ ձգտում են ավելի արագ և կիրթ խոսել, բայց քանի որ չունեն բավարար բառապաշար, խոսքում արտահայտչական ընդմիջումներ են հայտնվում, մաս այնպիսի բառեր, որոնք, անկախ խոսողի կամքից, անընդհատ կրկնվում են: Սրանք, այսպես կոչված, մակաբույծ բառեր են: Նմանատիպ բառերի կիրառումը կարելի է բացատրել ինչպես բառապաշարի սակավությամբ, այնպես էլ խոսողի հուզական վիճակով, շտապողականությամբ, անակնկալ հարցադրումներով և այլն:

Հոգեբանները կարծում են, որ մակաբույծ բառերի կիրառումը խոսքում ունի իր հոգեբանական պատճառները: Օրինակ՝ Նրանք, որոնք իրենց խոսքում հաճախակի են կիրառում *«այսպիսով»* բառը, ինքնավստահության պակաս ունեցող մարդիկ են, *«ուղղակի, պարզապես»* բառերը հաճախակի կիրառում են նրանք, որոնք վախենում են պատասխանատվությունից, *«իրականում»* բառը էգոիստ մարդիկ են շատ կիրառում, *«ի դեպ»* հաճախակի ասում են ամաչկոտները և այլն⁵²:

Պետք է նշել, որ մակաբույծ բառեր կիրառելը անհատական բնույթ ունի, յուրաքանչյուրն ինքն է «ընտրում», թե որ բառը կիրառի, սակայն կան բառեր, որոնք համընդհանուր կիրառություն ունեն: Սակաբույծ բառերն արտահայտվում են տարբեր խոսքի մասերով, հիմնականում ծայնարկություններով, եղանակավոր բառերով, որոշ դեպքերում՝ միջանկյալ բառերով և արտահայտություններով:

⁵²

Տե՛ս http://www.diplomat.am/publ/ani_xudoyan/psixo/makabowyc'_bar'er/22-1-0-720:

Օրինակ՝ *Ըն-ըմ, է-է, ա-ա, այսպիսով, լավ, բայց, սակայն, ուրեմն, ահա, ի միջի այլոց, կարծում եմ, իմ կարծիքով, հասկանում ենք, ասենք, ենթադրենք, համեմայն դեպս, մի տեսակ, օֆ եսիմ, եսիմ, պարզ ա, տենց, տենց բաներ, բանը, բա* և այլն:

Առօրյայում հաղորդակցվելիս շփման ցածր մակարդակում տեղ են գտնում ժարգոնային մակարդակներ: Օրինակ՝ *խոսքի, քցենք, լսի...*

2. Բառեր, որոնք կիրառելիս առաջանում է իմաստի կրկնություն:

Երբեմն նախադասության մեջ գործածվում են բառեր, որոնք ավելորդ են, քանի որ այդ բառերի իմաստն արդեն արտահայտում է կից գործածված մյուս բառը կամ բառերը: Օրինակ՝ *Մորից եմ կրկնում, մորից վերհիշեցի* արտահայտությունների մեջ ավելորդ է մորից բառը, քանի որ կրկնում են բայը արդեն ունի «*մորից*» իմաստը, նշանակում է *մորից եմ ասում, վերհիշեցի* բառի վեր մասնիկը արդեն ունի «*մորից*» իմաստը:

Քեզ հետ միասին արտահայտության մեջ ավելորդ է *միասին* կապը, քանի որ *հետ-ը* արդեն նշանակում է *միասին*:

Կամ՝ *մինչև առ այսօր* արտահայտությունը սխալ է, պետք է գործածել կամ *մինչև*, կամ *առ*, քանի որ գրաբարյան *առ* նախդիրն ունի «*մինչև*» իմաստը:

Նրանք միմյանց փոխադարձաբար ողջունեցին նախադասության մեջ սխալ է *միմյանց-ի* և *փոխադարձաբար-ի* միաժամանակյա կիրառությունը: *Միմյանց, իրար, մեկմեկու* դերանուններն ունեն փոխադարձության իմաստ, ուստի փոխադարձաբար բառն ավելորդ է:

Անվճար նվեր, անվճար նվիրել արտահայտությունները խոսակցական լեզվում սկսել են տարածվել հավանաբար գովազդի հետևանքով: Անշուշտ հասկանալի է, որ նվերը վճարովի չի լինում, բայց գովազդում կիրառվում է այս ավելորդաբանությունը, որպեսզի ավելի շեշտվի մատուցվող ծառայության անվճար լինելը:

3. Բառեր, որոնք արդեն հայտնի են, ինքնին հասկանալի, լրացուցիչ բովանդակություն չեն հաղորդում խոսքին:

Օրինակ՝ Երևան քաղաքը – Երևանը, երկուշաբթի օրը- երկուշաբթի, հայերեն լեզուն- հայերենը//հայոց լեզուն, դեղին գույնը-դեղինը, մարտ ամսին- մարտին և այլն: Հայտնի է, որ Երևանը քաղաք է, ուստի ավելորդ է *քաղաք* բառը, նմանապես ավելորդ են նաև *լեզու, օր, գույն, ամիս* բառերը:

Կամ՝ *խիստ ձևով, դաժան կերպով* արտահայտություններում ավելորդ են *ձևով* և *կերպով* բառերը, քանի որ *խիստ* և *դաժան* մակբայներն արդեն ինքնին արտահայտում են *ձևով* և *կերպով* բառերի իմաստները:

Չինգ հատ արտահայտության մեջ էլ ավելորդ է *հատ* բառի գործածությունը, քանի որ թվականները նշանակում են հենց քանակ:

Նմանատիպ արտահայտություններ են նաև *հանդիպել միասին, լրացուցիչ բռնուս, ուրիշ այլընտրանք, տեղացի արքրիզեն, ժողովրդական բանահյուսություն, անսպասելի անակնկալ, խառնել իրար, փոխադարձ համագործակցություն* և այլն:

4. Բառեր, որոնք ավելորդ են, քանի որ հայերենի քերականությանը հարիր չեն, կիրառվում են օտար լեզուների ազդեցությամբ, բառացի թարգմանությունների հետևանք են, հիմնականում ռուսաբանություններ: Օրինակ՝ *գտնվում է լավ վիճակում,*

հանդիսանում է ներկայացուցիչը արտահայտություններում ավելորդ են գտնվել, հանդիսանալ բայերը, քանի որ է օժանդակ բայը նշանակում է «գտնվել, լինել, գոյություն ունենալ», ուստի լիովին արտահայտում է այդ իմաստը:

Նմանապես նաև համարվում է, կայանում է օտար կառույցներում ավելորդ են համարվում և կայանում բայերը, դրանց փոխարեն պետք է կիրառել է օժանդակ բայը: Օրինակ՝ բանը կայանում է նրանում-ի փոխարեն՝ բանն այն է...

Ներկայացնենք հայերենին խորթ մեկ այլ օրինակ, երբ ենթակայից հետո միաժամանակ դրվում է դա կամ դրանք՝ որպես լրացուցիչ ենթակա: Օրինակ՝ *Չայրենիքը՝ դա..., երազանքները՝ դրանք...* արտահայտություններում ավելորդ են դա, դրանք դերանունները, քանի որ դրանց կիրառությունը խորթ է հայերենին. ռուսերենից բառացի թարգմանությունների հետևանք են՝ ռուսերենի *это* դերանվան նմանողությամբ:

Խոսքում ավելորդ բառերի կամ ավելորդաբանությունների լայն կիրառությունը պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ հանրության տարբեր ներկայացուցիչներ տարբեր հաճախականությամբ և տարբեր չափով են կիրառում դրանք, այսինքն՝ ավանդույթով փոխանցվում է դրանց կիրառությունը: Մինչդեռ կան ավելորդաբանություններ, որոնք անհատական, դիպվածային բնույթ ունեն, դրանք ժամանակակից ավելորդաբանություններ են, որ հիմնականում կապված են նոր երևույթների, ժամանակակից տեխնոլոգիաների հետ: Ըստ այդմ՝ առանձնացնում են ավելորդաբանությունների երկու խումբ⁵³.

1. Խոսակցական լեզվում արմատացած կառույցներ՝ ավանդական ավելորդաբանություններ.

2. Դիպվածային, անհատական կառույցներ՝ ժամանակակից ավելորդաբանություններ:

Այսինքն՝ այդ կառույցները արմատացել են լեզվում, իսկ դրանք կիրառելիս հաճախականությունը արդեն խոսակցական լեզվի նորմ է դառնում:

Պետք է նշել, որ կան ավելորդաբանություններ, որոնք ի սկզբանե կիրառվել են մասնագիտական նեղ ոլորտներում կամ հասարակության որևէ խմբավորման շրջանակներում, բայց աստիճանաբար սկսել են տարածվել, կիրառվել հանրության լայն շրջանակների կողմից: Տեղեկատվական տեխնոլոգիաներին, համակարգչին և հաշվողական տեխնիկային առնչվող նմանատիպ շատ օրինակներ կան, որոնք մեծ տարածում ունեն: Օրինակ՝ *IT տեխնոլոգիաներ* արտահայտության մեջ հապավումն արդեն ներառում է *տեխնոլոգիաներ* բառը, նմանապես և ավելորդ է *CD* դիսկ արտահայտության *դիսկ* բառը, *LCD էկրան* արտահայտության՝ *էկրան* բառը, *GPS համակարգ*-ի՝ *համակարգը* և այլն:

⁵³ Տե՛ս <http://files.school-collection.edu.ru/dlrstore/4aaff9e-4f7b-c6eb-fc10-dfc6b97cb8b/1008591A.htm>:

Նշենք, որ այնպիսի ծեծված արտահայտություններ, ինչպիսիք են *ես անձամբ*, *սեփական աչքով տեսնել* և այլն, կիրառվում են ոչ միայն առօրյայում հաղորդակցվելիս կամ ընկերական զրույցներում, այլև գիտական կամ քաղաքական բանավեճերի ժամանակ: Նմանատիպ ավելորդաբանությունները այնքան արմատացած են խոսակցական լեզվում, որ հաճախ խոսողը չի էլ գիտակցում, որ ավելորդ բառ է կիրառում, պարզապես այս կամ այն իրադրության մեջ ցանկանում է ընդգծել իր ասելիքը:

Կարծում ենք՝ հաճախ ավելորդաբանություններ կիրառվում են ոչ թե անզրագիտության կամ չիմացության, այլ հետևյալ պատճառներով՝

1. Խոսողը հաճախ լսում է դրանք՝ ցանկանալով հետևել լեզվական ընդհանուր միտումին, այսինքն՝ առանց գիտակցելու՝ կիրառում է դրանք որպես լեզվական քարացած ձևեր (*մայիս ամսին*, *ես անձամբ*):

2. Տվյալ արտահայտությունը ճիշտ է համարում. դրանք այնքան արմատացած են խոսքում, որ դրանց ավելորդ լինելը չի գիտակցվում (*Նախապես կանխազգալ, հիմնական էությունը, վերև բարձրանալ, նորից կրկնել*):

3. Ցանկանում է խոսակցի ուշադրությունը հրավիրել տվյալ արտահայտության վրա, ուստի այն ավելի ընդգծելու համար կիրառում է ավելորդաբանություն (*սեփական աչքով տեսնել*):

Ամփոփելով նշենք, որ չնայած ավելորդաբանություններն անհարկի, ոչ ցանկալի, խոսքը ծանրաբեռնող լեզվական երևույթներ են, բայց դրանք, այնուամենայնիվ, խոսակցական կենդանի լեզվի անբաժանելի մասն են, և մեծ է դրանց ոճական արժեքը. դրանք խոսքը դարձնում են ավելի կենդանի և բազմազան:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏ ՈՒ ՅՆՉԵՐԱՆՂ

Ինչպես նշել ենք, խոսակցական լեզուն համապատասխի, առավել հուզական, անկաշկանդ խոսք է: Խոսողի կողմից կարևորվող բառերն ու արտահայտությունները հիմնականում առաջին պլան են մղվում, առավել ուժեղ են շեշտվում, դրանց հաջորդում է հնչերանգային դադար, որն ավելի է շեշտում տվյալ բառի կամ արտահայտության կարևորությունը:

Երբեմն խոսողը ցանկանում է նախադասության մեջ առանձնացնել որևէ անդամ, ընդգծել այն, ինչի վրա ցանկանում է հրավիրել խոսակցի ուշադրությունը: Այդ նպատակով խոսողն ավելի ուժգին է արտաբերում իր համար կարևոր նշանակություն ունեցող բառը կամ արտահայտությունը՝ ի տարբերություն նախադասության մյուս անդամների: Սովորաբար ամենաուժգին արտաբերումն ունենում է այն բառը, որը տրամաբանորեն ընդգծվում է, շեշտվում: Տրամաբանական շեշտի դերը շատ մեծ է հատկապես խոսակցական լեզվում: Հարցական, հրամայական, բացականչական նախադասություններում տրամաբանական շեշտը համընկնում է հարցում, հրաման կամ բացականչություն արտահայտող բառերի բառային շեշտին՝ ավելի ուժեղացնելով դրանց արտաբերումը: Տրամաբանական շեշտի հետ սերտորեն առնչվում է քերականական մի այլ միջոց՝ հնչերանգը:

Հնչերանգով և տրամաբանական շեշտով պայմանավորված՝ տվյալ նախադասությունը կարող է հնչերանգային տարբեր տիպերի համարվել. կարևոր է, թե խոսողը տվյալ իրադրության մեջ ինչն է կարևորել, հատկապես ինչ հուզական վիճակում է եղել և այլն: Օրինակ՝ *Դու տու՞ն կգաս* (հարցում)... կամ՝ *Դու տուն կգա՞ս* (հարցում)... Կամ՝ *Դու տուն կգաս* (ուրախություն)... Կամ՝ *Դու տուն կգա՛ս* (զայրույթ)...

Հնչերանգով էլ պայմանավորված՝ նախադասությունը կարող է շատ անսովոր, գրականից խիստ տարբեր շարադասություն ունենալ: Նմանատիպ դեպքերում նախադասության շարադասությունը շատ ճկուն է:

Տրամաբանական շեշտն ու հնչերանգը մեծ դեր ունեն նաև հավելադրությամբ շրջման դեպքում: Խոսակցական լեզվում հաճախ որևէ բառ ավելի ուժեղ շեշտելու համար դիմում են հավելադրությամբ շրջունությանը: Մ. Աբեղյանն ասում է. «Մի առանձին տեսակի շրջում կազմվում է հավելադրությամբ, որով արտահայտությունն ավելի է զորանում: Գլխավոր շեշտ ունեցող բառերը՝ ենթակա, խնդիր, թե պարագա, դրվելով խոսքի սկզբում, իրենց ետևից առնում են **եմ** բայը համապատասխան դեմքով և կազմում մի ավելադրական խոսք, որի ետևից ընկնում է բուն խոսքը որ հարաբերականով կապված և սովորաբար կանոնավոր շարադասությամբ»⁵⁴: Սա այն դեպքն է, երբ տրամաբանական շեշտ կրող բառն ասվում է նախադասության սկզբում, դրանից հետո դրվում է **եմ** օժանդակ բայը՝ համապատասխան դեմքով և թվով, այնուհետև՝ **որ** կամ **ինչ** շաղկապը: Օրինակ՝ *Ես եմ, որ դիմանում եմ...* կամ՝ *եղ ասելու բան ա, որ ասում ես:*

⁵⁴ **եղ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 58-60:**

ԳԼՈՒԽ 5

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առհասարակ խոսակցական լեզուն և մասնավորապես Երևանի խոսակցական լեզուն աչքի չի ընկնում իր նորմավորվածությամբ և հակադրվում է գիտական, պաշտոնական, մասամբ էլ հրապարակախոսական ոճերին: Այն մի որոշակի համակարգ է՝ իրեն բնորոշ հատկանիշներով: Խոսակցական լեզվին բնորոշ հատկանիշներից են արտահայտչականությունն ու հուզականությունը, տեսանելիությունը, դիտողականությունն ու պատկերավորությունը, հոմանշային բազմազանությունն ու հարստությունը, պատկերավորման միջոցները (չափազանցություն, նվազաբանություն, համեմատություն, փոխաբերություն և այլն):

Սեր ուսումնասիրության նյութն ենք դարձրել Երևանի խոսակցական լեզուն իր հուզարտահայտչական յուրահատուկ համակարգով:

Ինչպես նշել ենք «Շարահյուսական առանձնահատկություններ Երևանի խոսակցական լեզվում» բաժնում, հաղորդակցման գործընթացում առաջնային դեր ունեն երկխոսությունները, որտեղ դրսևորվում են խոսողի անհատականությունն ու ինքնատիպությունը: Կարևոր նշանակություն ունի նաև խոսքային միջավայրը, ինչպես նաև խոսող-խոսակից-միջավայր փոխհարաբերությունը: Այսպիսով՝ Երևանի խոսակցական լեզուն դիտարկել ենք տարբեր իրադրություններում:

Առհասարակ խոսակցական լեզվում կիրառման լայն ընդգրկում ունի **մտերմիկ-փաղաքշական անհատական ոճը**: Այն սովորաբար գործածվում է ջերմ, մտերմիկ, բարեկամական մթնոլորտում, երբ խոսողն արտահայտում է իր սերը, համակրանքը, մտերմիկ վերաբերմունքը խոսակցի նկատմամբ: Սեր, քնքշանք, ջերմություն, գորով արտահայտող բառերն ու արտահայտությունները, ինչպես՝ *կյանք, ջան, ազիզ, մոռութ, արև*, որոնք հաճախակի գործածություն ունեն տարիքային տարբեր խմբերում ամօրյա հաղորդակցման ընթացքում:

Հաճախակի է գործածվում «ս» հոդը՝ ստացականության, պատկանելության իմաստով և հաճախ փոխարինում է «իմ» դերանվանը (*կյանքս, ջանս, մոռութս, արևս* և այլն), որոշ դեպքերում նույնիսկ ոճական որոշակի երանգավորմամբ: Երբեմն տվյալ իմաստը ընդգծելու և ավելի ցայտուն դարձնելու նպատակով երկու ձևերն էլ կիրառվում են միաժամանակ, ինչպես՝ *իմ կյանքս, իմ արևս, իմ սիրտս* և այլն: Սա, պետք է նշել, որ շատ տարածված ու բնորոշ երևույթ է խոսակցական լեզվում:

Խոսքին մտերմիկ-փաղաքշական երանգավորում են հաղորդում նաև հաճախակի հանդիպող *-ակ, -իկ, -ուկ* փաղաքշական, փոքրացուցիչ մասնիկները, ինչպես՝ *կյանքիկ, սրտիկ, ծագուկ* և այլն:

Երևանի խոսակցական լեզվում շատ տարածված է նաև **երգիծական կամ ծաղրական** ոճը: Այն արտահայտում է երգիծական, քննադատական վերաբերմունք խոսակցի կամ որևէ անձի կամ խոսքային իրադրության որևէ

առարկայի կամ իրողության, հասարակական կյանքի, մարդկային հարաբերության և այլ երևույթների նկատմամբ:

Երգիծական ոճի ձևավորմանը հաճախ նպաստում են ոչ միայն համապատասխան բառերի, արտահայտությունների ու դարձվածքների կիրառումը, այլև ոճական բազմաթիվ հնարքներ ու միջոցներ, ինչպիսիք են հեզնանքը, փոխաբերությունները, երգիծական համեմատությունները և այլն: Դրանց ձևավորմանն էլ նպաստում է համապատասխան բառերի գործածությունը. հատկապես բնորոշ են ժարգոնային բառերն ու օտարաբանությունները, բարբառային բառերն ու զռեհկաբանությունները, երբեմն էլ դիպվածային բառերն ու բառերի նոր իմաստավորումները, ինչպես՝ *«Բոլոր շարքային դագերի նպատակն էլ էր է», «Յանրակացարանի բներից հետո քաղաքի կեսը իրան չի բավարարում»* և այլն:

Երգիծական ոճի սուր դրսևորումն է ծաղրական ոճը, որը մեծ տարածում ունի հատկապես պատանիների շրջանում: Այն հիմնականում ձևավորվում է առանձին անհատների նկատմամբ եղած ոչ բարեկամական, բացասական վերաբերմունքի կամ անբարյացակամության պատճառով, ինչպես՝ *«խոսքը հատկապես էր երկոտանի ոչխարների մասին է», «Էդ անուղեղների հետ ի՞նչ գործ ունես»* և այլն:

Նշված ոճերին մոտ է և նույնատիպ տարածում ունի խոսակցական լեզվում **կատակահեզնական ոճը**, երբ խոսողի վերաբերմունքը համեմատաբար ավելի բարեկամական է, մտերմական, քան նախորդ դեպքում: Այստեղ հավասարապես գործում են և՛ կատակաբան, և՛ հեզնական ոճերը: Այս ոճին սովորաբար դիմում են այն դեպքում, երբ նպատակ է դրվում վեր հանել ու բացահայտել ինչ-որ մեկի կամ առանձին մարդկանց թերությունները, բարեկամաբար ծաղրել դրանք ծիծաղի ու կատակի միջոցով: Իսկ ծաղրի ենթարկվող անհատը, առանց վիրավորվելու, հանդուրժում է իր հասցեին արված հեզնանքն ու ծաղրը հենց այդ բարեկամական ու մտերմական բնույթի պատճառով:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵՁՎՈՒՄ

Երևանի խոսակցական լեզուն աչքի է ընկնում նաև պատկերավորման միջոցների առատ գործածությամբ: Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է և բնորոշ է գործառական բոլոր ոճերին այս կամ այն չափով և ոչ հավասարապես, քանի որ կան լեզվի կիրառության ոլորտներ, ուր պատկերավորությունն ու արտահայտչականությունն առաջնային են, և տվյալ գործառական ոճը հենվում է լեզվի այդ հատկանիշների վրա:

Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով ու հնարքներով, որոնց գործածությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հուզական ու արտահայտիչ:

Պատկերավորման ամենագործածական միջոցներից է փոխաբերությունը իր տարատեսակներով (բուն փոխաբերություն,

համըմբռնում, փոխանունություն) կամ այլաբերության հիմքի վրա ստեղծված այլ դարձույթներ (մակդիր, չափազանցություն, նվազաբանություն և այլն): Դրանք հիմնականում գործածվում են առօրյա-խոսակցական լեզվում ոչ միայն խոսքի պատկերավորությունն ու արտահայտչականությունը, այլև նրա ներգործման, գեղագիտական գործառույթը ապահովելու համար: Վերջապես, փոխաբերական իմաստը բառին ներքին անսպառ լիցք և ուժ է տալիս՝ կարևոր նախապայման դառնալով խոսքը մշտապես թարմ պահելու հարցում: Ներկայացնենք որոշ դիպուկ օրինակներ առօրյա խոսքի սղագրումներից՝ **«Վաղը սեպտեմբերի մեկն է արդեն, սև օրերդ էկան»**, **«Ի՞նչ ես թթված դեմքով նստել»**, **«Էս մարդն ինձ վառե՛լ ա, վառե՛լ»**, **«Շատ ծանր տարավ էդ ամեն ինչը»**, **«Էս էրեխեն իսկական նեռվերի դեղ ա, հա»**, **«Սենակ տեսնես, իսկական գարդիոբ ա»** և այլն:

Փոխաբերական իմաստով առավել հաճախակի գործածվող բառերից են կենդանիների, թռչունների անվանումների զգալի մասը (թութակ, շուն, գայլ, ոչխար, եգ, էշ և այլն, ինչպես՝ **«Էտ բիճեն իսկական ծեր աղվես ա»**, **«Լավ ա գարթնեցիր, ա՛յ արջ»** և այլն), նաև կենդանիների բնորոշ հատկությունների անվանումներ, երբ օգտագործվում են մարդկանց նկատմամբ արհամարհական վերաբերմունք արտահայտելու համար, ինչպես՝ **«Չերիք ա հաչաս»**, **«Առավոտից ոռնում ա»**, **«Վնգստոցդ կտրի, թե՛ չէ...»**: Երբեմն էլ գործածվում են կենդանիների մարմնի մասերի անվանումներ՝ մարդու համապատասխան մարմնի մասերն անվանելու համար, ինչպես՝ **«Ռեխդ փակիր, հա՛»**, **«Թաթերդ քեզ քաշի»** և այլն:

Ժողովրդական փոխաբերությունների մեջ պատկառելի տեղ են զբաղեցնում դարձվածները, որոնք վերաիմաստավորված բառական միավորներ են (աչքը մտնել, երես առնել, քթից բերել և այլն): Ի տարբերություն փոխաբերական նշանակությամբ հանդես եկող սովորական բառերի՝ դարձվածները միայն փոխաբերական նշանակությամբ են օժտված⁵⁵:

Մակդիրը ևս լայն կիրառություն ունի առօրյա խոսքում: Այն լեզվի պատկերավորության միջոց է, այլաբերության տեսակ, որով տրվում է առարկայի, երևույթի, երբեմն նաև գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ, տարբերակիչ հատկանիշը, այլ նրա պատկերավոր բնութագրությունը: Մակդիրների գործածությամբ հաճախ ներկայացվում են ինչպես առանձին անհատների արտաքին նկարագրությունը, այնպես էլ նրանց հոգեվիճակն ու տրամադրությունը: Մակդիրների ընտրությամբ արտահայտվում են ոչ միայն խոսողի ընկալումն ու պատկերացումները կյանքի առանձին երևույթների, իրականության նկատմամբ, այլև ներկայացվում նրա համապատասխան վերաբերմունքն ու գնահատականն այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ տվյալ իրավիճակում: Այսպես՝ **դատարկ գլուխ, սև սիրտ, թթև ձեռքով, կրակ երեխա, ծիծակ կոչիկներ, բարա յագա** և այլն:

Ինչպես մակդիրը, այնպես էլ համեմատությունն այլաբերության տարատեսակ է, լեզվի պատկերավորման միջոց, որի դեպքում որևէ առարկայի կամ երևույթի նկարագրությունն ավելի պարզ ու տպավորիչ,

⁵⁵ Դարձվածների մասին տե՛ս համապատասխան բաժնում:

պատկերավոր դարձնելու նպատակով համադրվում է այդ առարկայի որևէ կողմի արտաքին կառուցվածքով կամ ներքին իմաստային յուրահատկություններով (տվյալ պահին կամ ընդհանրապես) նման առարկայի կամ երևույթի հետ, որն ավելի ծանոթ է և բացահայտում է նկարագրվող իրողության էությունը:

Յամենատությունները միաժամանակ արտահայտում են խոսողի վերաբերմունքը համենատվող առարկայի կամ անձնավորության նկատմամբ: Այս իմաստով համենատությունը հաճախ խոսողի վերաբերմունքի, վայրկենական տպավորության արդյունք է՝ կապված տվյալ իրավիճակի, պայմանների, ինչպես նաև հեղինակի հոգեվիճակի և տրամադրության հետ: Յամենատությունները հաճախ կառուցվում են անսպասելի, երբեմն ոչ սովորական, իրար հետ արտաքնապես կապ չունեցող առարկաների համադրմամբ: *Օրինակ՝ «Կատաղած շան նման վրաս էր հարձակվել», «Թրջած հավ էր դառել», «Ի՞նչ ես էջի նման գլուխդ կախել», «Ոչխարի նման, ինչ ասես, պետք ա լսե՛ս»:*

Առօրյա խոսքում գործածվող արտահայտչական միջոցներ են նաև **չափազանցությունն** ու **նվազաբերությունը**: Առաջինը մի հնարք է, որի դեպքում խոսքի պատկերավորության նպատակով որևէ առարկայի կամ երևույթի հատկանիշներն ու չափերը ներկայացվում են միտումնավոր մեծացված ու չափազանցված եղանակով, դրանով իսկ ավելի ազդեցիկ է դառնում խոսքի տպավորությունն ունկնդրի պատկերացումների և տպավորության վրա: Այն երբեմն գործածվում է որպես կյանքի, երևույթների բացասական, ծիծաղաշարժ կողմերը սրելու և ուշադրությունը բևեռելու անփոփսարինելի միջոց: *Այսպես՝ հազար անգամ ասել եմ, հարյուր տարի ինձ պետք չի, լուն ուղտ շինել, քառսուն գիշեր հարսանիք անել, երկնքից աստղեր իջեցնել, «Որ չասեց, ուշքից գնացել էինք», «Ընենց կոշիկ եմ առել՝ տեսնես կնեռնես», «Մեռանք ծիծաղից», «Չվախենաս, սարի պես մեջքիդ կանգնած ենք», «Գիշեր-ցերեկ աշխատում ա, ոչ մի բանի չի հասնում», «Քիթ մարբելու ժամանակ չունեն», «Ասեղ գցելու տեղ չկար», «Ընենց բան ասեց՝ մազերս բիզ-բիզ կանգնեցին»* և այլն: Երկրորդը առօրյա խոսքում գործածվող նվազաբերումն է, փոքրացումը, երբ միտումնավոր թերազնահատվում է որևէ անհատի կամ երևույթի նշանակությունը, ուժը, կշիռը, չափը և այլն՝ այդ միջոցով դրանց հանդեպ երբեմն հանդես բերելով քամահրական վերաբերմունք, ինչպես՝ *«Էնքան միհար ա՝ մատով կանես՝ կընկնի», «Մազաչափ հասկացողություն չունի», «Բոյը մի թիզ ա», «Ի՞նչ ես ուզում էտ մի մատ էրեխից», «Մի կտոր հացի կարոտ եմ», «Ծոխի խելք ունի ու հավի հիշողություն»* և այլն, որոնք նույնպես լեզվական երևակայության արդյունք են:

Առօրյա խոսքում կարող են չափազանց մեծացվել և չափազանց փոքրացվել և՛ տարածությունը (ինչպես՝ *«Յոթ սարից էն կողմ ա», «Երկու քայլ ա ստեղից ընդդեմ»*), և՛ արագությունը (ինչպես՝ *«Քամու պես էր սլանում», «Կրիայի պես ա շարժվում»*), և՛ ժամանակը (*«Մի ժամ ա սպասում եմ», «Մի վայրկյան սպասիր, գալիս եմ»*), և՛ քաշը (*«Էնքան ծանր ես, իսկական բեզեմոտ ես», «Իսկական մոծակ ա, քաշ չունի վրեն»*), և՛ քանակությունը (*«Էնքան մարդ կար, ասեղ գցելու տեղ չկար»*,

«Մարդ չկար, սուսուփուս նստել էինք») և այլ հասկացություններ ու երևույթներ:

Խոսակցական լեզվի բառապաշարը աչքի է ընկնում մեծ արտահայտչականությամբ: Այստեղ սովորական բառերը հաճախ ստանում են նոր իմաստավորում, նոր նրբերանգներ և փոխաբերական նոր կիրառություններ, ստեղծվում են նոր արտահայտություններ, որոնք իրենց թարմությամբ մեծացնում են խոսքի արտահայտչականությունը՝ նրան հաղորդելով ոճական հատուկ երանգավորում: Դրանք օգտագործվում են տարբեր զգացումներ, ինչպես և խոսողի վերաբերմունքը որևէ երևույթի կամ դեպքի նկատմամբ արտահայտելու համար: Խոսակցական լեզուն ամենազգայուն ոլորտն է, որտեղ լեզվական արտահայտություն են ստանում հասարակական կյանքի զանազան երևույթներ: Այստեղ մշտապես պահանջ է զգացվում արտահայտչական նոր և թարմ միջոցների:

Բերենք այդ կարգի մի շարք օրինակներ՝ **հաշիվը թրջել, չոր ու ցամաք հիմնարկ, աթոռակռիվ, մեջք ունի, խոսելու վրա է, Կարապետյանն ում մարդն է, դզող-փչողներ, ծանոթներ մեջ գցել(ծանոթների դիմել), Կյանքում չեմ մտնի (այսինքն՝ երբեք), Դասավորեց, երկու սենյականոց տվեցին, տակով անել, հետը ման գալ** և այլն:

Միջին մակարդակի կրթություն ունեցող քաղաքացին մի քանի հարյուր բառով կարողանում է առօրյայում ազատորեն հաղորդակցվել, ինչը փաստում է, որ խոսակցական լեզվում շատ բառեր օգտագործվում են ամենալայն իմաստներով, շատ բառեր, բառարանային իմաստներից բացի, տարբեր իրադրություններում օգտագործվում են իրադրային, ոչ հաստատուն իմաստներով (հմմտ. **«հիմար խնձոր»**, **«հիմար երաժշտություն»**, **«հիմար եղանակ»** և այլն):

ՈՐՊԵՍ ԿԵՐՉԱԲԱՆ

Թեև այս մասին շատ է խոսվել ու գրվել, սակայն մեր լեզվի դեմ մեղանշումները, լեզվական շեղումներն ու աղավաղումները դեռ շարունակվում են: Ահա թե ինչու հարկ համարեցինք խոսել մեր լեզվի մաքրության, անաղարտության ու կանոնակարգման մասին: Պետք է նշել նաև, որ խոսակցական լեզվի բոլոր իրողությունները միանշանակ չի կարելի գրական լեզվից շեղումներ համարել՝ արժևորելով գրական լեզվի չափանիշներով, այլ ինչ-որ տեղ պետք է հանդուրժողականություն ցուցաբերել դրանց նկատմամբ: Այսպիսով՝

1. Լեզուն անաղարտ պահելու միակ միջոցը միայն դրա գրական ձևի գործածումն է. կարելի է առօրյայում օգտագործել խոսակցական հայերենը, բայց գրքեր կարդալու շնորհիվ ձեռք բերել ավելի հարուստ բառապաշար:

2. Առօրյա խոսակցական լեզուն պետք է լինի, որքան հնարավոր է, թեթև՝ զերծ ժարգոնային բառերից:

3. Լավ խոսելու գաղտնիքն ասելիք ունենալու և ասելիքը լեզվական ստույգ միջոցներով, տրամաբանված ընթացքով մատուցելու մեջ է:

4. Ճիշտ է, միջազգային բառերն ու տերմինները թարգմանելու կարիք չկա, բայց այն, որ մենք մեր եղած գրական բառերն էլ ենք հաճախ անտեսում ու մոռանում՝ փոխարենը օգտագործելով օտար բառեր, տխուր ու անժխտելի փաստ է: Աշխատենք՝ որքան հնարավոր է, ավելի քիչ օտար բառեր գործածել:

5. Մենք ամեն օր ու ամեն պահի ունկնդիր ու ականատես ենք լինում մեր լեզվի բազմաթիվ ու բազմատեսակ մեղանշումների ու շեղումների: Զանգվածային լրատվության միջոցները միաժամանակ լեզվի նորմավորման ու կանոնակարգման անփոխարինելի միջոցները պետք է լինեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվի նյութական կողմը համադրելով լեզվաոճական հարցերին և ասացված արդյունքներին՝ Երևանի խոսակցական լեզվի մասին կարելի է կատարել մի շարք եզրակացություններ:

1. Լեզուն ընդհանուր, հասարակական երևույթ է, մարդկային հաղորդակցության կարևորագույն միջոց, մտածողության նյութական ձև, որն ընդհանուր է տվյալ լեզվակիր հասարակության բոլոր անդամների և միասնական այդ լեզվով խոսող ամբողջ հասարակության համար: Լեզվի իրացումը խոսքն է: Այն լեզվի նյութական աստղծն է, նրա առարկայական, կոնկրետ դրսևորումն ու իրականացման միջոցը, որը հնարավորություն է ստեղծում ապահովելու հաղորդակցման գործընթացը լեզվի կիրառության տարբեր ոլորտներում:

2. Խոսակցական լեզուն այն կենդանի, մշտապես փոփոխվող, զարգացող ոլորտն է, որտեղ փոխադարձաբար ներգործում են գրական և ոչ գրական իրողությունները, ձևավորվում են լեզվի զարգացման միտումները, օրինաչափությունները:

3. Խոսակցական լեզվի նյութական բաղադրիչներից յուրաքանչյուրը՝ հնչյուն, հնչյունախումբ, բառ, բառակապակցություն, նախադասություն, ունի իր առանձնահատուկ տեղն ու դերը խոսքում և հանդես է գալիս իրեն հատուկ լեզվաոճական հատկանիշներով:

4. Տարբեր պատճառներով պայմանավորված՝ խոսակցական լեզուն անմիօրինակ է: Դա արտահայտվում է նրանով, որ խոսակցական լեզվում կարող են ազատ տեղ ունենալ խոսքի ոչ միայն անհատական յուրահատկություններ, այլև ոչ գրական բնույթի բառապաշարային, քերականական, հնչյունափոխական, ուղղախոսական և այլ երևույթներ. Երևանի խոսակցական լեզվի առանձնահատկություններից մեկը ոչ կանոնակարգված լինելն է, որն արտահայտվում է թե՛ հնչյունաբանության, թե՛ բառապաշարի, թե՛ քերականական կառուցվածքի մեջ:

5. Երևանի խոսակցական լեզվի բառապաշարի բնորոշ շերտն են կազմում կենցաղային բառերը. այն ներառում է նաև ինչպես կանոնական, այնպես էլ գրական լեզվի տվյալ փուլի համար ոչ գործուն, ոչ կենսունակ բառաշերտեր:

6. Երևանի խոսակցական լեզուն առատ է ժարգոնային բառերով ու արտահայտություններով, որոնք օգտագործվում են հասարակական այս կամ այն խավի, հատկապես երիտասարդների և պատանիների կողմից: Այդ բառաշերտը, որ այնքան էլ տևական գործածություն չունի, վճռականապես մերժելի է գրական լեզվի համար:

7. Երևանի խոսակցական լեզվի խոցելի տեղը օտար բառերի անհարկի օգտագործումն է, որը նկատելի է հասարակության տարբեր խավերի շրջանում:

8. Խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտը դարձվածաբանությունն է: Որպես լեզվի պատկերավորման միջոցներ՝ դարձվածները խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական

երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը: Դրանց միջոցով դրսևորվում է նաև յուրաքանչյուր ժողովրդի ազգային լեզվանտածողությունը:

9. Երևանի խոսակցական լեզվին հատուկ են խոսակցական ոլորտի բառաքերականական միջոցների հաճախակի գործածությունը, խոսքի սեղմությունը, ինքնաբերականությունը, իրավիճակային և երկխոսական բնույթը, ոչ մշակված ու կանոնակարգված, համապատասխան լինելը:

10. Խոսակցական լեզվի յուրահատկություններից են լեզվական միջոցների խնայողությունը, խոսքի սեղմությունն ու հակիրճությունը, որը պայմանավորված է նաև խոսքային իրավիճակով և դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում:

11. Խոսակցական լեզվում տարածված են երկար ձևերի փոխարեն կարճերին նախապատվություն տալը, հասկացությունը կապակցության փոխարեն մեկ բառով արտահայտելը, փոխանուն ձևերի հաճախակի օգտագործումը, բայի լրացումների գեղչումը և այլն:

12. Խոսակցական լեզուն հատկանշող հանգամանքներից մեկն էլ հուզականությունն է: Հուզարտահայտչական միջոցների բավական առատ գործածությամբ այն մոտենում է գեղարվեստական լեզվին՝ սահմանազատվելով մյուս ոճերից (գիտական, պաշտոնական):

13. Շարահյուսության ոլորտում խոսակցական լեզուն հատկանշվում է պարզ, համառոտ նախադասությունների առատ գործածությամբ, ոչ թե շաղկապով, այլ շարահարությամբ կապակցություններով, անհետևողականության զանազան դրսևորումներով:

14. Խոսակցական լեզվում լայն կիրառություն ունեն թերի նախադասությունները: Խոսակցական լեզվին բնորոշ են նախադասության անդամների գեղչման բոլոր տիպերը՝ և՛ ենթական, և՛ ստորոգյալը, և՛ մյուս լրացումները: Պետք է նշել, որ նախադասության անդամների գեղչումը խոսակցական լեզվի տիպական հատկանիշներից է:

15. Խոսակցական լեզվում առավել հաճախական են ներգործական կառուցվածքի նախադասությունները, կրավորականները ավելի բնորոշ են գրական լեզվին:

16. Խոսակցական լեզվում գրականից տարբեր կիրառություն ունեն որոշ կապեր: Ինչպես ցույց են տալիս Երևանի տարբեր համայնքներում իրականացված հարցումները՝ խոսակցական լեզվում վերլուծական և հանադրական ձևերից առավել տարածված են վերլուծական, այսինքն՝ կապով ու նրա խնդրով արտահայտված ձևերը:

17. Չնայած ավելորդաբանությունները անհարկի, ոչ ցանկալի, խոսքը ծանրաբեռնող երևույթներ են, բայց, այնուամենայնիվ, դրանք խոսակցական կենդանի լեզվի անբաժանելի մասն են, և մեծ է դրանց ոճական արժեքը. դրանք հաճախ խոսքը դարձնում են ավելի կենդանի և բազմազան:

18. Խոսակցական լեզվում բացառիկ կարևորություն ունի հնչերանգը, որ խոսքի հնչական տարրերի ամբողջություն է՝ պայմանավորված խոսքի բովանդակությամբ, դրա նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքով:

Ակնհայտ է նաև, որ ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, խոսակցական լեզուն իր ազդեցությունն է տարածում գրական լեզվի վրա՝ պարտադրելով արտահայտման առանձին ձևեր կամ օրինաչափություններ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՍԽԱԼ ԲԱՌԱՁԵՎԵՐ ԵՎ ԱՐՏԱՐԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Սխալ</i>	<i>Ճիշտ</i>
այանի (անադի)	անալի
անկոցներս դրեցի	անկոցս դրեցի
ամանչել	ամաչել
ամենալավագույն	ամենալավ// լավագույն
այլոք	այլք
այսինքես, առայժմս	այսինքն, առայժմ
առնվազր	առնվազն
ավելորդ, կանանցի, անծեռնոցիկ	ավելորդ, կանացի, անծեռոցիկ
արկղներ, դուստրներ	արկղեր, դուստրեր
արտասունք	արտասուք
բալանի	բանալի
բախչել	բաշխել
բարձրունք	բարձունք (առանց ր-ի)
բարյացկամ, անբարյացկամ	բարյացակամ, անբարյացակամ
գնհատել	գնահատել
գնի թանկացում	ապրանքի թանկացում//գնի բարձրացում
սյունյակ, աղյուսյակ, պայուսյակ	սյունակ, աղյուսակ, պայուսակ
Եվրոխորհուրդ, Եվրոտեսիլ	Եվրախորհուրդ, Եվրատեսիլ
էլեկտրոններգիա, էլեկտրոցանց	էլեկտրաէներգիա, էլեկտրացանց
ընդամեն	ընդամենը
ընդհակառակ	ընդհակառակը
ընծեռնել	ընծեռել
ոստ արժանավույն	ոստ արժանվույն
թույլատվություն	թույլտվություն
թռնել, փախնել, կպնել	թռչել, փախչել, կպչել
ի գարմանք	ի գարմանս
ինչու՞ մն է հարցը	ո՞րն է հարցը
ինչպե՞ս եք կարծում	ի՞նչ եք կարծում
իրա, իրանց, իրան	իր, իրենց, իրեն
իրավմամբ	իրավամբ
լողանալ ծովում	լողալ ծովում, լողանալ բաղնիքում
լվում եմ	լվանում եմ
խաբնվել	խաբվել
խմենք գուլգերի կենացր	խմենք գուլգի կենացր
խոսալ, կաթալ, ցավալ, հաչալ	խոսել, կաթել, ցավել, հաչել
խոսակցություն գևաց	խոսակցություն եղավ
խոսացնել, ծիծաղացնել, քնացնել, զգվացնել	խոսեցնել, ծիծաղեցնել, քնեցնել, զգվեցնել
խոսեցրեցի, իջեցրեցի, վերցրեցի, բարձրացրեցի	խոսեցրի, իջեցրի, վերցրի,բարձրացրի
խոսի՛, գրի՛	խոսի՛ր, գրի՛ր
խոսքը գնում է	խոսքն այն մասին է

խոսքը վերաբերվում է	խոսքը վերաբերում է
կանանչ	կանաչ
կապվել (ինչ-որ մեկի հետ), բռնվել (ինչ-որ բանից)	կապվել (ինչ-որ մեկի հետ), բռնել (ինչ-որ բանից)
կորեց	կորավ
հազավ գլխարկը, ձեռնոցները, ակնոցը	դրեց գլխարկը, ձեռնոցները, ակնոցը
հաշվանդամ	հաշմանդամ
հարսեր, մատեր, գառեր	հարսներ, մատներ, գառներ
հիշացնել, քնացնել, իջացնել, խոսացնել	հիշեցնել, քնեցնել, իջեցնել, խոսեցնել
հույր, ձուլն, մուլս, այռուծ, գուլտ, այրուն	հյուր, ձուլն, մյուս, առյուծ, գյուտ, այրուն
մանրունք	մանրուք
մարմանջ	մարմաջ
մի՞ք խոսի, մի՞ք գրի	մի՛ խոսեք, մի՛ գրեք
մոտոպորապես	մոտավորապես
Նախագա, Նախագան, Նախագայի	Նախագահ, Նախագահիր, Նախագահի
Ներդրություն	Ներողություն
շնորհակալություն եմ հայտնում Ձեզանից	շնորհակալություն եմ հայտնում Ձեզ//շնորհակալ եմ Ձեզնից
ողջունել	ողջունել
ոչ թե ... այլև ...	ոչ թե ... այլ ...
ոչ մեկ	ոչ մեկը
ոչ միայն ... այլ...	ոչ միայն ... այլև...
որոշներ	որոշներ բառ չկա
որտև	որովհետև
ուրթանասուն, ութանասունմեկ	ուրթուն, ութսունմեկ
պատճե (պատճեն կբերես)	պատճենը (պատճենը կբերես)
պետք չի, շատ չի	պետք չէ, շատ չէ
սեկտմբեր	սեպտեմբեր
վարքաբեկել	վարկաբեկել
վեր է լուծում, վեր է ածում, գործ է ածում	վերլուծում է, վերածում է, գործածում է
վիրաբուժ, հոգեբուժ, ակնաբուժ	վիրաբույժ, հոգեբույժ, ակնաբույժ
տարեկետում	տարկետում
գելաֆոն	գելոֆոն
փառատոներ, մորաթույրներ	փառատոներ, մորաթույրեր
թծնվել, Նախանձվել, պարապվել, տուժվել	թծնել, Նախանձել, պարապել, տուժել (առանց «վ»-ի)
Ֆիդային, ֆիդայիներ	Ֆիդայի, ֆիդայիներ
Մայրամ	Մարիամ

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՍԻՃԱՆԵՐ

<i>Միայլ</i>	<i>Ծիշտ</i>
գրո[ր]սվել, հագ[ր]սվել	գ[ր]տն[ր]վել, հագն[ր]վել
ծով[յ]եզր	ծով[ե]զր
ծեռն[ր]պահ	ծեռ[ր]նպահ
ծեռն[ր]տու	ծեռ[ր]նտու
չար[վ]որակ, բար[վ]որակ, ան[վ]որակ	չար[ո]րակ, բար[ո]րակ, ան[ո]րակ
քսան[յ]երեք	քսան[ե]րեք

ԿԱՊԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐ

<i>Սխալ</i>	<i>Ճիշտ</i>
աշխատասիրության պատճառով	աշխատասիրության շնորհիվ
առանց հայրենիք	առանց հայրենիքի
բացառությամբ ձեր դասարանից	բացառությամբ ձեր դասարանի
դեպի նրան	դեպի նա
ըստ ելքայամբ	ըստ ելքայան
ի սրտանց	ի սրտե//սրտանց
իմ մոտ, իմ վրա	ինձ մոտ, ինձ վրա
իևջու համար	իևջի համար//իևջու
իրեն հետ, իրեն մոտ	իր հետ, իր մոտ
ծուկության շնորհիվ	ծուկության պատճառով
կմվել թշնամու հետ	կմվել թշնամու դեմ
հանձինս նրա	հանձին նրա, բայց՝ հանձինս նրանց
մեր համար, մեր նման	մեզ համար, մեզ նման
սիրահարվել աղջկա վրա	սիրահարվել աղջկան

ՍԽԱԼ ՉԱՎԵԼԱԴՐՈՒՄՆԵՐ

<i>Սխալ</i>	<i>Ճիշտ</i>
ամենավերջին	վերջին
ամենից կարևորագույնը	կարևորագույնը/ամենից կարևորը
առավոտվա նախաճաշ	նախաճաշ
ավելի կգերադասեմ	կգերադասեմ
Արամն ու Արսենը զրուցում էին իրար հետ	Արամն ու Արսենը զրուցում էին
բազմաթիվ անգամ	բազմաթիվ անգամներ
բարետես արտաքինով	բարետես
գանգրահեր մագերով	գանգրահեր
իմ տունս, թո դիմումդ	տունս//իմ տունը, դիմումդ//թո դիմումը
խոսքի օրինակ	օրինակ
կյանքի մասին կենսագրական տեղեկություններ տալ	կյանքի մասին տեղեկություններ տալ կամ կենսագրական տեղեկություններ տալ
կրկին վերադառնալ	վերադառնալ
հայերեն լեզու, ռուսերեն լեզու	հայերեն//հայոց լեզու, ռուսերեն//ռուսաց լեզու
հանուն անկախության համար	հանուն անկախության// անկախության համար
հետ վերադառնալ	վերադառնալ
մեր միջև եղած հարաբերությունները	մեր հարաբերությունները
մինչ առայսօր	մինչ այսօր// առ այսօր
մոտավորապես մեկ ժամի չափ	մոտավորապես մեկ ժամ
նորից եմ կրկնում	կրկնում եմ//նորից եմ ասում
նորից վերագրավել հողերը	վերագրավել հողերը/նորից գրավել հողերը
նորից վերհիշեցի	նորից հիշեցի//վերհիշեցի
չորսը գիրք, յոթը ամիս, հինգը տետր	չորս գիրք, յոթ ամիս, հինգ տետր
փոքրիկ տնակ, փոքրիկ ձագուկ	տնակ, ձագուկ/փոքրիկ տուն, փոքրիկ ձագ
քեզ հետ միասին	քեզ հետ

ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԻԱԿՆԵՐ

<i>սխալ</i>	<i>ճիշտ</i>
ամբողջ բնակչությունը թափվեցին դուրս	ամբողջ բնակչությունը թափվեց դուրս
ամբողջ մարդիկ	բոլոր մարդիկ
այս կամ այն խնդիրները	այս կամ այն խնդիրը
ամեն դժվարություններ	ամեն դժվարություն
քավարարել պահանջներին	քավարարել պահանջները
բոլոր ժողովուրդը	ամբողջ ժողովուրդը
դավաճանել հայրենիքը	դավաճանել հայրենիքին
խոստովանել սխալի համար	խոստովանել սխալը
խոչընդոտել աշխատանքին	խոչընդոտել աշխատանքը
ծանոթացավ փաստաթղթերի հետ	ծանոթացավ փաստաթղթերին
ներողություն խնդրել ընկերոջը	ներողություն խնդրել ընկերոջից
տարբեր պատճառով	տարբեր պատճառներով

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Սխալ</i>	<i>Ճիշտ</i>
գտնվում է փողոցի վրա	գտնվում է փողոցում
դա պարծանքն է հանդիսանում	դա պարծանքն է
ես գտնում եմ, որ	կարծում եմ, որ (գտնում եմ իրը)
Երևանը՝ դա մայրաքաղաքն է	Երևանը մայրաքաղաքն է
ինձ մոտ չի ստացվում	ինձ չի հաջողվում
ինչումն է բանը	բանն այն է
ինչումն է կայանում հարցը	հարցն այն է
ինչպես է վերնագիրը, անունդ	ինչ է վերնագիրը, անունդ
իր մոտ է	իր տեղում է//սենյակում է
լուսինը հանդիսանում է երկրի արբանյակը	լուսինը երկրի արբանյակն է
հյուրերի մոտ տպավորություն թողեց	հյուրերի վրա տպավորություն թողեց
Նա խնդրում է, որպեսզի չջարուսակենք վեճը	Նա խնդրում է, որ չջարուսակենք վեճը
Նվագում է ջութակի, դաշնամուրի վրա	Նվագում է ջութակ, դաշնամուր
Նրա մոտ նկատվում է	Նրա մեջ նկատվում է
սա իրենից ներկայացնում է մի մեծ շինություն	սա մի մեծ շինություն է

ՅԱԿԵԼՎԱԾ 2⁵⁶

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿԵՆՅԱՂԱՅԻՆ ԻՐԵՐ

բատարե	1.մարտկոց, 2. լապտեր
բրնա	որմնաջահ
բինոկլ	հեռադիտակ
բոջկա	տակառ
բռիլոկ	կախոց, կախագարդ, մանրագարդ
գառշոկ	1.ծաղկաման, 2.սիգաման
գուպկա	սպունգ
գրաֆինկա	սափոր, ջրաման, սկիի
գրելկա	ջերմակ, ջեռակ
դիմահոդ	ծինետյուզ, ծխանցք
դուխովկա	ջեռոց, փուռ
դուշ	ցևցուղ
գաբոռ	ցանկապատ
գաժիգալկա	վառիչ, կրակայրիչ
գալ	հյուրասենյակ
գակատ	փակիչ
լամպուշկա	լամպ
խադունոկ	քայլասայլակ
ծապլի	ձագար
կաբել	մալուխ
կայունկա	գազի կաթսա, գազաջեռուցիչ
կամի	բուխարիկ, օջախ
կանդիցիոներ	օդորակիչ
կլադովկա	մթերանոց, պահեստախուց
կլինկոր	մովաթ
կուֆշին	սափոր, կուժ
կռանտ	ծորակ
կռիշկա	կափարիչ
մառլա	թանգիֆ/շղարշ
մեշոկ	պարկ
միքսեռ	հարիչ
Նաշադիր	անուշադիր, անուշադրի սպիրտ
շլանգ	փողրակ
շկաֆ	պահարան
շպիլկա	1.ծամկալ, հերակալ, 2.վացքակալ
չալիկ	թեյնիկ, թեյաման
չոտկ	խոզանակ
պաբելկա	սպիտակեցում
պաղաձյալնիկ	ծրար, սավան

⁵⁶ Սույն բառացանկով մեր նպատակը խոսակցական լեզվի ամբողջական բարգմանական բառարան կազմելը չէ, այլ տարածված, հաճախական որոշ բառերի հայերեն համարժեքները ներկայացնելը:

պաղվալ	Նկուղ
պաստա	մածուկ, քսուք
պլիտա	ջեռասալիկ
սամավառ	ինքնատեռ
սավոկ	գոգաթիակ, աղբակալ
սետկա	ցանց
սմազկա	յուղում
սոսկա	ծծակ
սչոչիկ	հաշվիչ
վիկյուլածել	անջատիչ
տաբուրետկա	պթոռակ
տրապ	ջրտար
ֆուգա	փայլաթիթեղ

ԾԱՂԻԿՆԵՐ, ԲՈՒՅՆԵՐ, ԴԵՂԱԲՈՒՅՆԵՐ

աբլեպիխա	չիչիան, փշարմավ
ադուվանչիկ	խատուտիկ
այոն	հայվե
բիրյոզա	կեչի
գլաձիդոյոս	թրաշուշան
գվեռաբոյ	սրոհունդ, արևբուրիկ
լիլիա	շուշան
լիպա	լորենի
խրիզանտեմ	քրիզանթեմ//ոսկեծաղիկ
կայա	փողաշուշան
կալենդուլա	վաղենակ
կռապիվա	եղինջ
շալֆեյ	եղեսպակ
չեռնիկա	հապալաս
պալմա	արմավենի
պիոն	քաջվարդ
պուստիռնիկ	առյուծագի
ռամաշկա	երիցուկ
վալերիանա	կատվախոտ

ՀԱԳՈՒՄՏ, ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ

բասանոշկա	բոկոտիկ
բիգուձի	վարսափաթաթուկ, մագազանգրիչ
բոռոշկա	մագակալ, ծամկալ, գարդ
դերմանտիկ	մաշկալաթ
դերյա	զգեստ, շրջագգեստ
դոկսի	օժանելիք
գամշ	թավշակաշի
կայգոտկա	զուգագուլպա
կուպալնիկ	լողագգեստ
կուռտկա	բաճկոն
կրեմ	քսուք

մանիկյուռ	մատուհարդարում
Նասկի	գուպա
Նեվիդիմկա	ծամկալ
շարֆ	վզակապ
շորտ, շորտիկ	կիսատաբատ, կարճատաբատ
շուք	մուշտակ
պամադա	շրթներկ
պարֆումերիա	օծանելիք
պետիկյուռ	ոտնահարդարում
պետյա (վերարկուհի)	մերակ, լամբակ
պիժամո/պիժամա	գիշերազգեստ
պինգետ	ունելի
պլաշ	թիկնոց, անջրանցիկ վերարկու
պուդրի/ պուդրա	դիմափոշի
պռառելիս	բացվածք
պռիզոլկա	հերակալ, ծամկալ
պոյաշկա//զապիսկա	ճարմանդ
սառոչկա	վերնաշապիկ
սպառտիվկի	մարզահագուստ
տապչկա//դամաշնիկ//չստիկ	հողաթափ
ցեպ	շղթա
ֆեն	վարսահարդարիչ

ՄԹԵՐ

անանաս	արքայախնձոր
ավսյանկա	վարսակաձավար
արախիս	գետնանուշ
բուբլիկ	օղաբլիթ
գամնիդ	խավարտ, ճաշարագ
գարոխ	դյուր
դելիկատես	Նրբախորտիկ, համադամ
դեսերտ	աղանդեր
դոռժ	խմորիչ
եմիշ	սեխ
գակուսկի	խորտիկ
ժարիտել, ժարիտ անել	տապակել
ժարկո	տապակա
ժելատին	դոնդոդ
իկրա	ծկնկիթ, խավիար
լիմոն	կիտրոն
կաբաչկա	դոմիկ
կայբաս	երշիկ
կանսերվա	պահածո
կաշա	շիլա
կառայրոկ	արքայանարինջ
կյուբնիկա	ելակ
կուկուռուզ	եգիպտացորեն
կոաբ	խեցգետին

կռախմալ	օսլա
մայինա	մորի, ագնվամորի
մաննի	սպիտակաձավար
մառուլ	հազար
շյավել, շավել	թրթնջուկ
չալաղաջ	ողնամիս
պեռաշկի	կարկանդակ
պերլովկա	գարեձավար
պիշկի	օղաբլիթ
պոնչիկ	փքաբլիթ, բլիթ
պռապոլիս	ակնամոմ
սալաթ	աղցան
սասիսկի	Նրբերշիկ
սմառողինա	հաղարջ
սուխարի	չորահաց
սուշկի	չորաբլիթ
սուպ	սպուր
վիչինա	խոզապուխտ
տվառոզ	կաթնաշոռ
ցուկատ	շաքարաչիր
թյարաուզ, թարավուզ	Նեխուր

ՀԱՍԵՍՈՒՆՔՆԵՐ

գառչիցա	մանանեխ
դուշիցա	խնկածաղիկ
Էվկալիպտ	Նվենի
իմբիր	կոճապղպեղ
լավանդա	Նարդոս
լավրովի լիստ	դափնետերև
խրեն	կծվիչ
կարդամոն	հիլ
մուսկատնի արեխ	մշկրնկուկ
մյատա	անանուխ
պետրուշկա	մաղադանոս

ՀԱՍԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

ադապտ	հարմարեցնել, հարմարեցում (հարմարիչ)
արխիվ	պահոց
ափդեյթ	թարմացնել
դենթթոփ	սեղան
դիսկ	սկավառակ
դիսփլեյ	ցուցադրիչ
ինստրթ	գետեղել
ինտերնետ	համացանց
լոգ աութ	դուրս գալ
լոգին	մտնել, մուտք

կոմպյուտեր	համակարգիչ
պրինտ	տպել
պրինտեր	տպիչ
պրովայդեր	տրամադրող, մատուցող
ռեսուրս	պաշար
սայթ	կայք
սելեքթ	1. ընտրել, 2. նշել
սերվեր	սպասարկիչ
սիդի	խտանակավառակ
սքան	ծրել, ծրում
սքաներ	ծրիչ, պատկերամուտ
վեբ փեյջ	կայքէջ
փաայթ	տեղադրել, տեղադրում, տեղադրիչ
փասվորդ	գաղտնաբառ
քաթ	կտրել
քասթրմայզ	ընտելացնել
քոփի	պատճեն
օՆ-լայն	առցանց
օՖ-լայն	անցանց

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ

քրկնոտ	Նոթատետր
կասետ	ձայներիզ
կլեյ	սոսիևձ
կնոպկա	կոճգամ
պապկա	թղթապանակ
պլաստիլին	ծեփամաճիկ
պտիչկա	Նշագիր
սկրեպ	ամրակ
ստեպլեր	կարիչ

ՀԱՃԱՆԱԿԻ ԳՈՐԾԱԾԿՈՂ ԱՅՆ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

աբոյ	պաստառ
անկետա	հարցաթերթիկ
աչոկ	միավոր
ապարատուրա	սարքավորում
արգումենտ	փաստարկ, հիմնավորում
արենդա	վարձակալում
բենետկա	տաղավար
բունտ	խռովություն
բռակ	խոտան
գառանտիա	երաշխիք
դայան	կամար
դակումենտ	փաստաթուղթ
դավեռնրստ	լիազորագիր
դիապագոն	ձայնածավալ

զապաս	պահուստ
զասարենի	խցանում
զարյատկա	1.մարմնամարզություն, 2.լիցքավորում
էլեմենտարնի	պարզ, հասարակ, տարրական
էլիտար	ընտիր, ընտրախավային, վերնախավային
թրաշի ստանկ	սափրակ
ժեշտ	թիթեղ
լիլիպուտ	զանճ
լիֆտ	վերելակ
լոմբարդ	գրավատուն
կարաստր	իրարժեք
կադր	հատված, դրվագ
կակոզազ	հենց
կամենտարիա	մեկնաբանություն
կանալիզացիա	կոյուղի
կանտոլ	հսկիչ, հսկում
կաստիլ	հենակ, անթացուպ
կլիենտ	հաճախորդ
կլիպ	տեսահոլովակ
կոլեկցիա	հավաքածու
կոմֆորտ	հարմարավետություն
կոնկուրս	մրցույթ
կուրս (դրամի)	ինքնարժեք
կոնֆերենց-դահլիճ	հանդիսասրահ
մակետ	մանրակերտ
մանեկենշիցա	ցուցողուհի
մանյա	մոլուցք// հակում
մասսա	զանգված
մատերիալ	նյութ
մարկետ	խանութ
նագրուզկա	ծանրաբեռնվածություն
նապոռ	ճկում, սեղմում
նասոս	պոմպ
նավես	ծածկ
շաբլոն	1. միօրինակ, 2. չափանմուշ
շանս	հնարավորություն
շարիկ	զևդակ, գունդ
շիշկա	1.ուռուցք, 2.կոն
շլանգ	փողրակ
շիֆովկա	հղկում
շոշ	մայրուղի
ունիկալ	եզակի
պադավատ	սպասարկում
պաղեզդ	մուտք
պաղզեմկա	զետնանցում
պադատանցիա	ենթակայան
պալիտովկա	փայլեցում
պախմեյա	խումհար
պանիխիդա	հոգեհանգիստ

պանիկա	խուճապ
պասիվկա	ծանրոց
պեղայ	ոտնակ
պշավայ	ծախողում
պրայեկտ	նախագիծ
պրեմիա	պարգևատրում
պրիմիտիվ	պարզունակ
պրինցիպ	սկզբունք
պրիոմ	հնարք
պրոբլեմ	խնդիր
պրոբկա	խցանում, խցան
ռազմեր	չափս
ռեալ	իրական
ռեզուլյար	կանոնավոր, պարբերական
ռեմոտ	նորոգում
ռեյս	ուղերթ
ռեյտինգ	վարկանիշ
սյուխ	լսողություն
սխեմա	գծապատկեր
սյուրպրիզ	անակնկալ
ստաբիլ	կայուն
ստադիոն	մարզադաշտ
ստատիստիկա	վիճակագրություն
ստոյբա	սյուն
ստոռչկա	գծակար
սֆերա	ոլորտ, բնագավառ
վարիանտ	տարբերակ
վեշ	իր
տամոժնի	մաքսատուն
տոտալ	համընդհանուր
տռուբա	խողովակ
տրամպլին	ցատկահարթակ, ոստնակ
տրենաժոր	վարժասարք
ֆայշ	կեղծ
ֆիզուրա	կազմվածք
ֆորում	համաժողով

ԲԾՇԿՈՒԹՅՈՒՆ

դեպրեսիա	ընկճախտ
դիագնոստիկ	ախտորոշիչ
դիագնոստիկա	ախտորոշաբանություն
լանցետ	նշտար, վիրադանակ
աբխող	բուժայց, համայց
արթրիտ	հողաբորբ
բինտ	վիրակապ
գանգրենա	փտախտ
դիագնոզ	ախտորոշում
դիետա	սննդակարգ
դոզա	դեղաբանակ, չափ, քանակ

կայսույլա	դեղապատիճ
թերապևտ	Ներախտաբան
թերապևտիկ	Ներախտաբանական
լարինգիտ	կոկորդաբորբ
մասսաժ	մերսում
Նևրոզ	Նյարդախտ
Նեֆրիտ	Երիկամաբորբ
պաթոլոգիա	ախտաբանություն
պրեպարատ	պատրաստուկ
պրոֆիլակտիկ	կանխարգելիչ
Նևրոպաթոլոգ	Նյարդախտաբան
զոբ	խալիպ
շոկ	Նյարդացնցում
պիպետկա	կաթոցիկ
ստացիոնար	հիվանդանոցային, կացիկ
տաբլետկա	հաբ/դեղահաբ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՇԻՆԱՆՅՈՒԹ

բոլո	հեղյուս
գայկա	մանեկ
գառդոն	ստվարաթուղթ
գլազոկ	դիտանցք
դռել	շաղափ
Էլեմենտ	տարր, մարտկոց
կաբել	մալուխ
կառուպկա	տուփ
կուսաչկա	կտրիչ
կռուչոկ	կեռ
մոզահիկա	խճանկար
շուռուպ	պտուտակ
շտեպցել	խրոցակ
պալալնիկ	զոդիչ
պետլյա	հանգույց, օղակ
պլանկա	ծող
պլասկակուպցի	հարթաքցան, հարթաշուրթ
պլինտուս	շրիշակ
պռես	մամիչ
պրուժին	գսպանակ
ռամկա	շրջանակ
ռեզքա	պարուրակ
ռոզետկա	վարդակ
սուշիկկա	չորանոց
սվարկա	զոդում, եռակցում
ստանոկ	հաստոց
վինտ	պտուտակ
վիսյաշի պատալոկ	կախովի առաստաղ
քիոպիչ, քյարպիչ//քյարվինչ	աղյուս
պենզա	չեչաքար
Ֆանառ	լապտեր

**ՄԱՐԴԱՁՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ,
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

այլախնիստ	լեռնարշավորոջ
ակուռատնի	կոկիկ, վայելուչ
ամբիցիոզ	պատվախնություն, ինքնամեծար
անարխիա	անիշխանություն
անտաացիա	սեղմագիր
ատեստատ	վկայական
արիստոկրատ	ազնվական
բիզնեսմեն	գործարար
բիոլոգ	կենսաբան
գիդ	ուղեկցող, ուղեկցորդ
գուրման	համադամասեր
դիսերտաստ	ատենախոս
դիսերտացիա	ատենախոսություն
գաչոտ	ստուգաբլբ
գաչոտնիկ	ստուգգրքույկ
Էմոցիա	հույզ, զգացմունք
Էմոցիոնալ	հուզական, զգացմունքային
լեգիտիմ	օրինական
կոռեկտ	բարեկիրթ, զուսպ
պիժն	պճնամոլ
պրեզենտացիա	շնորհանդես
պրեստիժ	հեղինակություն, վարկ
ֆիզիոլոգ	բնախոս
ֆիզիոլոգիա	բնախոսություն

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՈՐՏ

աբոնենտ	բաժանորդ
ակցիոներ	բաժնետեր
աուդիտ	ստուգում
բայանս	հաշվեկշիռ
բանկրոտ	սնանկ
բոնուս	պարգևավճար
բռուկեր	միջևորդ
գառաանտ	երաշխավոր
գրանտ	դրամաշնորհ
դեֆիցիտ	պակասուրդ
դիլլեր	գործարքառու
դիստրիբյուտոր	մատակարար
դիվերսիֆիկացիա	բազմազանեցում
դիվիդենտ	շահաբաժին
Էքսպերտ	փորձագետ
ինվեստիցիա	ներդրում
ինֆլյացիա	գնաճ
կոնսուլտանտ	խորհրդատու
կրեդիտ	վարկ
հոնորար	պատվավճար

մարկետինգ	շուկայագիտություն
մենեջմենթ	կառավարում
մոնոպոլիա	մենաշնորհ
սերտիֆիկատ	հավաստագիր
սուբսիդիզացիա	նպաստավորում
վայրուտա	արժույթ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ

արգոն	վազանց
արլիցովկա	երեսպատում
ակումբյատոր	ակումբյատոր, կուտակիչ
ամորտիզատոր	մեղմիչ
անտիֆրիզ	հակասառիչ
ավարիա	վթար
բագաժ	ուղեբեռ
բագաժնիկ	բեռնախցիկ
բալկա	հեծան
բանդաժ	կայանդ
բորոյուր	եզրակալ
բուքսիր	քարշակ
գառաժ	ավտոտնակ
գլուշիտել	խլացուցիչ
դիսպետչեր	կարգավար
դատչիկ	տվիչ
դիսկավոյ	սկավառակային
գապչաստ	պահեստամաս
գապոբվիկ	լիցքավորող
լարոգ	դարուսիտ
խաղավոյ	րնթազքային
խամուտ	անուր, պատյան
կայպաչոկ	թասակ (-իկ)
կամեռ	փչուկ (գնդակի)
կապոտ	հագոց
կլապան	փական
լամա	փոս
շառավոյ	գնդային
սիգնալ	ագոանշան
պավառոտ	շրջադարձ
պլաշտոկա	հարթակ
ռեզուլիրովկա	կարգավորում, կանոնավորում
ռեմեն	ամրագոտի
տոկ	հոսանք
տոռմուգ	արգելակ
տոռո	մետաղապարան
ֆառ	ցույցաբան լապտեր
ֆառսունկա	բոցամուղ

ՅԱԿԵԼՎԱԾ 3

ԲԱՌԵՐԻ ԾԻՇՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

պահպանել (մի բան պահել, որ չկորչի, չմոռացվի)	պաշտպանել (օգնական լինել, սատարել մեկին՝ դեմ կանգնելով մյուսին)
հասկացություն (զաղափար, անուն)	հասկացողություն (հասկանալու կարողություն, իմացություն)
ժողովրդականություն (ժողովրդին, լայն զանգվածներին հայտնի լինել, ճանաչված և սիրված լինել)	ժողովրդայնություն (ժողովրդի ազգային առանձնահատկությունների, ոգու ամբողջությունը, ինչպես նաև դրանք ունենալը)
ամբաստանություն (մեղադրանք, հիմնավորված մեղադրանք)	զրպարտություն (մեկին անհիմն, դիտավորյալ, շահադիտորեն, չարամտորեն մեղադրելը)
զուրկ (մի որևէ դրական, լավ բանի բացակայություն)	զերծ (մի որևէ բացասական, վատ բանի բացակայություն)
հովար (գլխարկի երկար առաջամասը, որը դեմքը պաշտպանում է արևից)	հովհար (հարմարանք, որով շոգ ժամանակ կանայք, դեմքին մոտ թափահարելով, հով են անում)
ավանդություն (անցյալից մեզ հասած բանավոր գրույցը, լեգենդը)	ավանդույթ (անցյալից եկած սովորույթը, տրադիցիան)
աստանդական (այստեղ ու այնտեղ ընկած, թափառական)	ասպնջական (հյուրասեր, հյուրընկալ, օտարին տեղ տվող)
սպրդել (աչքից վրիպել, գաղտնի մտնել)	սփրթնել (վախից, ցրտից, հիվանդությունից գունատվել)
երախտիք (լավ գործ, լավություն, կարևոր բան անելը)	երախտագիտություն (երախտիք թողնողի նկատմամբ ունեցած զգացումն է, պարտքի գիտակցումը)
զեկույց (որևէ արարքի, կատարված գործի մասին մեկ ուրիշին, վերադասին բանավոր կամ գրավոր համառոտ տեղեկություն տալը, իրազեկ դարձնելը)	զեկուցում (որևէ թեմայով ուրիշների առջև հանդես գալը, բանախոսությունը)
հնաբանություն (հին և բան արմատներից, և ություն ածանցից կազմված բառ է, նշանակում է հնությունների մասին գիտություն)	հնէաբանություն (կազմված է <i>հին</i> , <i>է</i> , <i>բան</i> արմատներից, <i>է</i> արմատի հավելումը հուշում է, որ գիտություն է հնում գոյություն ունեցած և անհետացած էակների՝ կենդանիների, բույսերի մասին)
հազվադեպ (հազիվ, շատ ուշ-ուշ պատահող)	հազվագյուտ (հազիվ, դժվար գտնվող, իր նմանը քիչ ունեցող)

մականուն (շրջապատի կողմից մեկին տրված ավելորդ անուն՝ նրա էությունը, զբաղմունքը բնորոշող դիպուկ բառով)	ծածկանուն (գրական անուն, որ ընտրում են իրենք՝ գորղները, զանազան գործիչները)
հանկարծակի գալ (հանկարծ, անսպասելի հայտնվել)	հանկարծակիի գալ (չսպասված մի դեպքի առիթով զարմանքի, շփոթվածության զգացում ունենալ)
մրցություն, մրցակցություն, մրցում (երկու և ավելի մարդկանց կամ կազմակերպությունների ձգտումն է առավելության հասնելու մյուսների նկատմամբ՝ տնտեսության, քաղաքականության, գիտության մեջ և այլն)	մրցույթ (անց է կացվում որևէ պաշտոնում ավելի հարմար անհատ ընտրելու համար)
մեղանչել (մեղք գործել)	մեղա գալ (մեղքը խոստովանել)
վերաբերել (երբ խոսքը մեկի կամ մի բանի մասին է կամ ուղղված է դրան)	վերաբերվել (մեկը մյուսի նկատմամբ ունեցած փոխհարաբերության, վերաբերմունքի իմաստ է արտահայտում)
հրատարակել (գիրք, մամուլ լույս ընծայել, տպագրել)	հրապարակել (որևէ նյութ մամուլում լույս ընծայելն է, հրապարակ հանելը)
նկարագրություն (որևէ անձի, իրի, դեպքի մասին ինչ-ինչ գծերով պատմելը, գրելը)	նկարագիր (մարդու էության, խառնվածքի, բարոյահոգեբանական հատկանիշների ամբողջության բնութագրումն է)
պաշտոնական (ծառայողական, աշխատանքային գործունեության ընթացքում իրականացվող գործողություններն են)	պաշտոնեական (պաշտոնի հետ առնչվող իրողության բնութագրությունն է)
ծգտում (մի բանի հասնելու ցանկությունն է, ջանքն է՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստներով)	նկրտում (ծգտումի իմաստն ունի բացառապես բացասական երանգով)
պատրաստականություն (մարդու իմացությունների, կարողությունների չափն է, պատրաստվածությունը, որով որոշվում է, թե մի գործ նա պատրաստ է կատարելու)	պատրաստակամություն (պատրաստական, ընդառաջելու պատրաստ լինելն է, օգնելու ցանկությունը)
վերնագիր (մի առանձին ստեղծագործության անունը)	խորագիր (մի քանի, մի ամբողջ շարք ստեղծագործությունների անունը)
զույգ (երկու հոգի, երկու հատ)	զույգեր (մեկից ավելի զույգ)
ակնոց (երկու ապակի ունի, բայց այն մեկն է)	ակնոցներ (մեկից ավելի ակնոց)
ինչի՞ համար (ի՞նչ հարցական դերանվան հոլովված ձևն է, որ գործածվել է համար կապի հետ)	ինչու՞ (գոյականաբար չի գործածվում, հետևաբար չի հոլովվում և կապի հետ չի կարող գործածվել)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Աբրահամյան Ա., Մի քանի դիտողություններ ժամանակակից հայերենի բառային նորաբանությունների վերաբերյալ, Լրաբեր, 1970, հ. 12, էջ 36-42:
3. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալս. հրատ., 1984:
4. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
5. Աղայան Էդ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967:
6. Աղայան Էդ., «Լեզվի գոյության տարբերակային ձևերը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, հ.2:
7. Աճառյան Հր., Հայերեն արձատական բառարան, Երևան, հտ. 1-4, 1971-1979:
8. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005:
9. Առաքելյան Վ., ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955:
10. Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Երևան, հ.2, 1964:
11. Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1982:
12. Արամյան Ա., ժամանակակից հայերենի ձայնավորները, Երևան, 1962:
13. Բաղիկյան Խ., ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:
14. Բաղիկյան Խ., ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Երևան, 1976:
15. Բաղիկյան Խ., ճիշտ խոսենք հայերեն, Երևան, 2012:
16. Բաղդասարյան Ս. - Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները հոկտեմբերյանի շրջանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:
17. Բարսեղյան Ա., Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման ոչ կանոնական դրսևորումներ ՁԼՄ-ների լեզվում, «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 2, 2014, էջ 200-205:
18. Բեդիրյան Պ., ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս», Երևան, 1978:
19. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999:
20. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երևան, 2007:
21. Գալստյան Հ., ճիշտը և սխալը, Երևան, 2007:
22. Գրական թերթ, 3 սեպտեմբերի, 2010:
23. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007:
24. ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Երևան, 1981:
25. Իշխանյան Ռ., Բանավոր խոսքն ու ինքնահսկումը, «Գարուն», 1967, հ.7, էջ 74-79:
26. Իշխանյան Ռ., Մայրենին, Երևան, «Լույս», 1986:
27. Խղիաթյան Ֆ., ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Երևան, 2009:
28. Հախվերդյան Լ., Ջրույցներ լեզվի մասին, Երևան, 1986:
29. Համբարձումյան Վ., Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 1, Երևան, 1981:
30. Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատալեզվաբանական հետազոտություններ, Երևան, 1979:
31. Լազարյան Ս., ժամանակակից հայոց լեզուն և ռուսերենի դերը նրա զարգացման ու հարստացման գործում, «Վան Արյան», Երևան, 1956:
32. Լամոյան Լ., Օտար բառերի գործածությունը խոսքի իրադրային արտահայտություններում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2012:
33. Լարազուլյան Թ., ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974:
34. Դուկասյան Ս., Առօրյա բառարան, Երևան, 2013:
35. Մելքոնյան Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
36. Միրզոյան Վ., Հայերենը՝ անաղարտ, Երևան, 2013:
37. Մկրտչյան Ռ., ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1982:

38. **Մուրվալյան Ա.**, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:
39. **Պապոյան Արտ.**, Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970:
40. **Պապոյան Ա.**, Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003:
41. **Պետիրեան Պ.**, Եկե՛ք ճիշդ խօսի՛նք ու գրե՛նք (Օժանդակ ձեռնարկ), Պոստոն, Մես, 1993:
42. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
43. **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճաբանության հիմունքներ, Երևան, 1990:
44. **Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Երևան, 1980:
45. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Երևան, 1987:
46. **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, Երևան, 1972:
47. **Սարգսյան Ա.**, Հանրալեզվաբանության դասընթաց, Երևան, 2002:
48. **Սարգսյան Ա., Համբարձումյան Ա.**, Հայոց լեզուն և խոսքի մշակույթ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012:
49. **Սարգսյան Ն.**, Առօրյա խոսքի կառուցման առանձնահատկություններ, Լեզվի և ոճի հարցեր, 10, ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 231-287:
50. **Սարգսյան Ն.**, Խոսքի մասերի գործածության առանձնահատկությունները խոսակցական լեզվում, «Կրթությունը և գիտությունը համաշխարհայնացման դարաշրջանում», ԼՂՀ Մեդրոպ Մաշտոց համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Լինմուշ», 2012, էջ 291-294:
51. **Սարգսյան Ն.**, Հայերենի գործառության առանձնահատկությունները հետխորհրդային փուլում, «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի», 2 (23), «Լինգվա», 2012, էջ 66-70:
52. **Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:
53. **Алапов В.**, Языковая ситуация в регионах современной России, Отечественные записки. - № 2(23), Москва, 2005.
54. **Гамперц Д.ж.**, Тулы языковых обществ, Новое в лингвистике. Вып. VII. Социолингвистика.- Москва, 1975. - С. 182-198.
55. **Ларин Б.**, К лингвистической характеристике города (несколько предпосылок), История русского языка и общее языкознание. – Москва, 1977. - С. 189-199.
56. **Серебренников Б.**, Территориальная и социальная дифференциация языка, Общее языкознание. Формы существования, функции, история языка. - Москва, 1970. - С. 451-501.
57. **Степанов Г.**, Типология языковых состояний и ситуаций в странах романской речи. Москва, 1976.
58. **Швейцер А.**, К проблеме социальной дифференциации языка, Вопросы языкознания. - Москва, 1982, № 5. - С. 39-48.
58. <http://files.school-collection.edu.ru/dlrstore/4aaff19e-4f7b-c6eb-fc10-dfcf6b97cb8b/1008591A.htm>:
59. <http://www.armstat.am/file/doc/99477313.pdf>, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013:
60. http://www.diplomat.am/publ/ani_xudoyan/psixo/makabowyc_bar'er/22-1-0-720:
61. <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1464>:
62. http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_01.pdf:
63. <http://www.armstat.am/am/?nid=45>:

ԵՐԵՎԱՆ
2014